

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3 (57)

2012 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան
Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

Ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - Ի.գ.թ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Ֆեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ*

չլինելով հեղինակների

տեսակետներին:

10 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.05.2012

Հանձնված է տպագրության

6.06.2012

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 3 (57)
2012 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
д.ю.н., зам. главного редактора
Давид Мелконян -
к.ю.н., ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Гагик Амбарцумян
Артур Вагаршян - к.ю.н.
Сергей Аракелян - к.ю.н.
Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92
e-mail: a_petrosyan@ysu.am

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.05.2012
Подписано к печати 6.06.2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐԸ 4

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ

Լևոն Օհանյան
 ՔՆՆԶԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱ (ընդհանուր դրույթներ) 5

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անահիտ Մանասյան
 ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԲՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 13

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արթուր Դանիելյան
 ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹԻՐԱՆ..... 21

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Խալաթյան
 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՍ ՈՒՂՂԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ..... 30

Անդրանիկ Մնացականյան
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔ..... 36

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Մարկոսյան
 ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 42

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լիլիթ Քամայան
 ՀԱՅՏԻ ԵՎ ՊԱՏՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱԿՏՈՍՈՔԻԼԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 59

Մանե Կարապետյան
 ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 72

Անահիտ Անտոնյան
 ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԲՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ 79

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն Հովհաննիսյան
 ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԲՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 88

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արտակ Հարությունյան
 ՏՐԱՆՍԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ..... 98

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐԸ

Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության վարչությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը, «Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդը ջերմորեն շնորհավորում են ՀՀ իրավաբանների միության անդամ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, «Պետություն և իրավունք» հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ վաստակավոր իրավաբան, հանրապետությունում կրիմինալիստիկայի գիտության և կրիմինալիստիկական փորձաքննությունների տեսության ու պրակտիկայի հիմնադիրներից մեկին՝

Լևոն Օհանյանին՝

ծննդյան **75-ամյակի և Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից Մխիթար Գոշ մեդալով պարգևատրվելու** կապակցությամբ, վաստակաշատ գիտնականին և ճանաչված մանկավարժին ցանկանում քաջառողջություն, ընտանեկան երջանկություն, հետագա հաջողություններ ու երկար տարիների արգասաբեր գործունեություն՝ ի փառս հայ իրավաբանական մտքի զարգացման և աճող սերնդի դաստիարակության:

**ՀՀ իրավաբանների միության վարչություն
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
«Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդ**

ՔՆՆՉԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱ

(Ընդհանուր դրույթներ)

Լևոն ՕՂԱՆՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Քննչական տակտիկան, որը, ըստ էության, քննիչի աշխատանքի գիտական կազմակերպումն է, բավարար չափով ուսումնասիրված չէ: Մեր կարծիքով, ճշմարիտ են այն հեղինակները, ովքեր գտնում են, որ գիտելիքների ամբողջությունը, որը վերաբերում է քննիչի աշխատանքի կազմակերպմանը, պետք է համարել որպես ինքնուրույն գիտության: Այն պետք է հիմնվի գիտության տարբեր բնագավառների նվաճումների վրա, պետք է բացահայտի քննիչի աշխատանքի կազմակերպման մեթոդների խորը և բազմակողմանի նվաճումները: Աշխատանքի գիտական կազմակերպումը պետք է կազմի քննիչի աշխատանքի հիմնական մասը:

Հանցագործությունների դեմ պայքարի հաջողության հիմնական պայմանը քննչական մարմինների կողմից դրանք ժամանակին և լրիվ բացահայտումն է: Տակտիկական առումով հանցագործությունների բացահայտումը նախաքննության և հետաքննության մարմինների կողմից իրենց իրավասության սահմաններում իրականացվող քննչական գործողություններն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումներն են, հանցագործության հատկանիշների հայտնաբերման, ինչպես նաև դրանց բոլոր հանգամանքների ու դրանցում մեղավոր անձանց բացահայտելու ուղղությամբ կատարվող գործողությունները:

Դատավարական առումով հանցագործությունների քննությունը նշանակում է օ-

րենքով նախատեսված կարգով դրանց՝ կատարման հանգամանքների ապացուցումը, մեղադրյալի մեղավորության կանանմեղության, ինչպես նաև այն հանգամանքների պարզաբանումը, որոնք նպաստել են հանցագործության կատարմանը:

Հանցագործությունների քննության ու բացահայտման նպատակով քննչական մարմինների գործունեությունը կարգավորվում է քրեական դատավարության օրենսգրքի նորմերով, ըստ որոնց՝ հետաքննության մարմինները և քննիչներն իրենց իրավասության սահմաններում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս և քննչական գործողություններ կատարելիս պետք է ապահովեն գործով օբյեկտիվ ճշմարտության պարզումը:

Քննիչը հետաքննության մարմինների աշխատակիցների հետ առաջինն է առնչվում հանցագործության հետ, կռահումներ անում մեղավորի մտահղացումների վերաբերյալ և քայլ առ քայլ մերկացնում է նրան՝ բացահայտելով հանցագործությունը: Գործի քննությունն սկսելիս քննիչը պետք է բազմակողմանի ուսումնասիրի և գնահատի հանցագործության վերաբերյալ եղած ելակետային տվյալները, մշակի վարկածներ և դրանք նպատակասլաց ու արդյունավետ ստուգելու մեթոդներ: Գործի քննության ընթացքում նա հաճախ հանդիպում է հանցագործի, նրա հանցակիցների շրջապատի ու մտերիմների հակազդեցություններին, որոնք ձգտում են ոչնչացնել ապացույցները և մեղավորին հնարավորություն տալ խուսափելու պատասխանատվությունից:

Այդ հակազդեցությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է խելացի օգ-

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿ

տագործել օրենքով քննիչին տրված իրավունքները, ճիշտ կիրառել գիտական մեթոդները, հնարքները և միջոցները: Հանցագործությունների բացահայտման հաջողությունը մեծապես կախված է նաև դրանց կատարման մասին ստացված տեղեկությունների և սկզբնական քննչական գործողությունների ու օպերատիվ-հետախուզական միջոցառումների ժամանակին կատարումից:

Յուրաքանչյուր հանցագործության բացահայտում ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տարբեր հանգամանքներով (հանցագործության տեսակը, տեղը, ժամանակը, կատարման և քողարկման եղանակները, քննիչի պրակտիկ փորձը և այլն): Դրանք հաշվի առնելով՝ մշակվում է գործի քննության տակտիկական պլան:

Հանցագործության բացահայտման գործընթացի հիմքը և յուրաքանչյուր քննիչի աշխատանքի կարևոր տարրը համարվում են դատավարական, մեթոդական, տակտիկական և տեխնիկական հնարքների խելացի պլանավորումը՝ գործով ապացույցների հավաքման, հետազոտման և զնահատման նպատակով: Քննիչն ինքն է որոշում այս կամ այն քննչական գործողությունների հրատապությունն ու հաջորդականությունը, ինքն է որոշում՝ պետք է արդյոք ընդլայնել հետազոտման բնագավառը և լրացնել պլանը նոր փաստերի ստուգումով, ընդլայնել կամ նեղացնել քննության սահմանները, քննչական գործողություններն ուղղել նոր տվյալների պարզաբանման ու ստուգմանը: Քննիչի ինքնուրույնությունը պայմանավորում է նրա նախաձեռնությունը՝ հանցագործությունների բացահայտման և կանխման առումով:

Հանցագործությունների քննության տակտիկայի կարևոր պահանջներից է քննիչի գործողությունների համատեղումը

հետաքննության մարմինների հետ, որոնց նա հանձնարարություններ է տալիս կատարելու համապատասխան կազմակերպական, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և անհրաժեշտության դեպքերում՝ առանձին քննչական գործողություններ՝ դրանց արդյունքների փոխադարձ տեղեկատվության փոխանակմամբ: Այս դեպքում առաջնակարգ նշանակություն ունեն այդ գործողությունների ու միջոցառումների արագությունն ու օպերատիվությունը:

Քննչական պրակտիկայի թերություններից պետք է համարել այն, որ երբեմն անժամանակ են հարուցվում առանձին քրեական գործեր, հանցագործության հատկանիշներ պարունակող նյութերը առանց վերանայելու հետաձգվում են անորոշ ժամանակով:

Որոշակի հանցագործությունների քննության աշխատանքներին ձեռնամուխ լինելով՝ քննիչը պետք է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկի հանցագործությունների կանխման ուղղությամբ: Հանցագործությունների բացահայտման ու կանխման համար մեծ դեր ունի ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեությունը: Վերջինիս իրականացումը ոչ միայն նրանց իրավունքն է, այլ նաև դատավարական պարտականությունը:

Օպերատիվ-հետախուզական աշխատանքը վերաբերում է ոստիկանության մարմինների իրավասությանը, դրա համար էլ հանցագործությունների բացահայտման գործում պետք է սահմանազատել քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթները: Քննիչին անհրաժեշտ է գործի քննությունը վարելիս հնտորեն և ճիշտ օգտագործել ոստիկանության հայտնած տեղեկատվությունը, որն ստացվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում:

Գործի քննությանը անդառնալի վնաս են հասցնում քննիչի և օպերատիվ աշխատողների տարակարծությունները:

Քննիչները միշտ չէ, որ ստանում են օ-

պերատիվ տեղեկություններ, իսկ այդ տեղեկություններն իրենց հերթին չեն օգտագործվում ոստիկանության աշխատողների կողմից: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է, ոստիկանության մարմիններն ու քննիչը իրենց ջանքերը պետք է ուղղեն ցանկացած հանցագործության ժամանակին բացահայտմանը: Դրան կարելի է հասնել նշված երկուսի աշխատանքների ճիշտ համագործակցության դեպքում:

Տեսաբան գիտնականների և պրակտիկ աշխատողների միջև միասնական կարծիք չկա այն հարցի շուրջ, թե գիտության որ բնագավառը պետք է մշակի օպերատիվ-հետախուզական գործունեության տակտիկական հնարքներն ու մեթոդները²: Որոշ հեղինակներ գտնում են, որ ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության հարցերը ուսումնասիրվում են հատուկ գիտությամբ, որն ունի իր հատուկ արտահայտված առարկան, մեթոդը, համակարգը, խնդիրները: Մյուսները, մասնավորապես Ա. Ն. Վասիլևը, գտնում են, որ այդ հարցերը վերաբերում են կրիմինալիստիկային:

Ա. Ն. Վասիլևը գրում է. «Եթե օպերատիվ-հետախուզական գործունեության տակտիկական չմիացնենք կրիմինալիստիկայի առարկային, նա գիտական ընդհանրացման չի ենթարկվի»³:

Նույնպիսի կարծիքի է նաև Ս. Պ. Միտրիչևը, ով գտնում է, որ. «քննչական տակտիկական օրենքի վրա հիմնված քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման հնարքների համակարգ է»⁴:

Այդպես է մտածում նաև Ե. Գ. Մալցևը⁵:

Նրանք օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության դրույթների գոյությունը հիմնավորում են որպես ինքնուրույն գիտություն: Նրանց փաստարկումները հանգում են այն բանին, որ այդպիսի գործունեությունը երկար ժամանակ իրականում գոյություն ունի, կատարվում է հատկապես այն մարմինների կողմից, որոնց իրավասություն է տրված լուծելու

բարդ, պրակտիկ խնդիրներ հանցագործությունների դեմ պայքարում: Նրանց փաստարկները թեև առաջին հայացքից համոզիչ են թվում, բայց և միաժամանակ առաջացնում են առարկություններ:

Գիտությունը՝ որպես պրակտիկ գործունեության արտացոլում և խտացում, իսկապես, ինչպես նշվում է Վ. Դալի «Բացատրական բառարանում», «սովորեցնում է փորձով»⁶: Սակայն, բացի դրանից, նա պետք է ներկայացնի կայացած և անընդհատ զարգացող գիտելիքների համակարգ: Որպես գիտակցական գործունեության համակարգ՝ գիտությունը պետք է ճիշտ ընկալի որոշակի երևույթների օրինաչափությունները և պրակտիկ գործունեության գիտական ընդհանրացումների հիման վրա ճանապարհ բացի դրանց կիրառման համար, ունենա իր հետազոտությունների առարկան, մեթոդը, համակարգը:

Հատուկ գիտությունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ այն հիմնական դրույթները, որոնք վերաբերում են առարկային, մեթոդին և համակարգին, ձևավորվում են զարգացման որոշակի փուլեր անցնելուց հետո: Առաջին փուլում հատուկ գիտությունը համարվում է գործնական դիսցիպլին, որը հավաքում, ձեռք է բերում խորհուրդներ, հանձնարարականներ և որոշակի բնագավառի պրակտիկ գործունեության վերաբերյալ հրահանգներ:

Այդպիսի պրակտիկ դիսցիպլինը կարելի է համարել գիտություն բառիս պայմանական, հարաբերական առումով:

Նրա զարգացման ընթացքում առաջանում է երկրորդ փուլը, երբ նա պրակտիկ դիսցիպլինից վերածվում է գիտելիքների համապատասխան համակարգի, որը պարունակում է հասարակական երևույթների բացատրություն նրանց պատճառաբանության և փոխպայմանավորվածության առումով⁷:

Երրորդ փուլն առաջանում է, երբ գիտությունը, մշակելով իր պրակտիկ նյութը, ձևավորում է իր գիտելիքների որոշակի

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ

համակարգը, մեթոդաբանորեն հիմնավորում է իր հետևություններն ու դրույթները⁹:

Միայն այդ դեպքում է այն դառնում գիտություն՝ բառիս իսկական իմաստով: Նշված փուլերը նկատելի են նաև «օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության» գործընթացում:

Քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների առաջավոր փորձի ընդհանրացման արդյունքում արդեն անցած դարի 20-ական թվականներին ձևավորվեցին երկու գիտական ուղղություններ. առաջինը արագ զարգացավ և ձևավորվեց կրիմինալիստիկայի գիտության մեջ, իսկ երկրորդը, լինելով փակ դիսցիպլին, մինչև օրս չկարողացավ մշակել խիստ որոշակի գիտական հիմունքներ:

Ինչպես արդարացիորեն նշում է Ս. Պ. Միտրիչևը, կրիմինալիստիկան մյուս իրավաբանական գիտություններից ուշ մտավ իր զարգացման երրորդ փուլը, դրա համար էլ ունի մի շարք չհետազոտված մեթոդաբանական խնդիրներ, չնայած դրանց մեծ մասը արդեն ստացել է իր ճիշտ դրվածքը և գիտական ճշգրիտ լուծումը¹⁰:

Նույնպիսի կարծիք են հայտնել նաև Ռ. Ս. Բելկինը և Ի. Մ. Լուզգինը¹⁰:

Այս հարցին անդրադարձել ենք նաև մեր «Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում» մենագրության մեջ¹¹:

Հանցագործությունների քննությանը զուգահեռ՝ իրականացվում է հետախուզական գործունեություն, որը նախաքննության և հետաքննության կարևորագույն գործառնություններից մեկն է: Այս արտահայտությունը հիմնավորվում է նրանով, որ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակը հանցագործության և լայն առումով նրա հետքերի հայտնաբերումն է, հանցագործների և այն օբյեկտների բացահայտումը, որոնք համարվում են ապացուցողական տեղեկատվության աղբյուրներ,

մասնավորապես՝ տուժողներ, ականատեսներ, այլ վկաներ, հրազեններ, առարկաներ, որոնք օգտագործվել են որպես հանցագործության գործիքներ, արժեքներ և այլն:

Այս կամ այն օբյեկտի, անձանց հետախուզումը քննիչից և հետաքննություն կատարող անձից հսկայական ժամանակ է խլում: Այս աշխատանքը ժամանակին և արդյունավետ կատարելու համար նրանցից պահանջվում է գիտելիքներ և կրիմինալիստիկական միջոցների, տակտիկական հնարքների ու մեթոդների ճիշտ կիրառում, մասնագիտական հմտություն, հետախուզական և քննչական գործողությունների համատեղում, աշխատանքային համագործակցություն:

Հանցագործությունը կատարելուց անմիջապես հետո հանցագործները ձգտում են թաքնվել, և նրանց ժամանակին հայտնաբերելը դժվարանում, իսկ երբեմն էլ անհնար է դառնում առանց օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման: Նման գործունեության մասին Ա. Վաքսյանը գրում է. «Հանցագործությունների բացահայտման գործում օպերատիվ-հետախուզական գործունեության դերը օպերատիվ-հետախուզական միջոցառումների, քննչական գործողությունների համակցությամբ իրականացնելն է»¹²:

Այս և նման առաջարկներ ու դատողություններ կան համապատասխան գրականության մեջ, որոնք մեզ ճիշտ և արդիական են թվում¹³:

Նշված հարցերի գիտական համառվելությունը հանդուս է, որ անհրաժեշտ և նպատակահարմար է կրիմինալիստիկայի առարկայի ընդլայնումը՝ նրա համակարգում ավելացնելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսությունը:

Դրանով կրիմինալիստիկայի գիտությունը նախ իր զարգացածությամբ մեկ աստիճանով կբարձրանա, մյուս կողմից՝ առավել արդյունավետ կբավարարի պրակտիկայի աճող պահանջումները՝ հանցագործությունների բացահայտման, քննութ-

յան և կանխման գործում:

Օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառում տեսական հետազոտությունները հիմք են տալիս հանգելու այն հետևության, որ ներկայումս այն գտնվում է գիտական հիմունքների ձևավորման գործընթացում:

Դեռևս 1965 թ. սկսվեցին մեթոդաբանության առանձին հարցերի գիտական հետազոտությունները, որոնք դեռևս հավասարաչափ չեն վերաբերում դրանով ուսումնասիրվող առարկայի բոլոր կողմերին:

Համեմատաբար դանդաղ է զարգանում օպերատիվ-հետախուզական գործունեության տեսական հիմունքները առաջին հերթին այն պատճառով, որ պրակտիկայով մշակված, հանցագործությունների դեմ պայքարի նոր, հատուկ հնարքները ոչ լրիվ և ոչ ժամանակին են ընդհանրացվում և ենթարկվում մանրամասն տեսական հետազոտման: Նաև պետք է հիշել, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը առաջացել է իրավաբանական այլ գիտությունների, մասնավորապես քրեական դատավարության և կրիմինալիստիկայի խառնուրդից, որոնք էլ նպաստել և նպաստում են դրա զարգացմանը:

Եթե քրեադատավարական օրենքը սահմանում է ոստիկանության օպերատիվ-հետախուզական ապարատի իրավական հիմքերը, նպատակները և խնդիրները, որոնք վերաբերում են այդ գիտության հասկացությանը և բովանդակությանը տակտիկական հնարքներ և մեթոդներ մշակելիս, ապա կրիմինալիստիկան դրա հետ կապված լուծում է քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կողորդման պրոբլեմները առանձին հանցագործություններ քննելիս:

Կրիմինալիստիկական տակտիկական գիտական դրույթների և դրանց հիման վրա մշակված, նախնական և դատական քննության կազմակերպման, պլանավորման և ապացուցում իրականացնող անձանց առանձին քննչական և դատական

գործողություններ կատարելիս վարքագծի ուղղության որոշումն է՝ հանցագործությունների բացահայտման, թաքցնելուն և կատարմանը նպաստող պատճառների վերհանման նպատակով:

Կրիմինալիստիկական տակտիկայի մեջ մտնող գիտական դրույթներն ընդհանուր են այդ բաժնի համար: Մասնավորապես այստեղ խոսքը տակտիկայի հիմնական հասկացությունների, կրիմինալիստիկական տակտիկայի տեղը կրիմինալիստիկայի համակարգում և ընդհանրապես գիտելիքների համակարգում:

Կրիմինալիստիկական տակտիկայի հասկացության բնորոշումը գրականության մեջ տարբեր կերպ են ներկայացվել: Այդ թեմային անդրադարձել է պրոֆեսոր Ա. Ն. Վասիլևը՝ գտնելով, որ տակտիկական «...քննության ժամանակ նպատակին հասնելու գործունեության մեթոդ է՝ հաշվարկված ժամանակի և ուժերի վատնման հարաբերականորեն մինիմալ վատնման առումով օպտիմալ էֆեկտի վրա»¹⁴:

Քանի որ քննչական տակտիկան իրականացվում է առանձին քննչական գործողություններ կատարելիս, կարևոր է ներկայացնել դրանց համակարգը և հասկացությունները:

Ա. Ռ. Ռատինովը քննության տեսական հիմնավորումը որպես պայքարի ձև ներկայացնելու համար դիմում էր պրակտիկո-գիային¹⁵, գիտության մի բնագավառի, որը վերաբերում է գործունեության արդյունավետությանը:

Այս կապակցությամբ նա գրում է. «...ճշգրիտ համապատասխանությունը օրենքին թեև գլխավոր, բայց միակը չէ, որը պահանջվում է տակտիկական հնարքից: Օրենքի պահանջից գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության անհրաժեշտության մասին բխում է և այլ պահանջ՝ ճանաչողական արդյունավետություն, յուրաքանչյուր տակտիկական հնարքի ուղղվածությունը ճշմարտությունը բացահայտելուն, նրա անկարողությունը դրան խանգարելուն,

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿ

տեղիք չտալ սխալների ու շեղումների»¹⁶:

Նշված հարցերի լուսաբանումը հիմնականում կապված է գործերի քննության ժամանակով առաջացած կոնֆլիկտային իրադրություններում քննիչի ճիշտ կոմունորոշման հետ:

Նման իրավիճակներ առաջանում են, երբ քննիչը գործ է ունենում անբարեխիղճ, գործի ելքով շահագրգռված վկաների կամ տուժողների հետ, անբարեխիղճ կասկածյալների ու մեղադրյալների հետ, ովքեր կարող են լինել մեղավոր կամ անմեղ: Վերջինը (անմեղը) երբեմն հանդիպում է, երբ սխալմամբ անձը կասկածվում է կամ ենթարկվում է քրեական պատասխանատվության, ընտրում է ճշմարտության բացահայտումը դժվարացնող կեցվածք, կամ որևէ շարժառիթով խանգարում է քննիչին¹⁷:

Քննիչի ներգործությունը գործով անցնող անձանց հոգեբանության վրա քննչական տակտիկայի հիմնական տարրերից մեկն է: Բայց այն չի կարելի կատարել քննիչի իշխող հնարավորությունները ցուցադրելով: Այս հարցի լուծման բարդությունը կախված է այն բանից, որ քննիչը ճիշտ կողմնորոշվի, թե որ հնարքներն են թույլատրելի, իրավաչափ, և որոնք են իրենցից ներկայացնում հոգեբանական բռնություն, որոնք անհամատեղելի են Սահմանադրության և քրեական դատավարության սկզբունքներին:

«Կոնֆլիկտը պայթար է ոչ թե իրավախախտողի դեմ, այլ կողմ, որպես անձնավորության՝ նրա գիտակցության մեջ հաստատելու բարոյականության բարձր սկզբունքներ»¹⁸, - նշում է Ռ. Ս. Բելկինը:

Նշենք նաև Պ. Պ. Դոսպոլովի կարծիքը. «Չարցաքննության ընթացքում կոնֆլիկտի պատճառը, որպես կանոն, առաջանում է անհամապատասխանություն հասարակության բարոյական կողմնորոշման համակարգի և անձի՝ վկայի, տուժողի, կասկածյալի, մեղադրյալի միջև, իսկ կոնֆլիկ-

տի աղբյուրը հարցաքննվողի ձգտումն է՝ խանգարելու քննիչին հարցաքննության նպատակին հասնելուն»¹⁹:

Պրակտիկոգիայի շատ հարցեր, որոնց անդրադարձել է նաև Ա. Ռ. Ռատինովը, քննադատելի են և չեն համապատասխանում վերը նշված սկզբունքներին²⁰: Դրա համար էլ կրիմինալիստիկայի գիտությունը նպատակ ունի ստեղծելու և պրակտիկայում ներդնելու շատ գաղափարներ, որոնք համարժեք կլինեն նոր ժամանակների պահանջներին:

Այսօրվա կրիմինալիստիկայի նպատակն է ուսանողների գիտակցության մեջ ներդնել նոր գաղափարներ, նրանց մեջ զարգացնել հմտություններ, արդյունավետ և ստեղծագործ մտածողություն:

Դրանում մեծապես օգնել և օգնում է կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության զարգացումը, որից ծնունդ առան մասնավոր կրիմինալիստիկական տեսություններ: Մասնավոր կրիմինալիստիկական տեսություններից էական է անձի կրիմինալիստիկական պարզաբանման տեսությունը, որի մասին սույն հոդվածում մի երկու խոսք ասենք որպես օրինակ:

Կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության կառուցվածքի հարցերով զբաղվել են Ա. Վ. Ավետյանովան, Ռ. Ս. Բելկինը, Դ. Պ. Գորսկին, Ա. Վ. Դուլովը, Վ. Յա. Կոլդինը, Ի. Մ. Լուզգինը, Վ. Ա. Օբրազցովը, Ն. Ա. Սելիվանովը և այլք: Նրանց աշխատանքները բովանդակում են մասնավոր կրիմինալիստիկական տեսությունների համակարգը, որոնք արտացոլում են կրիմինալիստիկայի առարկայի առանձին տարրերը և անխզելիորեն կապված են միմյանց հետ:

Կրիմինալիստիկայում և այլ իրավաբանական գիտություններում մշակվել են մի շարք տեսական դրույթներ, որոնք վերաբերում են անձին: Սակայն դրանք չեն կարող լիովին բավարարել հանցագործությունների դեմ պայքարի պրակտիկայի պահանջները: Նախ՝ որովհետև նախքան մարդու անձնավորության ուսումնասիրումը պարզաբանվող անձի վերաբերյալ

պետք է ունենալ որոշակի ամբողջական տեղեկատվություն: Եվ երկրորդ՝ դրանք պետք է վերաբերեն հանցագործի անձի պարզաբանմանը, նրա փորձագիտական նույնացմանը ու դիագնոստիկային և այլն: Նշված հարցերի քննարկումը դուրս է սույն հոդվածի նպատակներից: Հետագայում կաշխատենք անդրադառնալ այդ կարևոր

հարցին, միայն ցանկանում ենք ընդգծել էյ-դոլոգիայի դերը լուծելու համար կրիմինալիստիկայում եղած պրոբլեմներից մեկի՝ անձի պարզաբանման հարցը, որը պահանջում է տեսական վերլուծություն, կազմում է մասնավոր կրիմինալիստիկական տեսություն՝ ընդհանուր կրիմինալիստիկական տեսության բաժնի մի մասը:

¹ Տե՛ս Стремковский В.А., Участники предварительного следствия, изд. Ростовского ун-та, 1966, էջ 74:

² Տե՛ս, օրինակ, Гребельский Д.В., Некоторые вопросы совершенствования курса «Оперативно-розыскная деятельность органов общественного порядка», «Труды Высшей школы МООП СССР», 1967, N 16, էջ 81, Осипов Я.Ф., К вопросу о понятии оперативно-розыскных мер, «Труды Высшей школы МООП СССР», 1965, N 12, էջ 202:

³ Տե՛ս Васильев А.Н., Следственная тактика и ее место в советской криминалистике, «Советская криминалистика на службе следствия», 1961, вып. 15, էջ38,

⁴ Տե՛ս Митричев С.П., Введение в курс советской криминалистики. Криминалистика, М., 1963, էջ 13,

⁵ Տե՛ս Мальцев Е.Г., К вопросу о понятии и месте оперативно-розыскных мер в системе криминалистики, Ученые записки Пермского госуниверситета, Пермь, 1967, ¹ 187, էջ 65:

⁶ Տե՛ս Даль В., Толковый словарь, том 2, М., 1955, էջ 448:

⁷ Տե՛ս Подосеткин В.М., К вопросу о ступенях процессе познания истины, Вопросы философии, 1964, N 5, էջ 18,

⁸ Տե՛ս Волков Г.Н., Взаимосвязь науки и производства, 1967, N 2, էջ 28:

⁹ Տե՛ս Митричев С.П., Теоретические основы Советской криминалистики, М., 1965:

¹⁰ Տե՛ս Белкин Р.С., Лузгин И.М., 50 лет советской криминалистики, «Труды Высшей школы МООП СССР», 1967, N 16, էջ 108: Белкин Р.С., Методологические проблемы

советской криминалистики, «Проблемы криминалистики», М., 1969, էջ 37:

¹¹ Տե՛ս Օհանյան Լ.Պ., Կրիմինալիստիկական Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007:

¹² Практика уголовного сыска (научно-практический сборник), составитель А. Ваксян, М. 1999г., էջ 35:

¹³ Տե՛ս Чуфаровский Ю.Ф., Психология в оперативно-розыскной деятельности, М. 1996г., Басков В.И., Оперативно-розыскная деятельность, М. 1997г., Николаева Л.П., Сорокин И.Д., Есть такая служба-уголовный розыск, М., 1981г. և այլն:

¹⁴ Տե՛ս Васильев А.Н., Следственная тактика /общее положения/ в кн. Криминалистика, М., 1971, էջ 250:

¹⁵ Տե՛ս հոլմարեն՝ деятельный Praktikos /գործնական/ + логия. սոցիոլոգիական հետազոտությունների բնագավառ, որն ուսումնասիրում է գործողությունների կամ արարքների ամբողջության հետազոտման մեթոդիկան՝ նրանց արդյունավետության պարզաբանման տեսանկյունից:

¹⁶ Տե՛ս Ратинов А.Р., Судебная психология для следователей, М., 2001, էջ 199:

¹⁷ Տե՛ս Ратинов А.Р., նույն տեղը, էջ 177-178:

¹⁸ Տե՛ս Белкин. Р.С., Тенденции и перспективы развития криминалистики, «Социалистическая законность», 1983, N 1, էջ 25:

¹⁹ Տե՛ս Доспулов П.П., Психология допроса на предварительном следствии, М., 1976, էջ 14:

²⁰ Տե՛ս Котарьбинский, Избранные произведения, изд. Иностранная литература, 1963, էջ 53:

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ**INVESTIGATION TACTICS
(General Provisions)****Levon OHANYAN**

*Professor of Criminal procedure and
Criminalistics department of the YSU,
RA honored lawyer*

Investigation tactics, which is actually a scientific organization of investigator's activity, is not sufficiently studied. So the completeness of knowledge which refers to the organization investigator's activity should be treated as an independent science, which should be based on achievements of various fields of science and must disclose deep and comprehensive achievements of methods for organizing investigator's activity.

The main condition for the success of the fight against crimes is its full and timely disclosure by investigative bodies. In tactical sense crimes disclosure is investigative actions and operational done by investigation bodies within their jurisdiction, as well as actions directed to disclosure of all cir-

cumstances and all responsible persons.

Essential requirement for crime investigation tactics is investigator's actions combined with the investigation bodies, which he gives instructions to organize operational and investigative measures and appropriate activities, and if necessary separate investigative activities with mutual exchange of information. In this case is of great importance speed and immediacy of these actions and measures.

A number of theoretical provisions of forensic and other legal sciences have been developed which relate to a person but it can not fully satisfy the requirements of the practice of the fight against crime. First, because before studying of human personality it is necessary to have full information about exploring person. Second, it must relate to clarification of offender's personality, and his expertise identification and the diagnostics.

Forensic tactics developed on the basis of the scientific provisions of the pre-trial investigation and organizing, planning and implementing actions of investigator.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԴՅԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԴՅԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄԱԿԻՍ ՄԱՆԱՍՅԱՆ

ԳՀ սահմանադրական դատարանի նախագահի օգնական, ԵՊԳ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության հիմնախնդիրները բացառիկ կարևորություն ունեն դրանց կատարումն ապահովելու տեսանկյունից: Պատճառն այն է, որ կատարման են ենթակա սոսկ այն ակտերը, որոնք մտել են ուժի մեջ, և որոնց գործողությունը սահմանված կարգով չի դադարել: Այդ առումով բացառություն չեն նաև սահմանադրական դատարանի որոշումները, որոնց իրավական հետևանքների վերլուծությունն իրականացնելիս առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում դրանց ուժի մեջ մտնելուն վերաբերող հարցերը:

ԳՀ Սահմանադրության 102 հոդվածի և «Սահմանադրական դատարանի մասին» ԳՀ օրենքի 61 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Այդ պահից սկսած՝ սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են դառնում բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Հետևաբար, հիշյալ որոշումների կատարման արդյունավետ համակարգի ձևավորման տեսանկյունից բա-

ցառիկ կարևորություն է ձեռք բերում այն հիմնախնդրի բացահայտումը, թե որն է սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահը, և որ հանգամանքին է վերաբերում ԳՀ օրենսդրության վերը նշված ձևակերպումը՝ հիշյալ ակտը նիստում հրապարակելուն, թե՞ ԳՀ պաշտոնական տեղեկագրում և սահմանադրական դատարանի տեղեկագրում հրատարակելուն:

Հարկ է նկատել, որ թեև ԳՀ Սահմանադրության շրջանակներում ընդհանրապես չի հանդիպում «հրատարակում» ձևակերպումը, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ԳՀ օրենքում քննարկվող որոշումների առնչությամբ օգտագործվում են ինչպես «հրապարակում», այնպես էլ «հրատարակում» հասկացությունները: Ընդ որում՝ վերջինը հանդիպում է օրենքի սոսկ մեկ՝ 65 հոդվածում, որը սահմանում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները **հրատարակվում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սահմանադրական դատարանի տեղեկագրում**¹: Օրենքի մյուս բոլոր դրույթներում, այդ թվում՝ 62 հոդվածի 7-րդ մասում, որը վերաբերում է սահմանադրական դատարանի անդամի կողմից ներկայացված **հատուկ կարծիքը դատարանի որոշման հետ սահմանադրական դատարանի տեղեկագրում հրապարակելուն**, ամրագրվել է «հրապարակում» հասկացությունը: Ընդգծենք նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» ԳՀ օրենքում վերջինս օգտագործվում է գլխավորապես **դատարանի նիս-**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

տում որոշումը հրապարակելու հանգամանքը մատնանշելու համար²:

Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ դրույթներ է պարունակում նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6 գլուխը, որը թեև վերնագրված է «Իրավական ակտերը հրապարակելը և դրանց ուժի մեջ մտնելը», սակայն հիշյալ հարաբերություններին վերաբերող նորմերի շրջանակներում օգտագործվում են ինչպես «հրապարակում», այնպես էլ «հրատարակում» հասկացությունները, ընդ որում՝ համանման հարաբերությունների կարգավորման նպատակով: Մասնավորապես, «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հրապարակելը և դրանց ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 50 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են պարտադիր պաշտոնական **հրապարակման**, հոդվածի հետագա շարադրանքում նույնպես օգտագործվում է «հրապարակում» հասկացությունը, մինչդեռ 4-րդ մասը նախատեսում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները **հրատարակման** է ուղարկում ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը՝ դրանց ընդունման օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ, այլ իրավական ակտերին առնչվող համանման հարաբերությունները կարգավորելու նպատակով օրենքը չի դրսևորում միատեսակ մոտեցում և ամրագրում է ինչպես «հրապարակում», այնպես էլ «հրատարակում» հասկացությունները³: Տվյալ պարագայում հարկ ենք համարում հիշատակել նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ հիշյալ հոդվածով նախատեսված օրենքների և իրավական այլ ակտերի **պաշտոնական հրապարակման** օրը համարվում է դրանց ամբողջական տեքստը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» կամ «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում» առաջին անգամ **հրատարակման (լույսընծայման)** օրը: Հետևաբար, հիշյալ համատեքստում «պաշտոնական հրապարակում» և «հրատարակում» ձևակերպումները իմաստային առումով համընկնում են:

Միևնույն ժամանակ, օրենսդրական կարգավորումների տրամաբանությունը հանգեցնում է այն հետևության, որ վերջիններիս շրջանակներում օգտագործվող «պաշտոնական հրապարակում», «հրապարակում» ու «հրատարակում» ձևակերպումները միշտ չէ, որ բովանդակային տեսանկյունից նույնական են, և ՀՀ օրենսդրության բնագավառում հետևողականություն չի դրսևորվել քննարկվող հասկացությունների ամրագրման առնչությամբ: Ակնհայտ է, որ, օրինակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ ընդհանուր իրավասության դատարանների դատական ակտերի հրապարակմանն առնչվող 57 հոդվածի 1-ին և 3-րդ մասերում օգտագործվող «հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները նույն իմաստն ունեն և վերաբերում են հիշյալ ակտերի լույսընծայմանը⁴: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ քննարկվող հիմնախնդրին առնչվող 140 հոդվածում ամրագրված «հրապարակում» հասկացությունը վերաբերում է **դատարանի միատեսակ դատական ակտի հրապարակմանը**, իսկ վերջինս, ինչպես ցույց է տալիս հիշյալ նորմերի վերլուծությունը, ուժի մեջ է մտնում մինչ **հրատարակումը՝ հրապարակման** պահից կամ դրանից մեկ ամիս հետո⁵: Տվյալ պարագայում հիշատակման է արժանի նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241² հոդվածը, համաձայն որի վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում **դատական միատեսակ դատական ակտի հրապարակման պահից**, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Հետևաբար, նշված ակտերի տեսանկյունից ակնհայտ է քննարկվող հասկացու-

յունենների իմաստային տարբերությունը:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդիրներին առնչվող օրենսդրական կարգավորումների հիմքում ընկած է «պաշտոնական հրապարակում» և «դատարանի նիստում հրապարակում» հասկացությունների բովանդակության տարբերակման տրամաբանությունը, ընդ որում՝ այդ համատեքստում իրավական ակտերի պաշտոնական հրապարակումը նույնանում է վերջիններիս հրատարակմանը (լույսընծայմանը): Այլ հարց է, որ ՀՀ օրենսդրության բնագավառում միասնական մոտեցում չի դրսևորվել վերջիններիս ամրագրման առնչությամբ, և այդ ձևակերպումներն օգտագործվել են ոչ հետևողական եղանակով: Հետևաբար, մեր կարծիքով, քննարկվող հասկացությունները մեկնաբանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել վերը նշված հանգամանքը և յուրաքանչյուր դեպքում վերջիններիս բովանդակությունը բացահայտել կոնկրետ օրենսդրական կարգավորումների տրամաբանության համատեքստում:

Այդ հանգամանքը վերաբերում է նաև սահմանադրական դատարանի որոշման հրապարակմանն առնչվող հիշատակված հիմնախնդիրին: Ակնհայտ է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները հրապարակելը և դրանց ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 50 հոդվածի 1-ին, 3-րդ⁷ և 4-րդ մասերում օգտագործվող համապատասխանաբար «պաշտոնական հրապարակում», «հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները նույն իմաստն ունեն և վերաբերում են քննարկվող որոշումների լույսընծայմանը: Մինչդեռ նույնը չի կարելի ասել հոդվածի 2-րդ մասի առնչությամբ, որը, ամրագրելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, հղում է կատարում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրեն-

քով սահմանված կարգին, որի շրջանակներում նույնպես, ինչպես արդեն նշեցինք, հիշյալ հիմնախնդրի առնչությամբ չի դրսևորվել միասնական մոտեցում: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ, չնայած վերը շարադրվածին, ակնհայտ է քննարկվող օրենսդրական կարգավորումների հիմքում դրված տրամաբանությունը, այն է՝ սահմանադրական դատարանի նիստում որոշման հրապարակումն ու պաշտոնական տեղեկագրում կամ սահմանադրական դատարանի տեղեկագրում վերջինիս լույսընծայումը հստակորեն տարբերակելու հանգամանքը: Այդ մասին է վկայում նաև հիշյալ հիմնախնդրի առնչությամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում դրսևորված մոտեցումը, երբ «հրապարակում» հասկացությունն օգտագործվում է գլխավորապես **դատարանի նիստում** որոշումը հրապարակելու հանգամանքը մատնանշելու, իսկ «հրատարակում» ձևակերպումը՝ պաշտոնական տեղեկագրում կամ սահմանադրական դատարանի տեղեկագրում վերջինիս **լույսընծայման** հանգամանքը ընդգծելու ու այն այլ իրավիճակներից տարանջատելու համար: Ավելին, Հայաստանի իրավական տեղեկատվության հանակարգում որպես հիշյալ որոշումների ուժի մեջ մտնելու ամսաթիվ է հիշատակվում դրանց ընդունման, հետևաբար նաև դատարանի նիստում հրապարակման ամսաթիվը: Ուստի, հաշվի առնելով վերը շարադրվածը, կարծում ենք, որ «սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահ» ձևակերպումը վերաբերում է վերջինս նիստում հրապարակելուն, և հենց այդ պահից էլ ուժի մեջ է մտնում Դատարանի որոշումը¹⁰: Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ իրավական որոշակիության սկզբունքի պահպանման տեսանկյունից նպատակահարմար կլիներ, որ ՀՀ օրենսդրության բնագավառում միասնական մոտեցում դրսևորվեր հիշյալ հասկացությունների սահմանման առնչությամբ, և դրանք ամրագրվեին հետևողական եղանակով¹¹:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՍԴՈ-943 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում), ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև հակասահմանադրական ճանաչված ակտի իրավաբանական ուժը կորցնելը տարածանկետներում հնարավորություն¹²: ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը: Հարկ ենք համարում ընդգծել, որ վերը նշված դրույթի ամրագրումն ինքնանպատակ չէ և նպատակաուղղված է հիշյալ հետևանքները կանխելուն ուղղված միջոցառումների իրականացումն ապահովելուն: Այդ է պատճառը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 17-րդ մասն ամրագրում է, որ հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի և ծանր հետևանքները հանրության և պետության համար, և ավելի էական վնաս չպատճառ-

վի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին¹³: Այդ հանգամանքն ընդգծվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԴՈ-701 որոշմամբ, որի շրջանակներում դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են հիշյալ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկանխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները¹⁴:

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանը հետաձգում է ոչ թե **որոշման ուժի մեջ մտնելը**, այլ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտի **իրավաբանական ուժը կորցնելը**: Հետևաբար, որոշման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ուժի մեջ են մտնում որոշման հրապարակման պահից, որպիսի պայմաններում առավել ընդգծվում է ՀՀ սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության կայունության և զարգացման ապահովման բնագավառում ունեցած դերը: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ, անկախ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական ակտի իրավաբանական ուժը կորցնելը տարածանկետներում հանգամանքից, սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պետք է պատշաճ ձևով իրացվեն որոշման հրապարակման պահից: Ընդ որում՝ հիշատակված հանգամանքը վերաբերում է նաև հակասահմանադրական ճանաչված և տարածանկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը, որին, ինչպես արձանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված որոշմամբ, չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է ի-

րականացվի՝ հաշվի առնելով տարածանկետման հիմքում ընկած և օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը¹⁵, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

Իսկ ինչ վերաբերում է քննարկվող պարագայում նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԴՈ-701 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, չի կարելի իրավաչափ համարել նմանատիպ իրավիճակներում համապատասխան դատական ակտի վերանայման պահանջի պարագայում վերանայման վարույթ հարուցելու պահանջը մերժելու և վերանայման վերաբերյալ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու այն պատճառաբանությունը, որ սահմանադրական դատարանը, դատարանների կողմից կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով, տարածանկետել է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը, և բողոք բերող անձը նման պայմաններում չի ապացուցել և հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը:

Չնայած վերը շարադրվածին՝ ՀՀ դատական պրակտիկան զարգացել էր հակառակ սահմանադրական դատարանի՝ 11 մայիսի 2007թ. ՍԴՈ-701 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների: Ավելին, երբ հիշատակված դեպքերում բողոքը ներկայացվում էր տարածանկետման ավարտից հետո, վերջինս այս պարագայում էլ վերադարձվում էր այն պատճառաբանությամբ, որ բաց է թողնված բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը: Այդ էր պատճառը, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15 հուլիսի 2011թ. ՍԴՈ-984 որոշմամբ կրկին անդրադարձավ քննարկվող հիմնախնդրին՝ արձանագրելով, որ այն դեպքում, երբ սահմանադրական դատարանը, տվյալ նորմը հակասահմանադրական ճանաչելով, տարածանկետել է այդ նորմի ուժը կորցնելը, սահմանադրական դատարանի 2007թ. մայիսի 11-ի ՍԴՈ-701 որոշմանը համապատասխան, տարածանկետման հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանք չդիտարկելու համար¹⁶:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ուժի մեջ մտնելու հետ կապված հիմնախնդիրները բացառիկ կարևորություն ունեն հիշյալ ակտերի պատշաճ կատարումն ապահովելու տեսանկյունից: Հետևաբար անհրաժեշտ է, որ դրանց համար ամրագրվող լուծումներն ու պրակտիկայում վերջիններիս իրացումը համապատասխան լինեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին:

¹ Նշենք, որ միջազգային սահմանադրական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում **հրատարակման** պահից: Օրինակ՝ Ավստրիայում, Խորվաթիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Լատվիայում, Սերբիայում, Թուրքիայում, Ալբանիայում, Ռումինիայում, Չեխիայում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with

the Other Public Authorities // General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, էջ 71 (<http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>), Լիտվայում («Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 84 հոդված):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

² Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 22, 59, 63, 72 հոդվածները:

³ Օրինակ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 51 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ Նախագահի՝ հրապարակման ենթակա հրամանագրերը և կարգադրությունները **հրապարակման** է ուղարկում ՀՀ Նախագահը՝ դրանց ընդունման օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում, իսկ 52 հոդվածի 5-րդ մասին համապատասխան ՀՀ կառավարության՝ **հրապարակման** չուղարկված անհատական որոշումները կարող է **հրատարակել** իրավական ակտերը հրատարակող մարմինը:

⁴ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 57 հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ օրենքին կամ այլ իրավական ակտերին հակասող, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը պետք է **հրապարակվի** նույն կարգով, որով հրապարակվել է անվավեր ճանաչված իրավական ակտը, իսկ 3-րդ մասը սահմանում է, որ հիշյալ հոդվածով նախատեսված՝ ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտերը **հրատարակման** է ուղարկում ակտերն ընդունած դատարանը՝ **դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում**:

⁵ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140 հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասեր:

⁶ Քննարկվող հիմնախնդիրն առավել ակնհայտ է դառնում այն պատճառով, որ, ինչպես նշեցինք, ՀՀ Սահմանադրության շրջանակներում ընդհանրապես չի հանդիպում «հրատարակում» ձևակերպումը, և բոլոր համապատասխան կարգավորումները ներկայացվում են «հրապարակում» հասկացության միջոցով (տե՛ս ՀՀ Սահմանադրության 6, 55, 56, 62, 102, 107 հոդվածները):

⁷ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող ՀՀ օրենքները, ՀՀ Ազգային ժողովի որոշումները, ՀՀ Նա-

խագահի հրամանագրերը, կարգադրությունները, ՀՀ կառավարության որոշումներն անվավեր ճանաչելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները պետք է հրապարակվեն այն կարգով, որով հրապարակվել են անվավեր ճանաչված ակտերը:

⁸ Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել «Սահմանադրական դատավարության մասին» Վրաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասը, որը հստակ տարբերակում է «դատարանի նիստում հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները՝ ամրագրելով, որ Վրաստանի սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում **դատարանի նիստում հրապարակման պահից** և պետք է **հրատարակվի** պաշտոնական տեղեկագրում տասնհինգ օրվա ընթացքում (տե՛ս http://www.constcourt.ge/index.php?sec_id=101&lang_id=ENG):

⁹ Տե՛ս www.arlis.am:

¹⁰ Նշենք, որ մի շարք պետություններում նույնպես սահմանադրական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման կամ հրապարակման պահից, օրինակ՝ Բելոռուսում, Էստոնիայում, Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania (<http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>)), Ռուսաստանի Դաշնությունում (բացառությամբ առանց դատական լսումների անցկացման գործերի քննության արդյունքում ընդունվող որոշումների) («ՌԴ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 79 հոդված), Տաջիկստանում («Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 32 հոդված), Ղազախստանում («Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի մասին» օրենքի 38 հոդված):

¹¹ Օրինակ՝ «ՌԴ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքում հստակորեն տարբերակ-

վում են «հրապարակում» և «հրատարակում» հասկացությունները համապատասխանաբար “провозглашение” և “опубликование” ձևակերպումների միջոցով, ընդ որում՝ առաջինը վերաբերում է դատարանի նիստում որոշումը հրապարակելուն, իսկ երկրորդը՝ պետական իշխանության մարմինների պաշտոնական տեղեկագրերում լույս ընծայելուն (տե՛ս «ՌԴ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային օրենքի 77 և 78 հոդվածներ (<http://www.ksrf.ru/Info/LegalBases/FCL/Documents/FCL.pdf>)):

¹² Հարկ է նկատել, որ հիշյալ պրակտիկան լայնորեն տարածված է միջազգային սահմանադրական արդարադատության շրջանակներում, այդ թվում՝ Ավստրիայում, Լեհաստանում, Լատվիայում, Թուրքիայում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Էստոնիայում, Սլովենիայում, Գերմանիայում, Խորվաթիայում, Չեխիայում, Վրաստանում, Ռուսաստանում (տե՛ս Constitutional Justice: Functions and Relationship with the Other Public Authorities, General report prepared for the XVth Congress of the Conference of European Constitutional Courts by the Constitutional Court of Romania, <http://www.ccr.ro/congres/raportgeneraleng.pdf>):

¹³ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել այդ հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետևանքները կանխելու ուղղված միջոցառումները:

¹⁴ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2007/index.htm>:

¹⁵ Այդ առումով հիշատակման է արժանի Լատվիայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ քանի դեռ վիճարկվող դրույթն ուժի մեջ է, այն պետք է կիրառվի՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի որոշմամբ ամրագրված սկզբունքները (տե՛ս CDL-JU(2008)028, Authority of the Constitutional Court as the Precondition of Execution of the Decisions // Report by Gunârs Kûtris, Strasbourg, 2 September 2008, <http://www.venice.coe.int/docs/2008/CDL-JU%282008%29028-e.pdf>, էջ 4):

¹⁶ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**CONSIDERATIONS ON THE ISSUES OF THE ENTRY
OF THE RA CONSTITUTIONAL COURT
DECISIONS INTO FORCE****Anahit MANASYAN**

*Assistant to the President of the
Constitutional Court of the RA,
Postgraduate student at the Chair of
Constitutional Law of YSU*

The article considers several contemporary issues concerning the entry of the RA Constitutional Court decisions into force. The author paid special attention to not uni-

form application of the notions “publication” and “announcement” in current legal regulations. The article also considers the issues of postponing of the invalidation of the unconstitutional act and of the human rights protection in the mentioned context on the basis of new circumstances.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

**ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹԻՐԱԽ**

Արթուր ԴԱՆԻԵԼՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Իրավական մշակույթի և միջազգային իրավունքի փոխհարաբերության համատեքստում, կարծում ենք, հարկ է հիմք ընդունել այն ելակետային դիրքորոշումը, ըստ որի՝ գրեթե գոյություն չունի բացարձակ փակ իրավական մշակույթ, քանզի յուրաքանչյուր ազգային իրավական համակարգ այս կամ այն չափով գտնվում է միջազգային իրավունքի ազդեցության ներքո: Ինչպես նկատել է իրավագետ Ի.Լուկաշուկը. «Միջազգային իրավունքն աստիճանաբար դուրս է գալիս դիվանագիտության շրջանակներից, սկսում է ներագդել զանգվածային գիտակցության, հասարակական կարծիքի ձևավորման վրա, որի աջակցությունից են մեծ չափով կախված միջազգային իրավունքի արդյունավետությունը, հետևաբար և՛ միջազգային հիմնախնդիրների լուծման հաջողությունը»¹:

Կարծում են՝ այդ ազդեցությունը բնավ չի դրսևորվում միայն միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխան ազգային օրենսդրություն ձևավորելու տեսքով: Ներկայիս գլոբալիզացիայի պայմաններում, տարածաշրջանային, կրոնական, էթնիկական ու նմանաբնույթ այլ հիմքերով թելադրված, առանձնահատուկ իրավական համակարգ ունեցող բազմաթիվ երկրներ փորձում են ձևավորել այնպիսի ազգային օրենսդրություն ու պետական համակարգ, որոնք ոչ թե միտված են մի-

ջազգային չափանիշների գերակայության ապահովմանը, այլ՝ հենց նույն միջազգային իրավունքին հնարավորինս «հուսալի» դիմակայելուն, այսինքն՝ այնպիսի քաղաքականություն իրականացնելուն, որը կբացառի կամ զոռնե կնվազեցնի միջազգային իրավունքի «վտանգավոր ոտնձգությունը» ազգային օրենսդրության նկատմամբ²:

Մենք դեռ կանդրադառնանք վերը նշված գաղափարախոսության ակունքներին, սակայն այս փաստական տվյալները բավարար են եզրակացնելու համար, որ միջազգային և ազգային իրավական համակարգերի փոխազդեցությունը մեծապես պայմանավորված է այս կամ այն երկրում ձևավորված ազգային իրավական մշակույթով: Այլ կերպ ասած՝ ոչ միայն միջազգային իրավունքն է ներագդում իրավական մշակույթի ձևավորման վրա, այլև իրավական մշակույթն է պայմանավորում միջազգային և ազգային իրավական համակարգերի փոխհարաբերության բնույթն ու սահմանները:

Գիտագործնական վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային իրավունքը ազգային իրավական մշակույթի վրա կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ներազդեցություն:

Որպես դրական ներազդեցության արդյունք կարող են համարվել այնպիսի ինստիտուտների ու իրավական սկզբունքների ամրագրումը, ինչպիսիք են պետությունների ինքնիշխանությունն ու հավասարությունը, ուժի կիրառման և ուժի սպառնալիքի անթույլատրելիությունը, ներքին գործերին չմիջամտելը, մարդուն, նրա արժանա-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

պատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելը, միջազգային խաղաղ գոյակցությունը և այլն: Բնական է, որ միջազգային իրավունքի ազդեցությամբ պետությունները որոշ չափով կորցնում են իրենց ինքնիշխանությունը, սակայն վերջիններս ձեռք են բերում կախվածություն ոչ թե իրենց նկատմամբ կիրառված ուժից, այլ համընդհանուր համաձայնությամբ ձևավորված միջազգային նորմերից³: Կարծում ենք՝ այս հանգամանքը միջազգային կալուցության և իրավակարգի երաշխիքն է:

Իհարկե, բազմաթիվ դեպքերում (բնական լայնագանգված աղետներ, համաճարակներ և այլն) պետությունների միջազգային համագործակցությունը խստորեն չի համապատասխանում միջազգային իրավունքի նորմերին, քանզի պարզապես գործում են ավանդույթի ու սովորույթի հենքով թելադրված համամարդկային արժեքներն ու սկզբունքները⁴: Այդպիսի դեպքերում անգամ թշնամական պետությունները հաճախ մի կողմ են թողնում իրենց տարածայնություններն ու հակասությունները և ձգտում են, միջազգային իրավունքի որոշ ձևական իրավական կարգավորումները մի կողմ թողած, հումանիտար օգնություն ցուցաբերել աղետի զոհ դարձած մարդկանց: Այս բնույթի միջազգային համագործակցությունը լավագույն միջոց է, որ յուրաքանչյուր մարդ ընկալի, որ ինքը ոչ թե սոսկ մի էթնիկական խմբի, անգամ պետության, այլ համաշխարհային հանրության մասնիկն է և գտնվում է համամարդկային արժեքների պաշտպանության ներքո:

Պետությունների խախաղ գոյակցության համար կարևոր գործոն են բնապահպանական արդի մարտահրավերները: Ընդ որում, վերջին 20 տարիների ընթացքում արմատապես փոխվել են զարգացող պետությունների դիրքորոշումները այս հիմնախնդիրների նկատմամբ: Բնորոշ է այն,

որ 2012 թ. հունիսի 20-22-ին ՄԱԿ-ի՝ «Կալուցության զարգացմանը նվիրված «Ռիո-20» գագաթնաժողովում զարգացող երկրների ներկայացուցիչները դրսևորել են աննախադեպ անհունդուրժողականություն բնապահպանական լայնածավալ խախտումների առնչությամբ այն դեպքում, երբ 20 տարի առաջ նույն թեմային նվիրված գագաթնաժողովում վերջիններս որպես ելակետ էին ընդունում այն դիրքորոշումը, ըստ որի՝ զարգացած երկրները բնապահպանական հիմնախնդիրների թեմային իբր արհեստականորեն են արդիականություն հաղորդում, որպեսզի տնտեսական կախվածության մեջ թողնեն զարգացող երկրներին (այդ մասին ՀՀ կառավարության մասնուլի կենտրոնում 2012 թ. հուլիսի 10-ին հայտնել է գագաթնաժողովի մասնակից, «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ նախագահ Կ.Դանիելյանը)⁵:

Մենք բերեցինք միայն մասնավոր օրինակ, սակայն ցանկացած այլ ոլորտում պետությունների մոտեցումների էվոլյուցիայի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները կարող են վկայել այն մասին, որ ազգային իրավական մշակույթը բազմաթիվ երկրներում վերջին շրջանում դարձել է խիստ հարափոփոխ: Կարծում ենք՝ սոցիալական կյանքին բնորոշ գործընթացների համեմատաբար արագ փոփոխվող հատկանիշը փոխկապակցված է տնտեսական ու տեխնիկական համակարգերում տեղի ունեցող երևույթներով: Որքան էլ սոցիալ-հոգեբանական երևույթներին բնորոշ լինի զարգացման համեմատաբար դանդաղ գործընթաց, միևնույնն է, դրանք այս կամ այն չափով պետք է համահունչ լինեն մյուս համակարգերում տեղի ունեցող խոշոր ու արագընթաց երևույթներին:

Սի խոսքով, կարելի է անդրադառնալ միջազգային իրավունքի բազմաթիվ այլ դրական բաղադրիչների, սակայն այս կարգի հարցադրումները համապատասխան մասնագիտական գրականությունում

բավականին խորը հետազոտված են, ուստի անդրադառնանք միջազգային և ազգային իրավական համակարգերի փոխազդեցության նաև բացասական դրսևորումներին, որոնք էլ ավելի մեծ չափով են կանխորոշվում ազգային իրավական մշակույթով:

Որքան էլ միջազգային համագործակցության արդյունքներն աստիճանաբար ավելի ու ավելի տեսանելի են դառնում, որքան էլ ավելի հաճախ ենք լսում համաշխարհային պատերազմների, ռազմական մեծածավալ բախումների անհավանականության մասին, միևնույնն է, աշխարհը դեռևս շարունակում է մնալ խիստ տարանջատված, իսկ միջազգային հանրության առանձին սուբյեկտներ միշտ չէ, որ համակրում են հանրահայտ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքակրթության և ժողովրդավարության մեծ փորձ ու ավանդույթներ ունեցող պետությունների նախաձեռնությունները: Ընդ որում, գլոբալիզացիոն գործընթացներին զուգահեռ նոր թափ են հավաքում հակազլոբալիզացիոն գործընթացները: Մասնավորապես, միգրացիոն երևույթների աննախադեպ աճի պարագայում մարդկային հոծ զանգվածներ հայտնվում են միանգամայն նոր բնակլիմայական, քաղաքակրթության ու բորայա հոգեբանական պայմաններում⁶: Այս երևույթը, մեր կարծիքով, առանց այդ էլ ինքնըստինքյան առաջացնում է որոշակի բարոյա հոգեբանական բարդություններ, իսկ երբ դրանց ավելանում է ընդունող պետություններում վերջին շրջանում սկիզբ առած այնպիսի քաղաքականությունը, որը միտված է հնարավորինս սահմանափակելու միգրացիոն երևույթները, ապա այդ համատեքստում միջլեռնակական ու միջկրոնական հարաբերություններն էլ ավելի են սրվում, էլ ավելի է հասունանում անվստահությունը միջազգային կառույցների և դրանց անդամ պետությունների քաղաքականության նկատմամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջազգային իրավունքի ակտիվացման,

նորանոր տարածաշրջաններ ու իրավական հիմնահարցեր ներգրավելու հետ մեկտեղ էլ ավելի նկատելի ու հիմնավոր են դառնում դրան դիմագրավելու՝ հակառակորդների նկրտումները:

Այս առնչությամբ միանշանակ են նաև միջազգային իրավունքի մասնագետների տեսակետները, հատկապես՝ արևմտյան ու արևելյան մտածելակերպի, իրավագիտակցության ու իրավական մշակույթի կտրվածքով: Մասնավորապես, հանրահայտ է այն տեսակետը, ըստ որի՝ հիշյալ իրավական մշակույթներն էապես տարբերվում են միմյանցից և ակնհայտ հակասության մեջ են: Ընդ որում, արևմտյան իրավական մշակույթը ներկայումս հակված է ինքնիշխանության որոշ տարրերի սահմանափակմանը, մինչդեռ արևելյան իրավական մշակույթում գերիշխում է Արևմուտքից հնարավորինս տարանջատվելու խնդրի հետևողական լուծման անհրաժեշտության մտայնությունը: Ըստ ռուս իրավագետ Վ. Խիժնյակի. «Արևելքը չի ընդունում սեփական հիմքերը ցնցած արևմտյան կենսակերպը, և այդ հիմնախնդրի լուծումը դեռևս չի գտնվել»⁷: Այս և նմանաբնույթ այլ տեսակետները կարող են և խիստ ծայրահեղական համարվել, սակայն ամբողջ խնդիրն այն է, որ այս տեսակետը գրեթե նույնությամբ կիսում են ասիական բազմաթիվ երկրների ճանաչված իրավագետներ ու պատասխանատու քաղաքական գործիչներ⁸:

Այս տարածաշրջանի երկրներում արևմտյան իրավական արժեքների ու մշակույթի նկատմամբ ձևավորված մոտեցումները, կարծում ենք, պայմանավորված են կրոնական, էթնիկական և պատմաքաղաքական նախադրյալներով: Ընդ որում, ասիական երկրներում գերիշխող իրավագիտակցության համաձայն՝ արևմտյան իրավական արժեքները հետապնդում են ոչ թե համամարդկային, այլ բացառապես աշխարհում տիրապետող դիրք ունեցող պետությունների շահերի պաշտպանության նպատակ, ըստ այդմ էլ՝ եվրոպական մի-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ջազգային իրավունքն ակնհայտ ժխտողական վերաբերմունք ունի ասիական իրավական մշակույթի նկատմամբ, ինչի արդյունքում անգամ ասիական պետությունների մասնակցությամբ որևէ միջազգային իրավական փաստաթղթում չեն արտացոլվում ասիական իրավական մշակույթի արժեքները:

Իրավագիտության աղբյուրներում կարելի է հանդիպել վերը նշված տեսակետի հիմնավորման տարբեր փորձերի, սակայն նպատակահարմար է անդրադառնալ Սինգապուրի Ազգային համալսարանի պրոֆեսոր Մ. Սորնարայաի դիրքորոշմանը. «Ասիական պետությունները պետք է ունենան բավականին ուժեղ կենտրոնացված իշխանություն, որպեսզի ունակ լինեն պաշտպանելու իրենց շահերը, և ոչ թե հետևեն այն կազմակերպությունների հրահանգներին, որոնք ղեկավարվում են գերիշխող երկրների կողմից: Ժողովրդավարության առնչությամբ արևմտյան իրավական հայեցակարգի համաձայն՝ մարդու իրավունքները պետք է գերակայող լինեն, ինչը բացարձակապես չի ընդունվում բազմաթիվ ասիական երկրների կողմից: Ընդհանուր զարգացման և էթնիկական հարցերի վերաբերյալ ասիական հիմնախնդիրներն էապես տարբերվում են Եվրոպայի առջև ծառայած մարտահրավերներից»⁹:

Պատկերն առավել ամբողջական դարձնելու նկատառումով, կարծում ենք, արժե ներկայացնել վերը նշված հիմնահարցի վերաբերյալ նաև Չինաստանի միջազգային իրավունքի փոխնախագահ Լի Ցիաոչիի տեսակետը. «Արդի միջազգային իրավունքը Չինաստանի և Արևմուտքի միջև հարաբերությունների վրա ունեցել է առավելապես ապակառուցողական, քան կառուցողական ներազդեցություն: Ընդ որում, այդ բնույթի արդյունքները հանդիսանում են Չինաստանի իրավական համակարգին հարկադրաբար այնպիսի խորթ ու անըն-

դունելի իրավական ինստիտուտների պարտադրմամբ, ինչպիսիք են՝ ինքնիշխանությունը, անկախությունը և հավասարությունը: Արտաքին ագրեսիան Չինաստանին դրդեց դիմելու միջազգային հարաբերություններում լուրջ միջոցների, որպեսզի մեր երկիրը ձերբազատվի մեզ համար ակնհայտ անշահավետ պայմանագրային պարտավորություններից և ստեղծվի կոնֆուցիոսիզմի գաղափարներով ղեկավարվող ուժեղ և միավորված Չինաստան»¹⁰:

Արևմտյան իրավական մշակույթի բազմաթիվ տարրերի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը նկատելի է նաև ռուսական իրավագետների մոտ: Այսպես, օրինակ, անդրադառնալով տնտեսական գործընթացներում պետության դերակատարման խնդրին՝ ռուս առանձին իրավագետներ նկատել են. «Տնտեսության կառավարման ոլորտում պետության ավանդաբար մեծ դերը, ինչը մշտապես բնորոշ է եղել ռուսական պետականությանը, հանրության մեծամասնության իրավական հոգեբանության կտրվածքով անընդունելի է համարվում արևմտյան իրավական մշակույթի չափանիշներով մասնավոր սեփականության ինստիտուտը»¹¹:

Այսպիսով, արևմտյան իրավական մշակույթի ջատագովների հավաստիացումներն այն մասին, որ եվրոպական իրավունքը կառուցված է ոչ թե արևմտյան եվրոպական երկրների իրավական արժեքների, այլ՝ համամարդկային արժեքների, բազմաթիվ առաջավոր ավանդույթների վրա¹², բազմաթիվ ասիական երկրներում, որոշ հետխորհրդային երկրներում և այլն համարժեք ընկալման չի արժանանում:

Բոլոր դեպքերում, ներկա քաղաքական ու իրավական զարգացումները վկայում են այն մասին, որ հիշյալ երկրների իրավական մշակույթը, փաստորեն, հակված լինելով ժխտելու արևմտյան իրավական մշակույթը, այնուամենայնիվ այս կամ այն չափով դրսևորում է հանդուրժողականություն, ինչը գնահատվում է որպես միջազ-

գային հարաբերություններում ծայրահեղ մեկուսացվածության չենթարկվելու և դրանով պայմանավորված՝ բացասական հետևանքները չհաղթահարելու մտավախությամբ:

Կարծում ենք՝ այս փոխհարաբերություններում առավել հանդուրժողականություն և ապահովվելու նկատառումով հարկ կլինի հնարավորինս ուշադիր լինել արևմտյան իրավական մշակույթին անմիջականորեն չհարած պետությունների իրավական մշակույթի նկատմամբ: Վերջին հաշվով, չի կարելի բացառել, որ, օրինակ, ասիական իրավական մշակույթում առկա են բազմաթիվ համամարդկային իրավական արժեքներ, որոնք կարող են անարգել կիրառելի լինել նաև արևմտյան քաղաքակրթության համակարգերում, սակայն արևմտյան իրավական մշակույթի շրջանակներում դեռևս չի ձևավորվել անհրաժեշտ կամք, որը միտված կլինի հիշյալ մշակույթի համարժեք ուսումնասիրությանը և դրանց համամարդկային բնույթ ունեցող հիմնադրույթները միջազգային իրավական փաստաթղթերում ներառելուն:

Անվստահության տեղիք են տալիս նաև միգրացիոն երևույթների աննախադեպ աճով պայմանավորված արևմտյան պետություններում միգրանտ օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ նախկին հանդուրժողական քաղաքականության վերանայման փորձերը: Ինչ խոսք, այդ քայլերը, որքան էլ դրանք հիմնավորված լինեն ու իրավաչափ համարվեն, որոշակի շրջաններում համակրանք չեն վայելում և ընկալվում են որպես երկակի ստանդարտների կիրառման դասական օրինակ:

Վերը նշված հակասությունները, բացի հիշյալ բնույթի նախադրյալներից ու գործոններից, մեր կարծիքով թելադրված են նաև միջազգային իրավունքի ձևավորման ու զարգացման գործընթացում ինչպես իրավական հոգեբանության, այնպես էլ իրավունքի մյուս ճյուղերի, հատկապես իրավունքի ու պետության տեսության հիմնադրույթների նկատմամբ ոչ համարժեք

վերաբերմունքով: Ի դեպ, միջազգային իրավունքի ձևավորմանն ու զարգացմանն առնչվող հիմնախնդիրները փոքր-ինչ այլ բացատրություններով նկատել են նաև արտասահմանյան բազմաթիվ իրավագետներ¹³:

Ընդհանրապես, միջազգային իրավունքի ինստիտուտներն ազգային իրավական համակարգ ներդնելու գործընթացը կարող է հաջողություն գրանցել միայն հանրության իրավագիտակցության պատշաճ ուսումնասիրության, ակնկալվող ուղղություններով զարգացման և հաշվառման արդյունքում: Այս առնչությամբ խիստ կարևոր ու հիմնավորված դիտարկումներ է ներկայացրել Գ. Յարոլայունյանը, որը, անդրադառնալով միջազգային իրավունքի չափանիշների ներդրմանը, պատկերավոր նկատել է. «... միանգամայն անհեռանկար է նաև, երբ շեշտը դրվում է ժողովրդավարության «ներմուծման» ճանապարհով իրավական հեղափոխություն իրականացնելու վրա՝ առանց վերջինիս համար անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների ստեղծման: Դա կարող է հանգեցնել միայն անհաջող նմանակման: Խնդիրը պետք է լուծվի ոչ միայն մտայնության կամ քաղաքական գիտակցության մակարդակում, այլև պետք է հաղթահարվեն իմացաբանական աղճատումները: Յետևաբար, իրավական ժողովրդավարական պետության կայացման ամենակարճ ճանապարհը ոչ թե դարերի վրայից ցատկելու անպտուղ փորձն է կամ որոշակի արժեքներ ու սկզբունքներ հայեցական ընկալումներից ելնելով թղթային կարգախոսի ու առկա իրողությունների քողարկման միջոց դարձնելը, այլ քաղաքացիական հասարակության եվրոպական արժեքները սեփական արժեքային համակարգի ու ազգային սահմանադրական մշակույթի շրջանակներում ճանաչելն ու հետևողականորեն, հաստատական հասարակության անդամների իմաստավորված սեփականությունը դարձնելը»¹⁴:

Նպատակահարմար ենք գտնում նաև

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նկատել, որ հաճախ ներդրման համար ընտրված ժողովրդավարության այս կամ այն ինստիտուտի առնչությամբ անզամ քաղաքական, մասնագիտական իրավագիտակցությունը բավարար չափով պատրաստված չի լինում, ինչի մասին են վկայում դրանց արդյունքում ընդունված օրենսդրական ակտերում արդեն հետագայում անհարկի կատարվող մեծաքանակ փոփոխություններն ու միջազգային փորձագետների բացասական կարծիքները:

Այսպիսով, կոնկրետ մեր երկրի իրավական մշակույթը մեզ հուշում է, որ գերխնդիրը իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ ոչ բավարար վստահությունն է, ինչը զգալիորեն զիջում է ժողովրդավարության ճանաչում ունեցող պետությունների նույնական ցուցիչներին, և ինչի պատճառով, որոշակի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությամբ հաճախ այլ երկրները դիտվում են ոչ միայն պարզապես առավել հուսալի, այլև արտագաղթը «խրախուսող» գործոն:

Ազգային իրավական մշակույթը ոչ միայն ձևավորվում է միջազգային իրավունքի ներազդեցությամբ, այլև բազմաթիվ ասպեկտներով կանխորոշում է միջազգային իրավունքի էվոլյուցիան: Մասնավորապես, հաշվի առնելով դեռևս անհրաժեշտ իրավական մշակույթ չունեցող հետխորհրդային երկրների անդամակցության փաստը միջազգային կազմակերպություններին, միջազգային իրավական փաստաթղթերն զգալիորեն վերանայվեցին և համապատասխանեցվեցին նոր պահանջներին:

Միջազգային իրավունքի սկզբունքների և այլ հիմնադրույթների վերոհիշյալ վերանայումները հատկապես ցավոտ են ընկալվում մեր երկրում՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնախնդրի լուծման հարցում որդեգրած ա-

նորոշ, իսկ երբեմն էլ՝ երկակի չափանիշներով իրականացվող քաղաքականությամբ:

Ազգային իրավական մշակույթում միջազգային իրավունքի ու միջազգային կառույցների նկատմամբ անվստահության տարրերի մի մասն էլ թելադրված է հայ ժողովրդի համար խիստ էական նշանակություն ունեցող մեկ այլ խնդրի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման իրավիճակով: Այս հարցում դարձյալ ազգային իրավագիտակցությունը հակված է այն տեսակետին, որ միջազգային իրավունքը լիարժեք հնարավորություն է տալիս իրավական եղանակներով դատապարտելու Հայոց ցեղասպանությունը և երաշխավորելու դրանով թելադրված իրավական հետևանքները, սակայն գործնականում միջազգային կազմակերպություններն այս հարցում ևս դրսևորում են երկակի չափանիշներ: Ընդ որում, երկակի չափանիշների մասին դատողություններն ավելի քան հիմնավորված են դառնում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովրդավարության և քաղաքակրթության հարուստ փորձ ունեցող առանձին երկրներ ոչ միայն պաշտոնապես ճանաչում են Հայոց ցեղասպանությունը, այլև ընդունել են այն հերքելու համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենքներ:

Այսպիսով, համոզված ենք, որ Լեռնային Ղարաբաղի և Հայոց ցեղասպանության հարցերում միջազգային կազմակերպությունների կողմից պատշաճ ու իրավական դիրքորոշում ցուցաբերելու դեպքում արժատապես կվերանայվի դրանց նկատմամբ ազգային իրավական մշակույթը:

Ամփոփելով միջազգային և ազգային իրավական համակարգերի համատեքստում իրավական մշակույթի ձևավորման հիմնախնդիրներին մվիրված նյութի հետազոտության արդյունքները՝ կարող ենք համակարգված տեսքով ներկայացնել որոշ եզրահանգումներ.

1) միջազգային իրավունքը ներկայումս միատարր չէ, ձևավորվել են մի քանի համակարգեր, որոնց միջև հակասություններ

րը մեղմելու, իսկ հետագայում բացառելու միակ ընդունելի ճանապարհը ոչ թե առկա իրավական համակարգերն անտեսելն է ու բացառապես արևմտյան իրավական համակարգերի արժեքներին նախապատվություն տալն է, այլ մյուս իրավական համակարգերը համարժեքորեն ուսումնասիրելն ու դրանցում առկա համամարդկային արժեքները միջազգային իրավունքի հիմնադրույթները մշակելիս պատշաճ կարգով հաշվի առնելն է,

2) արևմտյան միջազգային իրավունքի և միջազգային կազմակերպությունների նկատմամբ որոշ տարածաշրջանների իրավական մշակույթի անհանդուրժողականությունը փաստ է և թելադրված է կրոնական, էթնիկական, պատմաքաղաքական նախադրյալներով: Ընդ որում, այդ իրավիճակին նպաստում է նաև արևմտյան իրավական մշակույթը, որը դեռևս հակված չէ այլ իր իրավական համակարգի զարգացման և համամարդկային շահերի համակարգի զարգացման տարրեր փնտրել այլ իրավական համակարգերում,

3) մեր երկրում ազգային իրավական մշակույթը, ընդհանուր առմամբ, միջազգային իրավական համակարգը գնահատում է որպես ընդօրինակման տեսանկյունից ընդունելի, ազգային իրավական համակարգի համեմատ առավել նախընտրելի, սակայն համազգային արժեք ու նշանակության երկու խոշոր հիմնախնդիրների առնչությամբ երկակի չափանիշներ կիրառելու երևույթը հանգեցրել է մի իրավիճա-

կի, երբ ազգային իրավական մշակույթը հիշյալ կտրվածքով ձեռք է բերել անվստահության տարրեր,

4) միջազգային իրավական առանձին լուծումների առնչությամբ ազգային իրավական մշակույթում ձևավորված դիմադրությունը մեծ մասամբ թելադրված է ոչ այնքան դրանց և ազգային ավանդույթների միջև առկա հակասություններով, որքան պետական համակարգի բարելավմանն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված իրավական դրույթների առնչությամբ սուբյեկտիվ դրսևորումներով,

5) միջազգային իրավունքի չափանիշների ու սկզբունքների ներդրման գործընթացում հարկ է համարժեք ուշադրություն դարձնել ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրային իրավագիտակցության հարթություններում դրանց լիարժեք ճանաչման ու ընկալման վրա:

Այսպիսով, ցանկացած ազգային, անգամ փակ իրավական մշակույթ ամբողջովին մեկուսացված չէ և գտնվում է համաշխարհային զարգացումների ազդեցության ներքո, և որպեսզի այդ զարգացումների ներազդեցությունը շահեկան լինի, հարկ է որոշ չափով վերանայել ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային իրավական համակարգի ձևավորման ու զարգացման գիտագործնական ու իմացաբանական չափանիշները, որոնց առնչությամբ մենք փորձեցինք ներկայացնել մեր նկատառումները:

¹ St'u Лукашук И.И., Современное право международных договоров: В 2 т., Т. 1. Заключение международных договоров. М., 2004, էջ 61:

² St'u Zhaojie L., Legacy of Modern Chinese History: relevance to the Chinese Perspective of the Contemporary International Legal Order // Singapore Journal of international and Comparative Law. 2001. Vol. 5 էջ 315: Sornarajah M. The Asian Perspective to International Law in the Age of Globalization // Singapore Journal of international and Comparative Law. 2001. Vol. 5. էջ 311:

³ St'u Рыбаков Ю., Скотников Л., Змеевский А., Примат права в политике // Международная жизнь. 1989. N 4, էջ 61-62:

⁴ St'u Adjami M.E., African Courts, International Law, and Comparative Case Law: Chimera or Emerging Human Rights Jurisprudence? // Michigan Journal of International Law. 2002. Vol. 24, էջ 119:

⁵ St'u <http://www.gov.am/am/news/item/9736/>:

⁶ St'u Поленина С.В., Мультикультуризм и права человека в условиях глобализации // Государство и право. 2005, N 5. էջ 70-71:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- ⁷ Տե՛ս Хижняк В.С. Международное право и российский конституционализм // Московский журнал международного права. 2004. N 2. էջ 210:
- ⁸ Առավել մանրամասն այդ տեսակետները վերլուծվել են հետևյալ աշխատությունում՝ Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности / Пер. с фр. В.А. Туманова. М., 1999, с 373.
- ⁹ Տե՛ս Sornarajah M. The Asian Perspective to International Law in the Age Globalization // Singapore Journal of International and Comparative Law. 2001. Vol. 5. էջ 312:
- ¹⁰ Տե՛ս Zhaojie L. Legacy of Modern Chinese History: Its Relevance to the Chinese Perspective of the Contemporary International Legal Order // Singapore Journal of International and Comparative Law. 2001. Vol. 5. էջ 317:
- ¹¹ Տե՛ս Поленина С.В., Гаврилов О.А., Колдаева Н.П., Лукьянова Е.Г., Скурко Е.В. Воздействие глобализации на правовую систему России // Государство и право. 2004. N 3. էջ 14:
- ¹² Տե՛ս Weeramantry S.G. Keynote Address. Symposium Issue: International Law and the Developing World: A Millennial Analysis // Harvard International Law Journal. 2000. Vol. 41. էջ 281:
- ¹³ Տե՛ս, օրինակ, Spiro P.J. Globalization, International Law, and the Academy // New York University Journal of International Law and Politics. 2000. Vol. 32., էջ 578:
- ¹⁴ Տե՛ս Հարությունյան Գ.Գ., Նշված աշխատությունը, էջ 138:

THE LAW CULTURE AS THE INTERNATIONAL TARGET

Arthur DANIELYAN

The post-graduate of Armenian Academy of Science philosophy, sociology and law institute department

In this article the author researched the role of law culture in the national and international relationships and display according to the international law culture. The author paid attention to the statement of the questions such as: a) the negative and positive aspects of influence in the international and national law culture to each other; b) the positive changes of the international law in the developing countries; c) in some places of the West European countries law system and from their side the formation of international office documents and the trust to them; d) the formation of worldwide values and their necessity and ets.

The authors point of view on the formation of world wide values and their necessity in the international law culture and its improvement is great; but still, till now the same axle statement is not pulling up with each other. According to the authors viewpoint this situation comes from the neglect

policy of West European countries and the USA in spite of the traditional positive solutions of issues from one side and in the same regions it becomes visible, the tendency of solutions of the international law norms as it is useful to the above mentioned countries out of the world wide standards.

In particular the author fiends that to apply to the countries standards comes from national self-determination of law interpretation in the given situation. Moreover they are against of the national self-determination of law interpretation and apprehension especially that countries representatives who have a lot of boards (offices) and they try to solve the interethnic problems not by the help law, and not by the help of improving the standards of living, but by the help of using force against which, according to the authors viewpoint can not be perspective and realistic politics

In the last part of the article the author represented the summary of his main personal solutions which are related as in the international law effects so in national law and improving the issue of international law culture.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԴԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ԶԱՐՑԵՐ

Գևորգ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության իններորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, կապիտան

Հայաստանի Հանրապետությունում զինվորական իրավապահպան մարմինների իրավակիրառ պրակտիկայում արարքի որակման առումով (քրեական գործ հարուցելիս, անձին որպես մեղադրյալ ներգրավելիս, ոչ արդարացնող հիմքով քրեական գործ հարուցելը մերժելիս և այլն) հաճախակի են ստեղծվում դժվարություններ, երբ անհրաժեշտ է լինում իրավական գնահատական տալու ինչպես միմյանց հետ ստորադասության հարաբերությունների մեջ չգտնվող զինծառայողների, այնպես էլ պետ կամ ստորադրյալ հանդիսացող զինծառայողների կողմից միմյանց պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու դեպքերին, որոնք հասկանալի պատճառներով առավել հաճախ են հանդիպում բանակային առօրյայում: Նմանատիպ դեպքերը հնարավորինս նվազագույնի հասցնելու գործում, զինծառայողների հետ պարբերաբար կատարվող բարոյադաստիարակչական և իրավական ուսուցման միջոցառումներից զատ, չափազանց կարևոր նշանակություն ունի քրեական (պատժողական) ճիշտ քաղաքականությունը, որի իրականացման հիմնական դժվարությունները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) համապատասխան հոդվածների ճիշտ ընտրությամբ և կիրառմամբ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ քր.

օր-ի հատուկ մասի «Ձինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ բաժնի նույնանուն գլխի 358, 359, 360 և 375 հոդվածներին:

Քր. օր-ի 360 հոդվածը, որը վերնագրված է «Ձինծառայողին վիրավորանք հասցնելը», քրեական պատասխանատվություն է նախատեսում զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ մեկ այլ **զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելու համար** (առաջին մաս) և նույն արարքի համար, որը կատարվել է ստորադրյալի կողմից պետի, ինչպես նաև պետի կողմից ստորադրյալի նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ: Քր. օր-ի 360 հոդվածի վերլուծությունից երևում է, որ առաջին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ զինծառայողը, ով ստորադասության հարաբերությունների մեջ չէ այն զինծառայողի հետ, որին վիրավորանք է հասցնում, մինչդեռ քննարկվող արարքի համար քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև քր. օր-ի 359 հոդվածի առաջին մասով, որը վերնագրված է «Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում»: Մասնավորապես՝ հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան սահմանում է. «Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպ-

քում, որն արտահայտվել է **անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով**, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով»: Հարկ է նկատել, որ քր. օր-ի 359 հոդվածի սանկցիան զգալիորեն ավելի խիստ պատիժ է նախատեսում հիշյալ արարքի համար (առավելագույնը երեք ամիս ժամկետով կալանքի կամ առավելագույնը երկու տարի ժամկետով կարգապահական գումարտակում պահելու կամ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման ձևով), քան 360 հոդվածի առաջին մասի սանկցիան (նախատեսված է պատիժ առավելագույնը երկու ամիս ժամկետով կալանքի կամ առավելագույնը վեց ամիս ժամկետով կարգապահական գումարտակում պահելու ձևով): Ինչպես երևում է և՛ քր. օր-ի 359 հոդվածի առաջին մասում, և՛ 360 հոդվածի առաջին մասում խոսքը պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու մասին է, սակայն առկա են որոշակի տարբերություններ: Մասնավորապես՝ մի դեպքում (359 հոդված) խոսքը անձի, իսկ մյուս դեպքում (360 հոդված) զինծառայողի պատվի և արժանապատվության ստորացման մասին է: Թեև «անձ» հասկացությունն ավելի լայն է, քան «զինծառայող»-ը, այնուամենայնիվ քր. օր-ի 359 հոդվածում «անձ» տերմինը գրված է «զինծառայողի» իմաստով, քանի որ ստորացումը պետք է կատարվի զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտման ֆոնի վրա: Հաջորդ տարբերությունն այն է, որ քր. օր-ի 360 հոդվածի դիսպոզիցիայում խոսքը զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու **անպարկեշտ ձևի** մասին է, ինչն ակնհայտ վկայում է ստորացման առավել վտանգավորության մասին: Անհասկանալի է այդ բառակապակցության բացակայությունը քր. օր-ի 359 հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում այն դեպքում, երբ վերջինի սանկցիան զգալիորեն ավելի խիստ պատիժ է նախատեսում: Մյուս կողմից պետք է նշել, որ

դժվար է պատկերացնել անձի (զինծառայողի) պատվի և արժանապատվության ստորացման, այսպես ասած, ոչ անպարկեշտ ձև: Նման արարքն արդեն իսկ վկայում է դրա անպարկեշտության մասին: Կարծում են, որ «անպարկեշտ ձևով» բառակապակցության առկայությունը երկու հոդվածներում էլ ավելորդ է:

Քր. օր-ի 359 հոդվածը բլանկետային նորմ է, ուստի հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն իրավական ակտերը, որոնցում սահմանված են զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, և հղում անել դրանց, իսկ ՀՀ-ում այդպիսին է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը», որը հաստատված է «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» 1996թ. դեկտեմբերի 3-ին ընդունված ՀՀ օրենքով (այսուհետ՝ ՆԾԿ):

Այսպես, ՆԾԿ-ի 13 հոդվածը, որը գործում է «Ձինծառայողների ընդհանուր պարտականությունները» վերնագրի ներքո (7-րդ և 8-րդ պարբերություններ), սահմանում է, որ զինծառայողը (ինչպես ժամկետային պարտադիր, պայմանագրային, այնպես էլ սպաներն ու ենթասպաները) պարտավոր է. «Բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, չխնայելով կյանքը՝ ընկերներին փրկել վտանգից, նրանց օգնել խոսքով ու գործով, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, նրանց հեռու պահել անարժան արարքներից», «Պահպանել զինվորական հարգանքի, վարքի և զինվորական ողջույնի կանոնները, մշտապես լինել համազգեստով՝ մաքուր և խնամքով հագնված»: ՆԾԿ-ի 158 հոդվածը, որը գործում է «Ձինվորի պարտականությունները» վերնագրի ներքո, սահմանում է (3-րդ պարբերություն), որ զինվորը (վերաբերում է միայն ժամկետային պարտադիր զինծա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷ

ռայողներին) պարտավոր է. «Հարգանք ցուցաբերել հրամանատարների (պետերի) և ավագների նկատմամբ, հարգել ընկերների պատիվն ու արժանապատվությունը, պահպանել զինվորական քաղաքավարություն, վարքի և զինվորական ողջույնի կանոնները»: Իրավակիրառողները քր. օր-ի 359 հոդվածը կիրառելիս, որպես կանոն, վկայակոչում են վերը նշված կանոնները: Վերոգրյալից հետևում է, որ քր. օր-ի 359 հոդվածի առաջին մասով քրեական պատասխանատվությունը վրա է հասնում զինծառայողի կողմից ինչպես զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ, այնպես էլ առհասարակ զինվորական ծառայություն կրելիս հավասար պաշտոն (հաստիք) զբաղեցնող և զինվորական կոչում ունեցող համաժառայակցի (զինծառայողի) պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու ցանկացած դեպքում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ առկա պայմաններում իրավակիրառ պրակտիկայում քր. օր-ի 360 հոդվածի առաջին մասի նորմերն ըստ էության հնարավոր չէ կենսագործել, հետևաբար դրա գոյությունը քրեական օրենքում դառնում է ավելորդ:

Հարկ է նկատել նաև, որ ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու համար քր. օր-ի 359 հոդվածի առաջին մասի սանկցիան նույն պատիժն է նախատեսել նաև հիշյալ պայմաններում զինծառայողին ծաղրուծանակի ենթարկելու, հալածելու և բռնություն գործադրելու համար: Անվիճելի է, որ վերջին արարքներն առավել վտանգավոր են, ինչը պետք է հաշվի առնվի դատարանի կողմից պատիժ նշանակելիս:

Զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելը կարող է դրսևորվել տարբեր եղանակներով՝ հայիո-

յելով, ոչ կոռեկտ արտահայտություններ անելով կամ գրություններով, ժեստերով, ստորադասության հարաբերությունների առկայության դեպքում՝ նաև անօրինական հրաման կամ կարգադրություն տալով, տրված հրամանին կամ կարգադրությանը հակաճառող գործողություններով (օրինակ՝ ի պատասխան պետի՝ շարվելու հրամանի, ստորադրյալ զինծառայողը համաժառայակիցների ներկայությամբ քնծածողով հեռանում է): Այդ եղանակների շարքում ճնշող մեծամասնություն է կազմում զինծառայողին ապտակելը կամ հարվածելը: Այդպիսի դեպքերում, եթե զինծառայողների միջև չկա ստորադասության հարաբերություններ, արարքի որակաման հետ կապված խնդիրներ չեն առաջանում. գործում է քր. օր-ի 359 հոդվածը, մասնավորապես՝ կախված ապտակի կամ հարվածի բնույթից՝ դրանք դիտվում են կամ պատվի և արժանապատվության ստորացում (հիմնականում եթե դրանցով ֆիզիկական ցավ չի պատճառվում), կամ բռնության գործադրում, իսկ եթե ապտակի կամ հարվածի հետևանքով առողջությանը վնաս է պատճառվել, ապա, կախված վնասի ծանրության աստիճանից, արարքը որակվում է քր. օր-ի 359 հոդվածի համապատասխան մասով (կետով):

Խնդիրը դժվարանում է, երբ հարկ է լինում որակել արարքը, երբ պետ հանդիսացող զինծառայողը ստորացնում է իր ստորադրյալի պատիվն ու արժանապատվությունը՝ ապտակելու կամ հարվածելու եղանակով (մյուս եղանակների դեպքում արարքը քր. օր-ի 360 հոդվածի երկրորդ մասով որակելու համար որևէ խոչընդոտ չկա): Այս կոնտեքստում պետք է քննարկել քր. օր-ի 375 հոդվածի (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) կիրառման հնարավորությունը: Հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան սահմանում է. «Պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ

պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական (ճիշտ կլինե՞ր այստեղ լինե՞ր «դրդումներով» բառը-Գ.Խ.), անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)»: Ինչպես երևում է՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է շարժառիթը, որի դրսևորումները մեկը արարքն անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով կատարել է: Պետի կողմից պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու անձնական շահագրգռվածություն կարող է դիտվել, երբ պետը իր վերադասների դրական վերաբերմունքին արժանանալու համար փորձում է ամրապնդել ստորաբաժանման կարգապահությունը՝ ենթակաների մոտ իր թվացյալ գերազանցությունը ցուցադրելու միջոցով, որի դրսևորման ձևերից կարող են լինել ապտակը, հարվածը, ծեծը, այդ թվում՝ առողջությանը տարբեր աստիճանի վնասների պատճառմամբ (հաճախ նաև զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ): Քր. օր-ի 375 հոդվածի առաջին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հետևանքը, այսինքն՝ վերը նշված արարքի հետևանքով պետք է պատճառվի էական վնաս: Գույքային վնասի էական լինելը հոդվածի դիսպոզիցիայում հստակեցված է՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը կամ դրա արժեքը, այլ հարց է ֆիզիկական վնասի էական լինելու չափանիշներ գտնելը, ինչն օրենսդրությունն ամբողջությամբ թողել է իրավակիրառողին: Պրակտիկայում, որպես կանոն, արդարացիորեն էական վնաս է դիտվում

նկարագրված արարքի հետևանքով ստորադրյալ զինծառայողի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը (ծանր վնասը դիտվում է որպես ծանր հետևանք և որակվում քննարկվող հոդվածի երկրորդ մասով): Քիչ չեն դեպքերը, երբ պրակտիկայում էական վնաս է դիտվում ծեծը, ինչի հետ դժվար է համաձայնվել այն հիմնավորմամբ, որ ծեծը, լինելով պետի կողմից պաշտոնեական լիազորությունների անցման եղանակ, չի կարող միևնույն ժամանակ հանդիսանալ որպես հետևանք, ուստի առաջարկվում է, որ այն արարքները, երբ պետ հանդիսացող զինծառայողները, ելնելով անձնական շահագրգռվածությունից, անցնում են իրենց պաշտոնեական լիազորությունների սահմանը՝ ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադրյալին ապտակելու, հարվածելու կամ ծեծելու եղանակով, որոնց հետևանքով մարմնական վնասվածքներ չեն առաջացել կամ պատճառված մարմնական վնասվածքներն առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում, որակվեն քր. օր-ի 360 հոդվածի երկրորդ մասով:

Այլ է հարցը, երբ զինծառայողի ծեծը տեղի է ունենում ոչ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ, օրինակ, ստելու, ոչ կանոնադրային բնույթի՝ ծառայողական անհրաժեշտությամբ չպայմանավորված պահանջը չկատարելու համար և այլն: Նման պարագայում արարքը ճիշտ կլինի որակել քր. օր-ի 118 հոդվածով և ոչ թե 375 հոդվածի առաջին մասով, այսինքն՝ երբ ոտնձգությունը կատարվում է ոչ թե զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ զինծառայողին վիրավորելու, այլ դրան չառնչվող ֆիզիկական ցավ պատճառելու նպատակով:

Քր. օր-ի 360 հոդվածի երկրորդ մասի սանկցիան շատ ավելի խիստ է (պատիժ է նախատեսված առավելագույնը երեք ամիս ժամկետով կալանքի կամ առավելա-

ՔՐԵՎԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

գույնը մեկ տարի ժամկետով կարգապահական գումարտակում պահելու կամ առավելագույնը մեկ տարի ժամկետով ազատագրկման ձևով), քան 118 հոդվածինը (պատիժ է նախատեսված նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով տուգանքի կամ առավելագույնը երկու ամիս ժամկետով կալանքի ձևով), ուստի ծեծը վիրավորանքի շրջանակներում ներառելը և արարքը նշված հոդվածների համակցությամբ չորակելը քննարկվող պայմաններում ամենևին էլ սխալ չեն:

Արարքի որակմանը վերաբերող խնդիրներ են առաջանում նաև այն դեպքերում, երբ ստորադրյալ զինծառայողը զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ապտակում կամ հարվածում է պետին:

Քր. օր-ի 358 հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան սահմանում է. «Ձինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը»: Հաշվի առնելով սույն արարքի համար նախատեսված սանկցիայի խստությունը (պատիժ է նախատեսված առավելագույնը երեք տարի ժամկետով կարգապահական գումարտակում պահելու կամ առավելագույնը հինգ տարի ժամ-

կետով ազատագրկման ձևով), որը քր. օր-ի 360 հոդվածի երկրորդ մասով նախատեսված սանկցիայից անհամեմատ ավելի խիստ է, պետք է առավել նրբանկատ մտնեցում ցուցաբերել այս երկու հոդվածները միմյանցից սահմանազատելու հարցում: Ի տարբերություն քր. օր-ի 375 հոդվածի՝ 358 հոդվածը լուծել է ծեծի հետ կապված խնդիրը՝ այն ուղղակիորեն նախատեսելով հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում: Քանի որ «ծեծ» հասկացության բնորոշումը գործող օրենսդրությունը չի սահմանում, ինչպես քրեական իրավունքի տեսության մեջ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում ընդունված է, որ ծեծ, որպես այդպիսին, պետք է համարել անձին երեք և ավելի անգամ հարվածելը, այսինքն՝ մեկ կամ երկու անգամ ապտակելը կամ հարվածելը չի կարող դիտվել ծեծ: Հոդվածի տեսանկյունից դրանք այլ բռնության գործադրում նույնպես չեն կարող դիտվել, քանի որ ծեծը՝ երեք կամ ավելի հարվածը, հոդվածի դիսպոզիցիայում տարանջատված է այլ բռնություն գործադրելու դեպքերից (ծեռքերը ոլորել, մազերից քաշել և այլն), այսինքն՝ մեկ կամ երկու անգամ ապտակելը կամ հարվածելը դուրս է այս հոդվածի դիսպոզիցիայի շրջանակներից (չեն մտնում ոչ ծեծելու, ոչ էլ այլ բռնություն գործադրելու մեջ) և պետք է որակվի բացառապես քր. օր-ի 360 հոդվածի երկրորդ մասով՝ ներառվելով վիրավորանքի մեջ:

SOME PROBLEMS CONNECTED WITH THE APPLICATION OF ARTICLES 358, 359, 360 AND 375 OF THE CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Gevorg KHALATYAN

*Deputy of the Ninth Garrison Investigation
Division of Investigation Service of the
Ministry of Defence of the RA, Captain*

In the Republic of Armenia military law enforcement authorities often have problems while enforcement practice when it's necessary to give a legal assessment to both the servicemen who are not in the subordinate relationship with each other and those who are considered to be chief or sub-

ordinate servicemen, assessment connected with the matters concerning the humiliation of each other's honor and dignity, those matters which often happen in military everyday life. These difficulties are connected with proper choice and appliance of the corresponding articles of the Criminal Code of RA. A common practice connected with these matter hasn't been formed yet. In order to facilitate this problem somewhat the corresponding articles of the Criminal Code of RA have been analyzed with the appliance of comparative method as detailed as possible.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ
ՊԱՇՏՊԱՆՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔ**

Անդրանիկ ՄԱՅՏԱԿԱՆՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հանցակազմի լիարժեք բացահայտման համար, ի թիվս հանցակազմի մյուս տարրերի, կարևոր նշանակություն ունի տվյալ հանցակազմի օբյեկտի համակողմանի ուսումնասիրությունը:

Քրեական իրավունքի տեսության մեջ համընդհանուր ճանաչում է ստացել այն կարծիքը, համաձայն որի՝ հանցագործության օբյեկտ են համարվում հասարակական հարաբերությունները: Ընդ որում, հանցագործության օբյեկտ են այն հասարակական հարաբերությունները, որոնց դեմ ուղղվում և որոնց վնաս են հասցնում հանցագործությունները՝ կամ կարող են վնաս հասցնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում խուլիգանության, այն է՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու համար, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Նշված ձևակերպումից պարզ է դառնում, որ խուլիգանության օբյեկտը հասարակական կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Այս առումով չափազանց կարևորվում է «հասարակական կարգ» հասկացության էության բացահայտումը:

Պետության և իրավունքի տեսության

մեջ հասարակական կարգը բնութագրվում է որպես հասարակական հարաբերությունների ամբողջական համակարգ, որը ձևավորվում է սոցիալական նորմերի՝ իրավունքի, բարոյականության, ոչ իրավական սովորույթների, ավանդույթների և արարողակարգային նորմերի իրացման հետևանքով:

Սակայն քրեական իրավունքում, մեր կարծիքով, հասարակական կարգը որպես խուլիգանության օբյեկտ ընկալվում է առավել մեղ իմաստով, բայց այդ հասկացության վերաբերյալ մոտեցումները զգալիորեն տարբերվում են միմյանցից:

Որոշ հեղինակներ հասարակական կարգը նույնացնում են իրավակարգի հետ՝ այն բնութագրելով որպես իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ամբողջություն, որն ուղղված է հասարակական անդորրի, բարոյականության, փոխադարձ հարգանքի, հասարակական վայրերում քաղաքացիների պատշաճ վարքագծի և սոցիալական կապերի ուղորտի հարաբերությունների պաշտպանությանը³:

Հեղինակների մյուս մասը հասարակական կարգն ընկալում է որպես հասարակական վայրերում անձանց այնպիսի վարքագիծ և փոխհարաբերություն, որն ապահովում է կազմակերպությունների և իրավապահ մարմինների բնականոն գործունեությունը, առանձին քաղաքացիների անձնական իրավունքները, ինչպես նաև անձանց անորոշ շրջանակի իրավունքներն ու շահերը⁴:

Իսկ հեղինակների մեկ այլ խումբ այդ հասկացությունը կապում է այն հասարակական հարաբերությունների հետ, որոնք

ապահովում են հասարակական անդորրը, հասարակական վայրերում քաղաքացիների արժանավայել վարքագիծը, կազմակերպությունների և ձեռնարկությունների, հասարակական և անձնական տրանսպորտի բնականոն գործունեությունը, անձի անձեռնմխելիությունը⁶:

Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում «հասարակական կարգ» հասկացության էության բացահայտման համար չափազանց կարևոր նշանակություն ունի թիվ ԱՎԴ/0014/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը: Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես արձանագրել է, որ հասարակական կարգն ընկալվում է երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով հասարակական կարգը հասարակության մեջ առկա սոցիալական կապերի և հարաբերությունների համակցությունն է, որը ձևավորվում է սոցիալական, իրավական և բարոյական նորմերի գործողության արդյունքում, և յուրաքանչյուր հանցագործություն, զանցանք կամ այլ իրավախախտում այս կամ այն չափով հանգեցնում են դրա խախտման:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ խուլիգանության հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են նեղ իմաստով հասարակական կարգի բովանդակությունը: Իսկ նեղ իմաստով հասարակական կարգն ընկալվում է որպես հասարակական նշանակության վայրերում, այն է՝ տրանսպորտային միջոցների կայանատեղիներում, օդանավակայաններում, շուկաներում, պուրակներում, այգիներում, կինոթատրոններում, ցուցասրահներում, մարզադաշտերում, փողոցներում, հիմնարկ-ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում, հասարակական տրանսպորտում, հասարակական սննդի սպասարկման վայրերում, հասարակական նշանակության այլ վայրերում այնպիսի իրադրության առկայություն, որի պայմաններում

ապահովված է քաղաքացիների արժանավայել վարքագիծը, կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը, ինչպես նաև այդ վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը⁶:

Պետք է նկատել նաև, որ նեղ իմաստով հասարակական կարգի հիմնական առանձնահատկությունները, ըստ էության, հանգում են հետևյալին.

1) հստակեցված են այն վայրերը, որտեղ պետք է պահպանվի հասարակական կարգը,

2) կարգավորման է ենթարկված անձի նաև այն անհատական վարքագիծը, որն իրականում կարող է որևէ ուղղակի կապ չունենալ այլ անձանց վարքագծի հետ,

3) դրանում չեն ներառվում այն հասարակական հարաբերությունները, որոնք պահպանվում են կարգապահական կամ քաղաքացիաիրավական ներգործության միջոցներով:

Միաժամանակ պետք է նշել, որ «հասարակական կարգ» հասկացության էության հստակ բացահայտումը կարևորվում է հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմը իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Նման պայմաններում ուշադրության է արժանի ՀՀ սահմանադրական դատարանի այն մոտեցումը, ըստ որի՝ օրենքը պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը⁷: Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ օրենքներում օգտա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

գործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում:

Այսինքն՝ սույն դեպքում, հաշվի առնելով «հասարակական կարգ» հասկացության չափազանց ընդգրկուն և ընդհանրական բնույթը, պետք է քննության առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք այդ տեսանկյունից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմը, թիվ ԱՎԴ/0014/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով հանդերձ, համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին:

Հարկ է նկատել, որ թեև ՀՀ վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումը հիմնական կողմերով բացահայտում է հասարակական կարգի՝ որպես խուլիգանության օբյեկտի էությունը, այնուամենայնիվ դրանից պարզ չի դառնում, թե ինչպիսի սոցիալական կարգավորիչներով են սահմանվում հասարակական կարգի շրջանակներում անձի վարքագծի թույլատրելիության չափանիշները:

Ինչպես արդեն նշվեց, պետության և իրավունքի տեսության մեջ ընդունված մոտեցման համաձայն՝ հասարակական կարգը ձևավորվում է սոցիալական նորմերի՝ իրավունքի, բարոյականության, ոչ իրավական սովորույթների, ավանդույթների և արարողակարգային նորմերի իրացման հետևանքով, ինչը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նույնպես ընդունելի է համարվել՝ որպես լայն իմաստով հասարակական կարգ: Այսինքն՝ տվյալ դեպքում որպես հասարակական կարգի շրջանակներում անձի վարքագծի թույլատրելիության չա-

փանիշներ սահմանող սոցիալական կարգավորիչներ նշվել են ինչպես իրավական, այնպես էլ ոչ իրավական նորմերը:

Վերոգրյալի համատեքստում հատկապես կարևորվում է այն հարցի պարզաբանումը, թե արդյոք մեղ իմաստով հասարակական կարգի (խուլիգանության օբյեկտի) շրջանակներում անձի վարքագծի թույլատրելիության չափանիշները, բացի իրավական նորմերից, կարող են սահմանվել նաև այլ՝ ոչ իրավական նորմերով:

Նշվածի կապակցությամբ կարևորվում է հատկապես ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»: Նշված նորմից ուղղակիորեն բխում է, որ հասարակական կարգը պահպանելու անձի պարտականությունը, ինչպես նաև հասարակական կարգի շրջանակներում անձի վարքագծի թույլատրելիության չափանիշները կարող են սահմանվել բացառապես օրենքով, իսկ բարոյական, սովորույթային և ոչ իրավական այլ նորմերով սահմանված կանոնները խախտելու համար անձը չի կարող ենթարկվել իրավական պատասխանատվության: Հակառակ պայմաններում անձի իրավական պատասխանատվության հարցում կարող է ստեղծվել անորոշ վիճակ, քանի որ այդ դեպքում անձի պատասխանատվության հիմքը օբյեկտիվ իրավական չափանիշներից կարող է տեղափոխվել քրեական վարույթ իրականացնող մարմնի՝ բարոյական, սովորույթային և ոչ իրավական այլ նորմերի ընկալման սուբյեկտիվ դաշտ, ինչը որևէ կերպ չի կարող համատեղելի լինել իրավական պետության գաղափարի հետ:

Հատկանշական է նաև, որ տեսական գրականության մեջ արտահայտվել է այն տեսակետը, որ հանցագործության օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունները կարգավորվում և պաշտ-

պանվում են իրավունքի տարբեր ճյուղերի կողմից, բայց դրանց դեմ կատարվող առավել վտանգավոր ոտնձուխումներից (հանցագործություններից) պաշտպանությունն իրականացնում է քրեական իրավունքը⁹, ինչից նույնպես հետևում է, որ հասարակական կարգի հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ հասարակական կարգի շրջանակներում անձի վարքագծի թուլատրելիության չափանիշները կարող են սահմանվել միայն օրենքով:

Վերոգրյալի լույսի ներքո ուսումնասիրելով ՀՀ գործող օրենսդրությունը՝ պարզ է դառնում, որ առկա չէ ոչ միայն օրենք, այլև առահասարակ որևէ նորմատիվ իրավական ակտ, որն անձի համար սահմանում է հասարակական կարգը պահպանելու ընդհանրական պարտականություն: Ավելին, որևէ նորմատիվ իրավական ակտով անձանց համար չի սահմանվում հասարակական անխախտ կարգի պայմաններում գտնվելու ընդհանրական իրավունք, որի դեպքում ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի ուժով այլ անձանց վրա կարող էր դրվել այդ իրավունքը հարգելու պարտականություն:

Բացի այդ, ՀՀ-ում առկա չէ միասնական իրավական ակտ, որն ընդհանրական ձևով կարգավորում է հասարակական կարգի հետ կապված հարաբերությունները և սահմանում այդ հարաբերություններում անձանց թուլատրելի վարքագծի չափանիշները: ՀՀ գործող օրենսդրությամբ ընդհանրական ձևով կարգավորվում են հասարակական կարգի միայն առանձին ո-

լորտներ (ճանապարհային երթևեկություն¹⁰, ընտրական գործընթաց¹¹, հավաքների իրականացում¹² և այլն), ինչպես նաև առանձին իրավական ակտերով սահմանվում են հասարակական կարգի այս կամ այն ոլորտում անձի վարքագծի որոշակի կանոններ¹³:

Նման պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության հանցակազմը կհամապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, եթե անձանց վերագրվեն միայն հասարակական կարգի այնպիսի կոպիտ խախտումներ, որոնց չափանիշները հստակ սահմանված են ՀՀ գործող օրենսդրությամբ: Սակայն, կարծում ենք, առավել ճիշտ կլիներ, եթե ՀՀ-ում ընդունվեր հասարակական կարգի հետ կապված հարաբերություններն ընդհանրական ձևով կկարգավորող իրավական ակտ, որը հստակ կսահմաներ այդ հարաբերություններում անձանց թուլատրելի վարքագծի չափանիշները:

Այսպիսով, հասարակական կարգը՝ որպես խուլիգանությունից քրեաիրավական պաշտպանության ենթակա օբյեկտ, կարելի է բնութագրել որպես իրավական նորմերով ամրագրված՝ սոցիալական կապերի ոլորտում հասարակությունում ձևավորված հարաբերությունների ամբողջություն, որը սահմանում է հասարակական նշանակության վայրերում հասարակության անդամների արտաքին վարքագծի կանոնները:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Գ.Ս. Ղազինյանի խմբագրությամբ: ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2011, էջ 115:

² Տե՛ս Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն: «Գոշ» իրատարակչություն: Երևան, 1997, էջ 411:

³ Տե՛ս Уголовное право. Особенная часть. Под ред. Н.И. Ветрова, Ю.И. Ляпунова. М., 1998, էջ 410:

⁴ Տե՛ս Уголовное право России. В 2-х томах. Том 2. Особенная часть. Под ред. А.Н. Игнатова, Ю.А. Красикова. М., 1999, էջ 414:

⁵ Տե՛ս Уголовное право Российской Федерации. Особенная часть. Под ред. Б.В. Здравомыслова. М., 2001, էջ 263:

⁶ Տե՛ս թիվ ԱՎԴ/0014/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630 որոշումը:
- ⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍԴՈ-780 որոշումը:
- ⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Գ.Ս. Ղազինյանի խմբագրությամբ: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011, էջ 115:
- ¹⁰ Տե՛ս «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը և «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955 որոշումը:
- ¹¹ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք:
- ¹² Տե՛ս «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը:
- ¹³ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 13-րդ գլուխը, «Զենքի մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական ու ծառայողական զենքի և դրա փամփուշտների շրջանառությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 673 որոշումը:

SOCIAL ORDER AS A SOCIAL VALUE PROTECTED BY CRIMINAL LAW

Andranik MNATSAKANYAN

*Post-graduate student of the Chair of Criminal
Law of the Law Faculty of YSU*

The following article is devoted to the study of essence of social order as an object of criminal and legal protection from hooliganism. Particularly, the viewpoints on the notion of “social order” expressed by the Cassation Court of the RA, as well as in legal literature have been considered in the article. Among them broad and narrow meanings of the notion of “social order” have also been studied, on the basis

of which the specific characteristics have been emphasized.

Besides, the problems of the possible social regulators determining the criteria of the permitted personal behaviour within the frameworks of social order. Current RA legislation on social order, especially the legal acts defining the criteria of permitted personal behaviour in the frameworks of social order have been studied in the field of constitutional and legal regulations.

In the result of the above mentioned research suggestions have been made about matching the notion of “social order” used in the article 258 of the Criminal Code of the RA to the principle of legal certainty.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական

դատավարության ամբիոնի ասպիրանտ

Ժամանակակից աշխարհում սահմանադրական ժողովրդավարության հիմնական հենասյուներ համարվող մարդու իրավունքները և ազատությունները կկրեին ընդամենը հռչակագրային բնույթ, եթե ապահովված չլինեին իրավունքների պաշտպանության և վերականգնման արդյունավետ ընթացակարգերով: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում քաղաքացիական գործերով արդարադատության իրականացումը, որի էությունը՝ որպես պետության հատուկ գործառույթ, այն է, որ քաղաքացիական իրավահարաբերություններում երաշխավորվի խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը¹:

Սակայն քաղաքացիական գործերով արդարադատությունը միշտ չէ, որ ավարտվում է օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացմամբ: Նման իրավիճակները հնարավոր են ամենից առաջ այն պատճառով, որ արդարադատությունը՝ որպես դատական իշխանության մարմինների գործունեություն, իրականացվում է մարդու կողմից, որին բնութագրական է սխալվելը (errare humanum est)²: Այս առումով իր արդիականությունը չի կորցրել Ե.Վ. Վասկովսկու այն տեսակետը, ըստ որի. «Որքան էլ դատավորները լավ պատրաստված լինեն իրենց գործունեությանը, որքան էլ բարեխիղճ և ուշադիր լինեն իրենց պարտականությունների կատարմանը, ամեն դեպքում նրանք չեն կարող լրիվ երաշխա-

վորված լինել սխալներից և բացթողումներից: Ոչ միայն օրենքի սխալ ըմբռնումը կամ գործի փաստական հանգամանքների հաստատման ժամանակ դրսևորած պատահական թերուշադրությունը, այլև դատավորի սուբյեկտիվ հայացքները, համակրանքը և հակակրանքը, ինչպես նաև տվյալ տարածքում գերիշխող մտածելակերպի և նախապաշարմունքների ազդեցությունը կարող են սխալ որոշումների կայացման պատճառ հանդիսանալ: Չի կարելի հերքել նաև արդարությունից դատավորների գիտակցաբար շեղումը, որը, նրանց տրված ներքին համոզման ազատության շնորհիվ, կարող է վրիպել նույնիսկ ամենաուշադիր հսկողությունից և այդ պատճառով մնալ անպատիժ»³:

Գործի իրական հանգամանքներին դատական ակտի չհամապատասխանելը հնարավոր է նաև դատավարության մասնակիցների կանքից անկախ պատճառներով, քանի որ դատավարության մրցակցային ձևի պայմաններում ճշմարտությունը ոչ միշտ է հասանելի, ուստի գործում է միայն դատական ակտի ճշմարտացիության կանխավարկածը: Այլ կերպ ասած՝ դատական ակտը համարվում է գործի հանգամանքներին համապատասխանող, եթե այն կայացնելիս պահպանվել են ապացույցների հետազոտման և գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների գնահատման վերաբերյալ օրենքով սահմանված կանոնները: Այդ իսկ պատճառով հնարավոր են դեպքեր, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կարող են բացահայտվել գործի լուծման համար էական նշանակության հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել գործի քննության ժամանակ, սակայն գոր-

ծին մասնակցող անձանց և դատարանին հայտնի չլինելու հետևանքով հաշվի չեն առնվել: Իսկ այդ հանգամանքների համատեքստում, որոնք իրավաբանական գրականության մեջ կոչվում են «նոր երևան եկած», օրինական ուժի մեջ մտած դատական ակտը դառնում է ոչ ճիշտ, օբյեկտիվ իրականությանը չհամապատասխանող⁴: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ իրականությանը չհամապատասխանող դատական ակտերը ոչ միայն չեն հանդիսանում խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոց, այլև իրենց հերթին կարող են ոտնահարել քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքները: Պատահական չէ, որ դեռևս Ի.Ե. Էնգելմանը նման դատական ակտերն անվանում էր անարդար⁵: Արդյունքում առաջանում է այդպիսի դատական ակտերի վերանայման անհրաժեշտություն, որն իրականացվում է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը քաղաքացիական դատավարության համեմատաբար ուշ ձևավորվածներից է: Այն առավել ամբողջական տեսք ստացավ Ռուսաստանում, այդ թվում՝ նրա կազմում գտնվող Արևելյան Հայաստանում, կատարված դատական բարեփոխումների արդյունքում 1864 թ. նոյեմբերի 20-ին ընդունված Քաղաքացիական դատավարության կանոնագրում, որը նախատեսում էր դատական ակտերի վերանայման երկու տեսակ՝ վերաքննություն և վճռաբեկություն: Համաձայն Քաղաքացիական դատավարության կանոնագրի՝ նոր երևան եկած հանգամանքները, ինչպես նաև փաստաթղթերում բացահայտված կեղծիքները հիմք էին հանդիսանում դատական ակտը վճռաբեկության կարգով բեկանելու համար: Ընդ որում, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման կարգը էականորեն տարբերվում էր

այլ հիմքով բերված վճռաբեկ բողոքի քննությունից և ուղղված էր նյութական արդարության պահպանմանը և գործի ըստ էության քննությանը⁶: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Քաղաքացիական դատավարության կանոնագրի քննարկվող ինստիտուտի իրավակարգավորման հիմքում դրված էր Ֆրանսիայի 1806 թվականի քաղաքացիական դատավարության կանոնագրում նախատեսված մոդելը⁷:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող օրենսդրության մեջ Քաղաքացիական դատավարության կանոնագրից մինչ այսօր էական և սկզբունքային փոփոխություններ չեն կատարվել⁸: Հիմնականում փոփոխությունները հանգել են նրան, որ առավել հստակեցվել են վերանայման հիմքերը, և վերանայման լիազորությունը տրվել է դատական համակարգում համապատասխան իրավասություն ունեցող դատարաններին:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ քաղաքացիական դատավարությունում, քանի որ այն վերանայման այլ վարույթների հետ միասին կոչված է ապահովելու քաղաքացիական գործերի լուծման օրինականությունը և հիմնավորվածությունը⁹: Քննարկվող վարույթի շրջանակներում դատարանը հետազոտում և զնահատում է նախկինում անհայտ հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները՝ այն նպատակով, որպեսզի, ելնելով արդարադատության պատշաճ իրականացման, քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, պարզի, թե արդյոք կան բավարար հիմքեր արդեն իսկ լուծված գործի քննությանը վերադառնալու համար: Արդյունքում այն դատարանին հնարավորություն է ընձեռում վերանայելու և բեկանելու օրինական ուժի մեջ մտած արդարադատության այն ակտերը, որոնք դատարանի կամքից անկախ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

պատճառներով կայացվել են առանց գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների հաշվառման:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարելի է առանձնացնել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հետևյալ առանձնահատուկ խնդիրները՝

1) հնարավորություն ընձեռել դատարանին գործի հանգամանքներին համապատասխան լուծելու քաղաքացիական գործը՝ չնայած այն բանին, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները դատարանից անկախ պատճառներով նրան հայտնի չեն եղել, և արդարադատության ակտը մտել է օրինական ուժի մեջ,

2) շահագրգիռ անձանց և կազմակերպությունների մասնակցությամբ ապահովել այդ հանգամանքների հաստատումը դրանց բազմակողմանի, լրիվ և խորը հետազոտության միջոցով,

3) երաշխավորել նոր երևան եկած հանգամանքների կապակցությամբ օրինականության, հիմնավորվածության և գործի հանգամանքներին համապատասխանելու տեսանկյունից կասկած հարուցող դատական ակտերի բեկանումը և միևնույն ժամանակ բացառել դրա համար բավարար հիմքերի բացակայության դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը¹⁰:

Դատարանը, լուծելով նշված առանձնահատուկ խնդիրները, միաժամանակ լուծում է նաև քաղաքացիական դատավարության ընդհանուր խնդիրները՝ ապահովելով քաղաքացիների, իրավաբանական անձանց և իրավունքի այլ սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը:

Պետք է նշել, որ իրավաբանական գրա-

կանության մեջ քննարկվող վարույթը լուսաբանվում է որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ¹¹: Ընդ որում, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույն փուլ հանդիսանալը պայմանավորված է ոչ միայն դրա առանձնահատուկ խնդիրներով, այլև վերանայման յուրահատուկ պայմաններով, օբյեկտներով, ժամկետներով և դատավարական կարգով: Այս առումով տեղին է հիշատակել, որ դեռևս Ի.Ե. Էնգելմանը խոսում էր նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույնության մասին՝ նշելով, որ ոչ արդար վճիռների համար, որոնք չեն համապատասխանում նոր երևան եկած հանգամանքներին, սակայն մտել են օրինական ուժի մեջ և, հետևաբար, չեն կարող բողոքարկվել ո՛չ վերաքննության, ո՛չ էլ վճռաբեկության կարգով, բոլոր ժամանակակից օրենսդրություններում նախատեսված է բեկանման հատուկ կարգ¹²:

Ներկայումս օրենսդիրը հետազոտվող վարույթի իրավակարգավորմանն է նվիրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹³ (այսուհետ կրճատ՝ ՔԴՕ) «Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը» վերտառությամբ 3³-րդ բաժինը՝ դրանով իսկ ընդգծելով այս վարույթի ինքնուրույնությունը: Միաժամանակ, ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել է, որ եթե նշված բաժնով նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են ՔԴՕ ընդհանուր դրույթները: Սակայն, ՔԴՕ մյուս՝ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների վերաբերյալ բաժիններում էլ օրենսդիրը, դրսևորելով բավականին յուրօրինակ մոտեցում, նոր երևան եկած հանգամանքները դիտել է որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու հիմքեր:

Ասվածը, սակայն, չի կարող մեկնաբան-

վել որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույնության բացառում, քանի որ այն էականորեն տարբերվում է ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ վարույթներից: Այսպես, եթե նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում վերանայման ենթակա են միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ապա վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա են դեռևս օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը: Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այստեղ վերանայման ենթակա են այն դատական ակտերը, որոնք կայացվել են առանց նոր երևան եկած հանգամանքների հաշվառման: Այնինչ վերաքննիչ և վճռաբեկ վարույթների շրջանակներում բողոքարկվում են դատական սխալ պարունակող ակտերը, որոնք կայացվել են առանց գործի հանգամանքներն ամբողջությամբ պարզելու, ապացույցները սխալ գնահատելու կամ օրենքն այլ կերպ սխալ կիրառելու հետևանքով⁴:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը բնութագրական է նաև այն հանգամանքը, որ այս վարույթը, ի տարբերություն վերաքննիչ և վճռաբեկ վարույթների, պայմանավորված է ոչ թե ստորադաս դատարանների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու, այլ գործի ավարտից հետո ի հայտ եկած հանգամանքներին համապատասխան դատական ակտ կայացնելու անհրաժեշտությամբ: Այլ կերպ ասած՝ այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե քաղաքացիական դատավարության փուլերի աստիճանական փոփոխմանը, այլ արդեն իսկ ավարտված գործի նորոգմանը կամ գործի վարույթի վերաբացման: Ուշագրավ է, որ մի շարք եվրոպական երկրների (Գերմանիա, Ավստրիա, Լիտվա և այլն) քաղաքացիական դատավարույթ

յան օրենսգրքերում հետազոտվող վարույթը կրում է հենց «Գործի նորոգում» վերտառությունը⁵:

Հաշվի առնելով շարադրվածը՝ ակնհայտ է դառնում, որ, նոր երևան եկած հանգամանքները վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման հիմք դիտարկելով, օրենսդիրը արհեստական ձևով միմյանց է կապակցել ոչ միասեռ վարույթները: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՔԴՕ-ն նոր երևան եկած հանգամանքները ներկայացրել է և՛ որպես վճռաբեկ բողոք բերելու հիմք, և որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորում, որի հետևանքով միախառնել է տարբեր քաղաքացիատավարական բովանդակություն և նշանակություն ունեցող հասկացությունները: Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ դա ոչ մի դեպքում չի կարող նսեմացնել նոր երևան եկած հանգամանքերով դատական ակտերի վերանայման վարույթի ինքնուրույն բնույթը, քանի որ այդ կերպ ընդամենը ոչ այնքան հաջողված փորձ է արվել ընդգծելու վերաքննիչ և վճռաբեկ վարույթները կարգավորող անհրաժեշտ նորմերի և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի միջև հնարավոր կապը, ինչը, սակայն, ընդունելի համարվել չի կարող և ենթակա է շտկման:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը հանդիսանում է քաղաքացիական դատավարության ոչ միայն ինքնուրույն, այլև բացառիկ փուլը: Այսպես, օրինակ, մինչեղափողական դատավարագետ Վ.Ս. Գորդոնը, քննարկելով հետազոտվող վարույթի բացառիկությունը, գրում էր. «Այս տեսակ բողոքների ներկայացումը պետք է հնարավորինս սահմանափակվի այն նպատակով, որպեսզի բոլոր միջոցներով երաշխավորվի դատական ակտերի անձեռնմխելիությունը: Սա բողոքարկման սովորական ձև չէ, այլ արդարադատությանը հասնելու լրիվ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ**ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

բացառիկ միջոց»¹⁶:

Ըստ Ա.Պ. Վերշինի՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլի բացառիկությունը պայմանավորված է դատական ակտի բեկանման հիմքերով, որոնք համեմատաբար հազվադեպ են հանդիպում պրակտիկայում¹⁷: Մ.Ս. Շաքարյանը ևս քննարկվող փուլի բացառիկությունը բացատրում էր դատական ակտի բեկանման հիմքերով¹⁸:

Իսկ Լ.Ս. Մորոզովայի կարծիքով՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի բացառիկությունը այն է, որ այն կարգավորում է դատական ակտերի վերանայման հետ կապված այն հարաբերությունները, որոնք արդեն մտել են օրինական ուժի մեջ¹⁹: Մ.Ս. Ահմեդովը նույնպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլը համարում է բացառիկ, քանի որ, ըստ նրա, այն հնարավորություն է տալիս վերանայելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ ի հակադրություն դրանց կայունության և որոշակիության հատկանիշների²⁰:

Այն հանգամանքը, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի բեկանման հիմքերն իրենց էությանը յուրահատուկ են և գործնականում հազվադեպ հանդիպող, կասկած չի հարուցում: Այդ մասին է վկայում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարի 01.03.2012թ. ՈԴԴ-6-Ե-1301 գրության ուսումնասիրությունը, որից հայտնի է դարձել, որ 2009 թվականից մինչև 2011 թվականը ընկած ժամանակահատվածում այս հիմքով ներկայացված բողոքները չեն գերազանցել բողոքների ընդհանուր թվի 2%-ը: Սակայն դրանք, մեր կարծիքով, ինքնին չեն կարող հանդիսանալ այս փուլի բացառիկությունը կանխորոշող բավարար հատկանիշներ, քանի որ նույն կերպ բացառիկ

կարելի է համարել դատական վերանայման այլ վարույթները ևս: Հետևաբար, կարծում ենք, որ քննարկվող փուլի բացառիկությունը կարելի է պայմանավորել ոչ այնքան նշված հատկանիշով, որքան այն հանգամանքով, որ այս փուլը թույլ է տալիս դատական ակտի օրինական ուժի հատկանիշներից բացառություններ: Խոսքն այն մասին է, որ օրինական ուժի մտնելու պահից դատական ակտը ձեռք է բերում որոշակի հատկանիշներ և դառնում վերջնական: Հենց այդ պահից էլ սպառվում են դատական ակտի հետագա բողոքարկման ու վերանայման հնարավորությունները, քանի որ, ինչպես արդարացիորեն նշում է Վ.Ֆ. Յակովլևը, արդարադատությունն ինչ-որ տեղ պետք է ավարտվի²¹: Այդ պատճառով ՔԴՕ 14-րդ հոդվածը սահմանում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում, որպեսզի իրացվի իրավական անորոշությունը վերացնելու դատական իշխանության գործառույթը, ինչի արդյունքում պաշտպանվում են քաղաքացիների և կազմակերպությունների խախտված կամ վիճարկվող իրավունքները և օրինական շահերը, անհրաժեշտ է ապահովել գործով կայացված վերջնական դատական ակտի կայունությունը²²: Հակառակ դեպքում կիմաստագրկվի դատական ակտերի օրինական ուժի գաղափարը, որի էությունը դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելն է:

Այս կապակցությամբ ուշագրավ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, որը բազմիցս նշել է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվեն-

ցայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է *res judicata* սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն՝ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այս սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում»²³:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, մեկնաբանել է իրավական որոշակիության սկզբունքը և սահմանել, որ. «Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննությունը,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած, դատական ակտի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադա-

տության սխալ իրականացման ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար»²⁴:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ իր մեկնաբանությունն է ներկայացրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Կ. Ռոզակիսը, ով նշել է. «Իրավական որոշակիությունը ոչ թե տեսական դրույթ է, այլ այն բանի ակնկալումը, որ վերջնական դատական ակտը ենթակա կլինի հարգանքի: Երբ դատական ակտը սուբյեկտիվ, անհիմն վերանայվում է, ապա տուժում են ոչ միայն իրավական որոշակիությունը, արդյունավետությունը, այլև վերացական է դառնում դատարան դիմելու իրավունքը»²⁵:

Սակայն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավական որոշակիության սկզբունքը չի կրում բացարձակ բնույթ, և շեղումն այս սկզբունքից կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ դա պայմանավորված է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով: Այլ կերպ ասած՝ իրավական որոշակիության սկզբունքը, երաշխավորելով դատական ակտերի կայունությունը, լուրջ իրավաչափ նկատառումների ազդեցության դեպքում թույլ է տալիս որոշակի բացառություններ: Այս առումով տեղին է հիշատակել Տ.Գ. Մորշակովի կարծիքը, ըստ որի՝ կայունությունը դատական ակտի աժեքների աստիճանակարգությունում գրավում է ավելի ցածր դիրք, քան արդարությունն է²⁶:

Նշվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը լիովին համապատասխանում է իրավական որոշակիության պահանջներին, քանի որ այն կարող է հարուցվել միայն գործի լուծման համար նշանակություն ու-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նեցող էական, բացառիկ և անհերքելի հանգամանքների բացահայտման դեպքում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս անդրադարձել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի իրավաչափությանը, որն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանման վարույթը ենթադրում է, որ առկա են նախկինում անհասանելի ապացույցներ, որոնք պետք է հանգեցնեն դատավարության այլ արդյունքի: Դատական ակտի բեկանման համար դիմող անձը պետք է ապացուցի, որ զրկված է եղել այդ ապացույցները գործի քննության ժամանակ ներկայացնելու հնարավորությունից, և որ այդ ապացույցները կարևոր են: Այս վարույթը ինքնին չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին»²⁷:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլի բացառիկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն թույլ է տալիս անտեսել իրավական որոշակիության սկզբունքի երաշխավորմանը կոչված դատական ակտի օրինական ուժի այնպիսի հատկանիշը, ինչպիսին է անհերքելիությունը (անփոփոխելիությունը): Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ այդ բացառությունն իրավաչափ է: Այլապես այս փուլի գոյությունը կխախտեր ՀՀ ստանդանտ միջազգային պարտավորությունները, քանի որ իրավական որոշակիության դրույթներին լիարժեք չափով չհամապատասխանող դատավարության փուլերի առկայության դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտում է ողջամիտ ժանկետներում դատական վեճերի քննության սկզբունքի խախտում²⁸:

Պետք է նշել, որ այս դիրքորոշմանը համահունչ կարգավորումներ են ամրագրված

նաև ՔԴՕ-ում: Մասնավորապես, ՔԴՕ 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ, ի թիվս այլ հիմքերի, առկա են նոր երևան եկած հանգամանքներ: Իսկ ՔԴՕ 204.38-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան: Ավաժից հետևում է, որ օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը համարում է ընդհանուր կարգից տարբերվող բացառիկ դեպք:

Այս ինստիտուտի իրավաբանական բնույթը մասնագիտական գրականության մեջ հանդիսանում է բանավեճերի առարկա, քանի որ դատավարագետների մի մասի կարծիքով, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքում բացառվում է դատական սխալի առկայությունը, իսկ մյուսներն այն դիտարկում են որպես դատական սխալի վերացման միջոց:

Այսպես, Լ.Ֆ. Լեսնիցկայան, հետազոտելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, նշում է. «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտին, ի տարբերություն վճռաբեկ և հսկողական վարույթների, բնութագրական է այն հանգամանքը, որ այստեղ վերանայվող դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգվում են ոչ թե գործի նյութերին, այլ նոր երևան եկած հանգամանքներին համապատասխանության տեսանկյունից: Հետևաբար, դատական ակտերի վերանայման քննարկվող տեսակի հիմքում ընկած չէ դատական սխալը»²⁹: Լ.Ս. Մորոզովան

ևս, քննարկվող վարույթում բացառելով դատական սխալի առկայությունը, գրում էր. «Այդ պատճառով գործի վերանայման ժամանակ բացակայում են դատական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության տարրերը: Այն դեպքում, երբ հենց վերահսկողության տարրերն են բնութագրական դատական ակտերի ստուգման մյուս երկու տեսակներին՝ վճռաբեկ և հսկողական վարույթներին»³⁰: Դատական սխալի բացակայության՝ որպես նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի բնութագրական առանձնահատկության մասին կարծիքներ են հայտնել նաև այլ հեղինակներ³¹:

Հարկ է նշել, որ իրավաբանական գրականության մեջ բավականին լայն տարածում է ստացել նաև հակառակի վերաբերյալ մոտեցումը: Այսպես, օրինակ, ըստ Գ.Լ. Օսոկինայի և Ի.Մ. Ջայցևի, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլը հանդիսանում է դատական սխալի վերացման ձևերից մեկը, որի ընթացքում դատարանն իրականացնում է ինքնավերահսկողություն³²: Ա.Ն. Ռեզունենկոն ևս նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը դիտում է որպես դատական սխալների վերացման միջոցներից մեկը: Մասնավորապես, ըստ Ա.Ն. Ռեզունենկոյի. «Դա դրսևորվում է նրանում, որ առանց նոր երևան եկած հանգամանքների կայացված դատական ակտի թերությունն է անհիմն լինելը, որն արտահայտվում է կամ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների ոչ լրիվ հաստատման, կամ ապացույցների վատորակության, կամ էլ օբյեկտիվ իրականությանը գործով հաստատված փաստերի անհամապատասխանության մեջ»: Միևնույն ժամանակ, հեղինակը վերապահում է անում այն մասին, որ դատարանի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը որպես այդպիսին չի հանդիսանում նոր երևան եկած հանգա-

մանք³³: Ա.Ն. Ռեզունենկոյի մոտեցման օգտին է արտահայտվել Տ.Տ. Ալիևը, ով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը համարում է դատական սխալների ուղղման, քաղաքացիական գործով օրինակաչության և հիմնավորվածության հաստատման համար օրենքի իրական կիրառման էական երաշխիքներից մեկը³⁴:

Ի տարբերություն նշված հեղինակների՝ Ի. Ա. Պետրովան նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը՝ որպես դատական սխալի վերացման միջոց, դիտում է որոշակի վերապահումով: Մասնավորապես, ըստ հեղինակի. «Նոր երևան եկած հանգամանքներով գործի նորոգման ինստիտուտի գոյությունը վկայում է օրենսդրի կողմից դատական սխալի (լայն իմաստով) ռիսկի հաշվառման մասին, որը չի կարող վերացվել այլ ընթացակարգերով, և որի վերացման խնդիրն է ծառայում դատավարության քննարկվող փուլը»³⁵: Համանման մոտեցում են ցուցաբերում նաև Օ.Վ. Իսայենկովան և Ա.Ա. Դեմիչևը, ովքեր նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը կապում են դատական ակտի օբյեկտիվ սխալների վերացման հանգամանքի հետ³⁶:

Վերը շարադրված բոլոր տեսակետներն էլ, իհարկե, արժանի են ուշադրության: Սակայն, նախքան դրանցից որևէ մեկին հավանություն տալը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցի վերլուծությանը, թե ինչպիսի քաղաքացիատավարական բովանդակություն ունի «դատական սխալ» հասկացությունը:

Դատավարագիտության մեջ դատական սխալների և դրանց վերացման միջոցների առավել լրիվ և համակողմանի ուսումնասիրությունները կատարվել են Ի.Մ. Ջայցևի կողմից: Նրա կարծիքով, դատական սխալը դատական իշխանության մարմինների՝ արդարադատության նպատակներին չհամապատասխանող գործողությունն է կամ այդպիսի գործողության հետևանքը:

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդ որում, հեղինակը, տարբերություն չդնելով դատական սխալի և իրավախախտման միջև, նշում էր. «Դատական սխալի հասկացությունը ավելի լայն է. այն ներառում է ոչ միայն դատավարական խախտումները, երբ անճշտությունները կամ բացթողումները թույլ են տրվում ուղղակի և անուղղակի դիտավորությամբ, ինքնավստահությամբ կամ անփութությամբ, այլև այն դեպքերը, երբ պաշտոնատար անձը չի նախատեսել և չէր էլ կարող նախատեսել իր գործողությունների և դրանց հետևանքների սխալ լինելը: Իրավական նորմերի կիրառման ժամանակ թույլ տրված անճշտությունը նշանակում է այդպիսի ակտի անհամապատասխանություն սահմանված նպատակներին, այսինքն՝ դատական սխալ»³⁷: Նման մոտեցում է ցուցաբերում Վ.Ա. Դավիդովը, ով դատական սխալ է համարում արդարադատության՝ որպես սոցիալական կոնֆլիկտների լուծման միջոցի ցանկացած պատճառով առաջացած բացասական արդյունքը, որը միշտ էլ դրսևորվում է արդարադատության հետապնդած նպատակներից շեղումով³⁸:

Վերոշարադրյալ այն դիրքորոշումը, ըստ որի՝ դատական սխալ է համարվում դատավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների ցանկացած, այդ թվում՝ առանց մեղքի թույլ տրված խախտումը, Ա.Ն. Ռեզունենկոյի պնդմամբ, համապատասխանում է արդարադատության հետապնդած վեհ նպատակին և մեծապես նպաստում է այն անձանց շահերի հաշվառմանը, ուն իրավունքը չի վերականգվել կամ հաստատվել³⁹: Այսինքն՝ ըստ նշված հեղինակների, դատական սխալ պետք է համարել նաև այն դեպքերը, երբ արդարադատության նպատակները չեն իրականացվում այնպիսի հանգամանքների պատճառով, որոնք դատարանը չի նախա-

տեսել և չէր էլ կարող նախատեսել:

Սակայն մասնագիտական գրականության մեջ դատական սխալի իրավական բնույթի վերաբերյալ հանդիպում են նաև այլ կարծիքներ, ըստ որոնց՝ այն չունի նման ընդգրկում բովանդակություն: Այսպես, օրինակ՝ Ե.Գ. Տրիշինան դատական սխալը բնորոշում է որպես իրավասու սուբյեկտի (դատարանի)՝ դատավարական և (կամ) նյութական իրավունքը խախտող, քաղաքացիական դատավարության նպատակները չիրագործող բացթողում, որի արդյունքում արդարադատության ակտը կամ առանձին դատավարական գործողությունը դառնում է ոչ իրավաչափ⁴⁰: Դատական սխալը՝ որպես սուբյեկտիվ բնույթ կրող երևույթ է դիտարկում նաև Ս.Մ. Ախմեդովը, ով դրանում ներառում է ինչպես դատավարական ձևի, այնպես էլ նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառման հետ կապված իրավակիրառ մարմնի բոլոր հնարավոր բացթողումները⁴¹:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրական դատարանը ևս անդրադարձել է «դատական սխալ» եզրույթի բովանդակության բացահայտմանը՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. ««Դատական սխալ» եզրույթը տարածական մեկնաբանման ենթակա չէ և չի կարող ընկալվել որպես դատարանի կողմից թույլ տրված ցանկացած սխալ (վրիպում): Դատական սխալ կարող է թույլ տրվել միայն գործով ըստ էության դատական ակտի կայացման արդյունքում, այսինքն՝ այնպիսի ակտի, որը կոչված է լինելու լուծել գործը (քրեական, քաղաքացիական, վարչական), վերացնել դրա վիճելիությունը՝ որոշել կողմերի (վիճելի իրավահարաբերության մասնակիցների) իրավական անվիճելի կարգավիճակը, անձանց համար հնարավորություն ստեղծել իրացնելու իրենց իրավունքներն ու պաշտպանել օրինական շահերը, հետևաբար՝ կոչված է իրականացնելու ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված դատա-

կան պաշտպանության կամ արդարադատության նպատակները: Այդ գործընթացում դատարանը կիրառում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով: Իսկ դատական սխալը կամ նյութական, դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստը, որը հանգեցրել է սովյալ գործի սխալ լուծմանը, հետևաբար՝ խախտվել են արդարադատության նպատակները, վտանգվել է արդարադատության և դատարանի հեղինակությունը, ենթակա է գնահատման և հաստատման իրավասու դատարանի կողմից վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում»⁴²:

Հետևաբար, ակնհայտ է, որ դատական սխալ պետք է համարել ոչ թե դատական գործունեության՝ քաղաքացիական դատավարության նպատակներին չհամապատասխանող ցանկացած արդյունքը, այլ միայն այն, որը հանդիսանում է նյութական կամ դատավարական իրավունքի՝ գործի սխալ լուծմանը հանգեցնող խախտման հետևանք: Այլ կերպ ասած՝ մենք համամիտ ենք այն հեղինակների տեսակետին, որ դատական սխալը կրում է սուբյեկտիվ բնույթ, և օբյեկտիվ պատճառներով արդարադատության նպատակների չիրագործումն ինքնին չի կարող վկայել դատական սխալի առկայության մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առավել հիմնավոր է թվում այն հեղինակների պնդումը, ըստ որի՝ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը չի կարող հանդիսանալ դատական սխալների վերացման միջոցներից մեկը: Նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր երևան եկած հանգամանքներով դատա-

կան ակտը վերանայելիս անհրաժեշտ է ստուգել դատարանի կողմից օրենքի ճիշտ կիրառությունը, այս կամ այն դատավարական գործողության կատարման կամ գործով ապացույցների հետազոտման և գնահատման իրավաչափությունը⁴³: Ավելին, նման ստուգումն ինքնին կհակասի քննարկվող ինստիտուտի էությանը, քանի որ այստեղ վերանայվող դատական ակտի անօրինական կամ անհիմն լինելը հանդիսանում է ոչ թե գործի ոչ բոլոր հանգամանքների բացահայտման, ապացույցների սխալ գնահատման կամ օրենքի խախտման, այլ այնպիսի հանգամանքների բացահայտման հետևանք, որոնք գործի քննության ժամանակ հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ոչ դատարանին և ոչ էլ գործին մասնակցող անձանց: Հետևաբար, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելիս դատարանի գործողությունները նյութական կամ դատավարական իրավունքի խախտման, այսինքն՝ դատական սխալ թույլ տալու տեսանկյունից գնահատելն արդարացված չի կարող համարվել, քանի որ դատարանը քննարկվող պարագայում ոչ թե թույլ է տվել օրենքի խախտում, այլ օբյեկտիվ պատճառներով հաշվի չի առել գործի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները: Ի. Բենտոնն այս առումով արդարացիորեն նշում է. «Դատավորին չի կարելի մեղադրել ոչ անարդարության, ոչ էլ սխալի մեջ միայն այն բանի համար, որ նա չի հետազոտել այն ապացույցները, որոնք իրեն չեն ներկայացվել: Դա այն պատճառով, որ որևէ ման ապացույցի ներկայացման դեպքում դատական ակտը կարող էր բոլորովին այլ լինել»⁴⁴:

Վերոշարադրյալ դատողությունների լույսի ներքո ակնհայտ է դառնում, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման ինստիտուտը չի կարող հանդիսանալ դատական սխալի վերացման միջոցներից մեկը: Հարկ է նշել, որ օրենսդիրը ևս քաղաքացիատավա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

րական օրենսդրությունում նոր երևան եկած հանգամանքները դիտարկել է դատական սխալից տարբերվող դատական ակտի վերանայման հիմք (ՔԴՕ 226-րդ հոդվ, 33 դատական օրենսգրքի⁴⁵ 44-րդ, 57-րդ հոդվ.): Նման պայմաններում վիճելի է թվում 33 Սահմանադրական դատարանի դիրքորոշումը այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայումը լուրջ երաշխիք է դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու, դատական սխալն ուղղելու և գործով ճշմարտությունը բացահայտելու համար⁴⁶: Ավելին, 33 Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը հակասում է հենց իր 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշմամբ արտահայտած դատական սխալի վերաբերյալ իրավական դիրքորոշմանը: Բացի այդ, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայումը դատական սխալների վերացման երաշխիք դիտելը կհակասի նաև իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ իրավական պետությունում, որպես կանոն, անթույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը⁴⁷:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը հանդիսանում է ոչ թե դատական սխալի վերացման, այլ արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու միջոց է: Այս եզրահանգման համար հիմք է ընդունվում այն հանգամանքը, որ քննարկվող վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքներն ինքնին կասկած են հարուցում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի օրինականության և հիմնավորվածության կապակցությամբ, որպիսի

պայմաններում դատարանին հնարավորություն է տրվում բեկանելու այլևս վերջնական դարձած դատական ակտը և կայացնելու նոր երևան եկած հանգամանքներին համապատասխանող օրինական և հիմնավորված դատական ակտ:

Այդ պատճառով դատավարության այս փուլի էությունն առավել ճիշտ բացահայտելու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցի վերլուծությանը, թե ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ նոր երևան եկած հանգամանքները դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վրա, քանի որ, ինչպես նշում է Ն.Ի. Տկաչովը, միայն օրինական և հիմնավորված դատական ակտերը կարող են լուծել քաղաքացիական դատավարության խնդիրները⁴⁸:

Դատական ակտի օրինականությունը դրսևորվում է տարբեր գործոններով, մասնավորապես՝ այն կախված է և՛ դատարանի գործունեության ճիշտ կազմակերպումից, նրա կազմի օրինականությունից, և՛ դատական ակտ կայացնելիս դատարանի կողմից իր իրավասությունը և դատավարական կարգը պահպանելու հանգամանքից: Բացի այդ, օրինականության պահանջը հիմնվում է օրենքին և այլ իրավական ակտերին դատական ակտերի համապատասխանության և ճիշտ ձևակերպման վրա: Այլ կերպ ասած՝ դատական ակտը օրինական է այն դեպքում, երբ կայացվել է գործով կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերին համապատասխան և դատավարության նորմերի պահպանմամբ⁴⁹:

Իսկ դատական ակտի հիմնավորվածությունը բնութագրում է դատարանի կողմից գործի հանգամանքների և կողմերի փոխհարաբերությունների ճանաչման արդյունքները: Դատական ակտին ներկայացվող այս պահանջը պահպանված է համարվում այն դեպքում, երբ դատարանը գործի լուծման համար բավարար ծավալով որոշել է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը (ա-

պացուցման առարկան), օրենքով թույլատրված և դատական նիստում օրենքով սահմանված կարգով հետազոտված ապացույցների գնահատման հիման վրա այդ հանգամանքներից յուրաքանչյուրի առկայությունը կամ բացակայությունը համարել է հաստատված (ապացուցված), իսկ դատական ակտում արված հետևությունները համապատասխանում են այդ հանգամանքներին⁶⁰:

Դատական ակտին ներկայացվող այս երկու պահանջներն ամփաօգտորեն փոխկապակցված են: Դրանց միջև առկա կապը դրսևորվում է նրանում, որ ամեն մի չհիմնավորված դատական ակտ նաև անօրինական է, բայց ամեն մի հիմնավորված դատական ակտ չէ, որ օրինական է: Ասվածից, սակայն, չի հետևում, որ դրանք նույնացվում են, քանի որ, ինչպես նկատեցինք, դատական ակտի օրինականության և հիմնավորվածության պահանջներն ունեն ինքնուրույն քաղաքացիադատավարական բովանդակություն: Մասնավորապես, դրանցից առաջինը վերաբերում է դատական ակտի իրավաբանական կողմին, իսկ հիմնավորվածության պահանջը գործնականում ապահովում է դատական ակտի փաստական կողմը⁶¹:

Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում այդ հանգամանքների ազդեցությունը դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ դեպքում վարույթի նորոգումը տեղի է ունենում ոչ թե դատական սխալի, այսինքն՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման, այլ այն պատճառով, որ գործի քննության ավարտից հետո հայտնի են դարձել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց և դատարանին: Այդ իսկ պատճառով առանց նոր երևան եկած այդ հանգամանքների հաշվառման կայացված դատական

ակտին, որպես կանոն, բնութագրական է չհիմնավորված լինելը: Ընդ որում, դատական ակտի չհիմնավորվածությունը տվյալ դեպքում պայմանավորված է լինում կամ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների ոչ լրիվ պարզման, կամ ապացույցների և թարգմանության ոչ պատշաճ լինելու, կամ էլ օբյեկտիվ իրականությանը գործով հաստատված փաստերի այլ անհամապատասխանության հանգամանքով⁶²: Իսկ դատական ակտի ապօրինի լինելը միայն կրում է ածանցվող բնույթ:

Մինչդեռ ժամանակ, հարկ է նշել նաև, որ դատական ակտի ապօրինի լինելը նոր երևան եկած հանգամանքներով վերանայման դեպքում ոչ միշտ է ածանցվում դատական ակտի չհիմնավորվածությունից: Մասնավորապես, այն դեպքում, երբ որպես նոր երևան եկած հանգամանք հանդես է գալիս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված դատավորի՝ գործի քննության հետ կապված հանցավոր արարքը, ապա կարելի է ասել, որ դատական ակտը ապօրինի է: Ինչ վերաբերում է հիմնավորվածությանը, ապա այն, ելնելով գործի հանգամանքներից, կարող է լինել ինչպես հիմնավորված, այնպես էլ չհիմնավորված: Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքները գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ դատական ակտի օրինականության և հիմնավորվածության պահանջների հետ:

Այս տեսանկյունից վիճելի է թվում Ե.Ա. Բորիսովայի այն կարծիքը, ըստ որի՝ հնարավոր չի թվում պնդումն այն մասին, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթում դատարանը ստուգում է դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, քանի որ սկզբնապես ստուգվում է ոչ թե դատական ակտը, այլ նոր երևան եկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը⁶³: Թեև քննարկվող վարույթում դատարանի հիմնական խնդիրը նոր երևան եկած հանգամանքների առկայու-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

յունը պարզելն է, այդուհանդերձ այս խնդիրը չի կրում ինքնավար բնույթ, քանի որ նոր երևան եկած հանգամանքների հաստատումն իրականացվում է դատական ակտերի ստուգման նպատակով, և դրանց առկայությունն ինքնին կասկած է հարուցում դատական ակտի օրինականության և հիմնավորվածության կապակցությամբ: Այդ իսկ պատճառով հետազոտվող վարույթում դատարանի հիմնական խնդիրն է ոչ միայն պարզել նոր երևան եկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, այլև դրանց ազդեցությունը կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վրա⁵⁴: Ասվածից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը արդարադատության պատշաճ իրականացման և օրինականության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է քաղաքացիական դատավարությունում: Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի դերակատարությունը էական է ոչ միայն դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ապահովման, այլև օբյեկտիվ իրականությանը դատական ակտերի համապատասխանության երաշխավորման տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ գործող քաղաքացիադատավարական օրենսդրությունը չի ամրագրում գործի իրական հանգամանքները պարզելու, այսինքն՝ օր-

յեկտիվ ճշմարտությունը բացահայտելու դատարանի պարտականությունը, այնուամենայնիվ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի գոյությունը վկայում է օրենսդրի կողմից գործի իրական հանգամանքները որոշակի դեպքերում չբացահայտվելու հավանականությունը և դրանց հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման անհրաժեշտությունը նկատի ունենալու հանգամանքը: Հետևաբար, կարելի է պնդել, որ քննարկվող վարույթը դատական ակտը օբյեկտիվ ճշմարտությանը համապատասխանեցնելու լրացուցիչ կառուցակարգ է: Այդ հանգամանքը մեծապես նպաստում է քաղաքացիական դատավարության նպատակների իրագործմանը, քանի որ դատարանը կոչված է պաշտպանելու միայն իրական իրավունքները և օրինական շահերը: Այս առումով պետք է համաձայնել է.Ս. Մուրադյանի այն պնդմանը, որ օբյեկտիվ ճշմարտությունից հրաժարումը համարժեք է արդարադատությունից հրաժարմանը⁵⁵:

Այսպիսով, նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթն իրենից ներկայացնում է քաղաքացիական դատավարության ինքնուրույն և բացառիկ փուլ, որի ընթացքում արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու նպատակով նոր երևան եկած հանգամանքների համատեքստում ստուգվում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը:

¹ Տե՛ս **Власов А.А.**, Гражданский процесс: учебник для бакалавров /А.А. Власов. — 4-е изд., перераб. и доп. — М.: Издательство Юрайт, 2012, էջ 15:

² Տե՛ս **Давыдов В.А.**, Возобновление уголовного судопроизводства ввиду новых или вновь открывшихся обстоятельств: теория и практика исправления судебных ошибок / В.А. Давыдов. — М.: Издательство Юрайт, 2012, էջ 14:

³ Տե՛ս **Васьковский Е.В.**, Курс гражданского

процесса. Том 1 — М.: Издательство Бр. Башмаковых, 1913, էջ 172:

⁴ Տե՛ս Советский гражданский процесс: Учебник. /Под ред. **М.А. Гурвича**: Издательство «Высшая школа», М., 1967, էջ 316:

⁵ Տե՛ս **Завриев С.С.**, Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис ... канд. юрид. наук — Москва, 2008, էջ 12:

- ⁶ St'u *Петрова И.А.*, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 16:
- ⁷ St'u *Ахмедов С.М.*, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис ... канд. юрид. наук — Москва, 2008, էջեր 25-26:
- ⁸ St'u *Резуенко А.Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 15:
- ⁹ St'u *Петрова И.А.*, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 17:
- ¹⁰ St'u *Исаенкова О.В., Демичев А.А.*, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. — М.: Норма, 2009, էջ 385:
- ¹¹ St'u, օրինակ, *Авдеенко Н.И. и др.*, Гражданский процесс — М., Издательство «Юридическая литература», 1968, էջ 336, *Вандышев В.В., Дернова Д.В.*, Гражданский процесс. Курс лекций — СПб: Питер, 2001, էջ 361, Гражданский процесс: Учебник. 3-е изд., перераб. И доп. / Под ред. *М.К. Треушников*. М.: Издательский Дом «Городец», 2010, էջ 578, *Мионов В.И.*, Гражданский процесс: учебник / Мионов В.И. — М.: Эксмо, 2011, էջ 471:
- ¹² St'u *Завриев С.С.* Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис ... канд. юрид. наук – Москва, 2008, էջեր 12-13:
- ¹³ St'u ՀՀՊՏ 1998.09.09/20(53), 17.06.1998:
- ¹⁴ St'u *Петрова И.А.*, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 21:
- ¹⁵ St'u *Борисова Е.А.*, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис... док. юрид. наук - Москва, 2005, էջ 81:
- ¹⁶ St'u *Алиев Т.Т.*, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 52:
- ¹⁷ St'u Гражданский процесс. Учебник /Под. ред. *В.А. Мусина, Н.А. Чечиной, Д.М. Чечота.* — М.: «ПРОСПЕКТ», 1997, էջ 364:
- ¹⁸ St'u *Боннер А.Т. и др.*, Советский гражданский процесс — М., Издательство «Юридическая литература», 1985, էջ 379:
- ¹⁹ St'u *Резуенко А.Н.*, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 22:
- ²⁰ St'u *Ахмедов С.М.*, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 37:
- ²¹ St'u *Терехова Л.А.*, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջ 251:
- ²² St'u *Մեղրյան Ս.Գ.* Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևան պետ. համալսարան: Եր.: 2011, ԵՊՅ հրատ., էջ 153:
- ²³ St'u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- գործով 1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, կետ 58, **Ոյաբիխն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2003 թվականի հուլիսի 24-ի վճիռը, կետեր 51-52, **Նեյուբիմն ընդդեմ Ռուսաստանի** գործով 2006 թվականի նոյեմբերի 2-ի վճիռը, կետեր 22-23:
- ²⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով 2009 թվականի փետրվարի 13-ի և թիվ ԵՇԿ/0473/02/10 քաղաքացիական գործով 2011 թվականի մայիսի 27-ի որոշումները:
- ²⁵ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис... док. юрид. наук - Москва, 2005, էջ 34:
- ²⁶ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 53:
- ²⁷ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի **Պրավեդնայան ընդդեմ Ռուսաստանի** գործով 2004 թվականի նոյեմբերի 18-ի վճիռը, կետեր 27-28:
- ²⁸ Տե՛ս ՀՀ արդարադատության խորհրդի 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ ԱԽ-3-Ո-6 որոշումը:
- ²⁹ Տե՛ս **Мельников А.А. и др.**, Курс советского гражданского процессуального права. Том II, М., Издательство «Наука», 1981, էջեր 307-308:
- ³⁰ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис... док. юрид. наук - Москва, 2005, էջ 79:
- ³¹ Տե՛ս, օրինակ, Гражданский процесс. Учебник/ Под ред. **С.Н. Абрамова** - М., Издательство министерства юстиции СССР, 1948, էջ 395, Советский гражданский процесс. Учебник / Под ред. **Н.А. Чечина, Д.М. Чечот** — Л., Издательство Ленинградского университета, 1984, էջ 327, **Новик-Качан М.Ю.**, Надзорное производство в гражданском процессе. Дис ... канд. юрид. наук – Москва, 2005, էջ 92, **Диордиева О.Н.**, Гражданское процессуальное право: Учебно-методический комплекс. — М.: Изд. ЕАОИ, 2008, էջ 247:
- ³² Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 47:
- ³³ Տե՛ս **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 27:
- ³⁴ Տե՛ս **Алиев Т.Т.**, Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис... док. юрид. наук - Саратов, 2005, էջ 108:
- ³⁵ Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис ... канд. юрид. наук – Москва, 2010, էջ 15:
- ³⁶ Տե՛ս **Исаенкова О.В., Демичев А.А.**, Гражданское процессуальное право России: учебник /Под. ред. О.В. Исаенковой. — М.: Норма, 2009, էջ 383:
- ³⁷ Տե՛ս **Зайцев И.М.**, Устранение судебных ошибок в гражданском процессе. - С., Издательство Саратовского университета, 1985, էջեր 5-6, 15-16:
- ³⁸ Տե՛ս **Давыдов В.А.**, Возобновление уголовного судопроизводства ввиду новых

- или вновь открывшихся обстоятельств: теория и практика исправления судебных ошибок / В.А. Давыдов. — М.: Издательство Юрайт, 2012, էջ 26:
- ³⁹ Տե՛ս **Резуненко А.Н.**, Пересмотр судебных актов, вступивших в законную силу, по вновь открывшимся обстоятельствам как стадия гражданского процесса. Дис ... канд. юрид. наук – Волгоград, 2001, էջ 28:
- ⁴⁰ Տե՛ս **Терехова Л.А.**, Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Дис... док. юрид. наук - Екатеринбург, 2008, էջ 38:
- ⁴¹ Տե՛ս **Ахмедов С.М.**, Производство по пересмотру судебных актов по вновь открывшимся обстоятельствам в системе пересмотра судебных актов в арбитражном процессе. Дис ... канд. юрид. наук – Москва, 2008, էջ 51:
- ⁴² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշումը:
- ⁴³ Տե՛ս Гражданский процесс: Учебник /Под ред. д.ю.н., проф. **А.Г. Коваленко**, д.ю.н., проф. **А.А. Мохова**, д.ю.н., проф. **П.М. Филиппова**. — М.: Юридическая фирма «КОНТРАКТ»; «ИНФРА-М», 2008, էջ 301:
- ⁴⁴ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис... док. юрид. наук - Москва, 2005, էջ 75:
- ⁴⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2007.04.18/20(544) Հոդ. 489, 21.02.2007թ.:
- ⁴⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 20-ի թիվ ՍԴՈ-709 որոշումը:
- ⁴⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍԴՈ-780 որոշումը:
- ⁴⁸ Տե՛ս **Ткачев Н.И.**, Законность и обоснованность судебных постановлений в гражданском процессе. Дис ... канд. юрид. наук – Саратов, 1984, էջ 36:
- ⁴⁹ Տե՛ս **Авдеенко Н.И. и др.**, Советский гражданский процесс — Ленинград, Издательство Ленинградского университета, 1984, էջեր 207-208:
- ⁵⁰ Տե՛ս **Մեղրյան Ս.Գ.** Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևան պետ. համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ., էջ 89:
- ⁵¹ Տե՛ս Гражданский процесс: учеб. для студентов вузов/ [**Абушенко Д.Б. и др.**]; отв. ред. — **В.В. Ярков**. — 7-е изд., перераб. и доп. — М.: Волтерс Клувер, 2009, էջ 398:
- ⁵² Տե՛ս **Петрова И.А.**, Пересмотр судебных актов по вновь открывшимся обстоятельствам в гражданском и арбитражном процессах (сравнительно-правовой аспект). Дис ... канд. юрид. наук – Москва, 2010, էջեր 58-59:
- ⁵³ Տե՛ս **Борисова Е.А.**, Теоретические проблемы проверки судебных актов в российском гражданском, арбитражном процессах. Дис... док. юрид. наук - Москва, 2005, էջ 78:
- ⁵⁴ Տե՛ս **Аргунов В.Н. и др.** Научно-практический комментарий к Гражданскому процессуальному кодексу РСФСР. М.: Городец-издат, 2000, էջ 529:
- ⁵⁵ Տե՛ս **Фильченко И.Г.**, Процессуальные гарантии принятия обоснованного судебного решения в гражданском процессе. Дис ... канд. юрид. наук – Воронеж, 2010, էջ 18:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****THE CONCEPT AND SIGNIFICANCE OF THE STAGE OF
REVISION OF THE JUDICIAL ACTS ON THE BASIS OF
NEWLY DISCOVERED CIRCUMSTANCES****Tigran MARKOSYAN***Post-graduate student,**Department of Civil Procedure, YSU*

This article is dedicated to the analysis of relatively new and extremely important issue in civil procedure law, i.e. the stage of revision of the judicial acts on the basis of newly discovered circumstances.

The essence and concept of this stage are analyzed on the basis of the existing trends and attitudes in civil procedure law and precedents of ECHR. One of the specific focus points is the concept of judicial mis-

take and in this course it is proved in the article that the revision of the judicial acts on the basis of newly discovered circumstances is not a method for elimination of judicial mistakes.

As a result of the analysis carried out in the article the author concludes that the procedure of revision of the judicial acts on the basis of newly discovered circumstances is an independent and exclusive stage in civil procedure aimed at control of the legality and validity of the judicial acts entered into force in order to correct the mistakes took place in the course of administration of justice within the context of newly discovered circumstances.

ՀԱՅՏԻ ԵՎ ՊԱՏՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Լիլիթ ՔԱՍԱԼՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական

իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Տրանսպորտային ծառայությունների մատուցման համար կարևոր տեղեկությունները գերազանցապես արտացոլվում են համապատասխան պայմանագրերում, ինչպես նաև տրանսպորտային փաստաթղթերում: Վերջիններս մեծ նշանակություն ունեն տրանսպորտային բեռնափոխադրումների համար, քանի որ տվյալ ոլորտում կիրառվող մի շարք տրանսպորտային փաստաթղթեր օժտված են այնպիսի գործառույթներով, որոնք դյուրացնում են համապատասխան պայմանագրերի կնքումը, կատարումը, ինչպես նաև իրավական կարգավորումը:

Ավտոմոբիլային բեռնափոխադրման բնագավառում պայմանագրերի կնքման կապակցությամբ կիրառվող տրանսպորտային փաստաթղթերի շարքում կարևոր նշանակություն ունեն ոչ միայն բեռնագիրը¹, այլև հայտը և պատվերը, որոնք խնդրո առարկա պայմանագրերի կնքման համար կազմակերպական նշանակություն ունեցող իրավական նախադրյալներ են: Այսպես, օրինակ՝ պատվերը կազմվում և բեռնափոխադրողին է ներկայացվում բեռնափոխադրման պայմանագրի կնքումից առաջ՝ հիմք հանդիսանալով դրա հետագա կնքման, ինչպես նաև մի շարք նախապատրաստական գործողությունների կատարման համար: Իսկ հայտը, թեև հիմնականում ներկայացվում է բեռնափոխադրումների կազմակերպման կամ նմանաբովանադակ այլ պայմանագրի հիման վրա, կարող է ներկայացվել նաև դրա բացակայությամբ՝ հիմք հանդիսանալով պայմանագրային հարաբերությունների հաս-

տատման և որոշակի նախապատրաստական աշխատանքների կատարման համար: Բացի դրանից, փոխադրողի և բեռն ուղարկողի մասնակցությամբ ավտոմոբիլային բեռնափոխադրման պարտավորություններում հայտի ու պատվերի նշանակությունը մեծ է նաև խնդրո առարկա պարտավորությունների կատարման առումով, քանի որ ամրագրում է բեռնափոխադրումների իրականացման և (կամ) կազմակերպման համար կարևոր պայմաններ ու պահանջներ: Այն նաև տվյալ բնագավառում ծագող վեճերի արտադատական կարգավորման շրջանակներում ներկայացվող նախապահանջները հիմնավորող իրավական գործիքներից մեկն է:

Անդրադառնալով ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառում պատվերի դերակատարությանը՝ Օ. Ա. Կրասավչիկովը նշում է, որ այն հիմք է հանդիսանում ավտոմոբիլային բեռնափոխադրումների իրականացման պլանի կազմման և հաստատման համար, քանի որ դրանում արտացոլվող տվյալների հիման վրա են պլանավորվում ապագա որոշակի ժամանակահատվածում իրականացվելիք բեռնափոխադրումները²: Այս առնչությամբ տեղին է նշում Վ. Ա. Եղիազարովը, ում կարծիքի համաձայն՝ փոխադրման պայմանագրի հիման վրա ծագող պարտավորությունների կատարումն անհնար կլիներ առանց դրանք փոխադրողի և բեռն ուղարկողի միջև նախապես քննարկման և համաձայնեցման³: Այս առումով Տ. Կ. Բարսեղյանն արդարացիորեն ընդգծում է ինչպես հայտի, այնպես էլ պատվերի ծանուցողական գործառույթի մասին: Մասնավորապես՝ հեղինակը նշում է, որ տվյալ տրանսպորտային փաստաթղթերի կիրառման դեպքում բեռն ուղարկողը փոխադրողին տեղեկացնում է բեռնափոխադրման

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հիմնական չափանիշների ու պայմանների, բեռը փոխադրելու համար անհրաժեշտ փոխադրամիջոցների թվի, բեռնատարողության և այլ պահանջների մասին ու խնդրում է կոնկրետ բեռի փոխադրման համար որոշակի ժամանակահատվածում տրամադրել տրանսպորտային փոխադրամիջոց⁴: Նշված պատճառաբանությունները հաշվի առնելով՝ կարող ենք փաստել, որ հայտն ու պատվերը բեռնափոխադրումների բնագավառում կիրառվող մի շարք պայմանագրերի բովանդակության կանխորոշման, համաձայնեցման և արտացոլման միջոց հանդիսացող տրանսպորտային փաստաթղթեր են:

Իրավաբանական գրականությունում տրանսպորտի տարբեր տեսակներով իրականացվող բեռնափոխադրումների բնագավառներում հայտի և պատվերի դերի և իրավաբանական բնույթի վերաբերյալ առկա են տարբեր կարծիքներ: Այսպես, Բ. Լ. Խակսելբերգը⁵, Կ. Կ. Յախլովը⁶ և Ս. Ս. Ալեքսեևը⁷ գտնում են, որ պատվերի ներկայացումը բեռն ուղարկողի ինքնուրույն միակողմանի պահանջ է, որն իր իրավաբանական բնույթով միակողմ գործարք է: Չարկ է նշել, սակայն, որ նշված կարծիքը հեղինակներն արտահայտել են երկաթուղային բեռնափոխադրումների կապակցությամբ, սակայն այդ բնագավառում ևս տվյալ դիրքորոշումը հիմնավորված չէ, քանի որ միակողմ գործարքն ինքնին հանգեցնում է իրավաբանական հետևանքների, մինչդեռ պատվերը կարող է և չակցեպատվորվել:

Վ. Տ. Սմիրնովը⁸ և Կ. Ֆ. Եգորովը⁹ գտնում են, որ հայտը գործարք ճանաչելը նշանակում է դրան ոչ բնորոշ իրավաստեղծ նշանակություն տալ, մինչդեռ բեռնափոխադրումների առնչությամբ հայտը օպերատիվ-կարգավորիչ դեր ունի՝ արագացնելով ու կարգավորելով բեռնափոխադրման կատարման և կազմակերպման

գործընթացը: Վ. Վ. Վիտրյանսկին գտնում է, որ տրանսպորտային միջոցի տրամադրման և դրանց օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև բեռնափոխադրման պարտավորությունները կարող են ծագել միայն համապատասխան պայմանագրի հիման վրա, մինչդեռ հայտով կամ պատվերով հստակեցվում ու մանրամասնվում են դրանց ժամկետները (տրանսպորտային ծառայության սկզբնաժամկետը, վերջնաժամկետը, փուլային և այլ ժամկետային կողմնորոշիչներ) և այլ պայմաններ¹⁰: Ընդ որում, Վ. Վ. Վիտրյանսկին ևս հայտին իրավաստեղծ գործառույթ չի վերապահում: Դրա հետ մեկտեղ, չենք կարող չփաստել, որ տրանսպորտային գործունեություն իրականացնող համապատասխան սուբյեկտի կողմից ընդունված կամ չմերժված հայտն իր մոտ տրանսպորտային միջոցների տրամադրման, իսկ բեռն ուղարկողի մոտ բեռ տրամադրելու պարտավորություններ է առաջացնում, հետևապես անհերքելի է, որ հայտը ոչ միայն օպերատիվ-կարգավորիչ գործառույթով է օժտված, այլև փոխադրողի կամ տրանսպորտային ծառայություն մատուցող անձի կողմից ընդունվելու դեպքում բեռնափոխադրումների կազմակերպման կամ տրանսպորտային միջոցների ու բեռների տրամադրման մասին պայմանագրերի կնքման նախադրյալ է: Ընդ որում, քանի որ տվյալ պայմանագրերը կոնսենսուալ են, ուստի հայտում արտացոլված պայմանների վերաբերյալ համաձայնության ձեռքբերման պահից տվյալ պայմանագրերը կարող են համարվել կնքված:

Կարծում ենք, որ ինչպես հայտի և դրա վերաբերյալ պատասխանի ներկայացման, այնպես էլ պատվերի և դրա վերաբերյալ պատասխանի ներկայացման գործընթացին առավել բնորոշ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված օֆերտա-ակցեպտ կապը, որը միջնորդավորում է բեռնափոխադրման պայմանագրի կնքումը¹¹: Այսպես, Յու. Ս. Ռոստովսկին և Վ. Յու. Գրեչկովը պատվերը և հայտը դիտում են

որպես օֆերտայի տարատեսակ¹²: Հատկանշական է, որ, պայմանավորված նրանով, թե ով է օֆերտա ուղարկում, առանձնացվում են նախաձեռնողական (վաճառողի կողմից) և պասիվ (զնորդի) կողմից ներկայացվող օֆերտա: Ընդ որում, պասիվ օֆերտայի դեպքում ներկայացված դիմումն ընդունված է անվանել պահանջագիր կամ պատվեր¹³: Պասիվ օֆերտան կարող է ներկայացվել նաև ակտիվ օֆերտային ի պատասխան, եթե այն ընդունվում է վերապահումներով, այսինքն՝ կատավում է սկզբնականից տարբերվող նոր առաջարկ (կոնտրօֆերտա): Սակայն պետք է հաշվի առնել, որ ավտոտրանսպորտային բեռնափոխադրումներում պատվերի ներկայացման հնարավորություն ունի միայն բեռն ուղարկողը (բեռը տիրապետող անձը կամ դրա սեփականատերը): Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ պասիվ առաջարկը կարող է ներկայացվել օֆերտա անելու հրավերի արդյունքում: Այսպես, համաշխարհային առևտրային պրակտիկայում օֆերտան, լայն իմաստով, մեկնաբանվում է որպես գործարք կնքելու վերաբերյալ մտադրությունն արտահայտող առաջարկ¹⁴: Այդ առնչությամբ տեղին ենք համարում վկայակոչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի 1-ին մասը, որը թույլ է տալիս պայմանագիր կնքելու մտադրությունն արտահայտող առաջարկը որակել որպես օֆերտա անելու հրավեր: Մասնավորապես՝ անձանց անորոշ շրջանակին հասցեագրված՝ ավտոմոբիլային բեռնափոխադրման առաջարկը համարվում է օֆերտա անելու հրավեր, եթե տվյալ առաջարկում այլ բան նախատեսված չէ: Ի տարբերություն օֆերտայի՝ այն ավելի համառոտ շարադրանք ունի, չի ներառում պայմանագրի բոլոր էական պայմանները և չի հանգեցնում այն իրավական հետևանքների, որոնց հանգեցնում է օֆերտան¹⁵, այսինքն՝ դրա վերաբերյալ պատասխանը ոչ թե ակցեպտի տեսքով է, այլ օֆերտայի, հետևապես՝ պայմանագիր կնքելու պարտականություն չի առաջանում: Բացի դրա-

նից, այն կարող է ուղարկվել մի քանի անձանց անգամ այն դեպքում, երբ պայմանագիրը հնարավոր և ցանկալի է կնքել օֆերտա անելու հրավերն ընդունած միայն մեկ սուբյեկտի հետ: Օֆերտա անելու հրավերը հնարավորություն է տալիս գնահատելու մրցակից օֆերենտների առաջարկները, նրանց պայմանները ենթարկել վերլուծության և համադրությամբ գտնել առավել արդյունավետ տարբերակը: Առանձին դեպքերում օֆերտա անելու հրավերը ուղարկվում է ոչ թե պայմանագիր կնքելու մտադրությամբ, այլ զների վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով¹⁶:

Այսպիսով, եթե ավտոմոբիլային բեռնափոխադրման իրականացման կամ կազմակերպման կապակցությամբ ծագող իրավահարաբերության հնարավոր կողմը ցանկանում է պայմանագիր կնքել առավել արագ, ապա նա կարող է ներկայացնել պատվեր, ինչպես նաև հայտ, որոնք պետք է պարունակեն տվյալ պայմանագրի բոլոր էական պայմանները¹⁷: Տվյալ փաստաթղթերի բովանդակությունը պայմանավորված է նաև համապատասխան տրանսպորտային ծառայության բովանդակությունը պայմանավորող մի շարք գործոններով, այդ թվում՝ բեռնափոխադրման իրականացման տրանսպորտի կոնկրետ տեսակով, դրա որակական և տեխնիկական ցուցանիշներով ու տեխնիկական բնութագրերով, բեռի բնութագրերով, տրանսպորտային միջոցների տրանսպորտման, բեռի բեռնման և բեռնափոխադրման ժամկետներով, փոխադրավարձի վճարման չափով ու արժույթով և այլն: Հատկանշական է, որ հայտը և պատվերը բեռնափոխադրման բնագավառում տարբեր կերպ են կիրառվում: Պայմանավորված տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների թվով, ինչպես նաև տրանսպորտային ծառայությունների բովանդակությամբ՝ կարող է ներկայացվել հայտ (բեռնափոխադրումների կազմակերպման, տրանսպորտային միջոցների և բեռների տրա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մադրման մասին, ինչպես նաև տրանսպորտային ծառայություններ մատուցող սուբյեկտների միջև կնքվող՝ տրանսպորտային աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը կազմակերպելու մասին պայմանագրերի հիման վրա) կամ պատվեր (բեռնափոխադրման կապակցությամբ): Ընդ որում, հայտի և պատվերի ներկայացմանը կարող է ուղեկցել կազմակերպական նշանակություն ունեցող այլ տրանսպորտային փաստաթղթերի կազմումը կամ նախորդել համապատասխան պայմանագրերի կնքումը: Այսպես՝ ուղիղ հաղորդակցությունում հայտի ներկայացմանը սովորաբար նախորդում է բեռնափոխադրումների կազմակերպման պայմանագրի կնքումը, ուղիղ խառը հաղորդակցությունում կամ կանոնավոր բեռնափոխադրումների կազմակերպման հետ կապված իրավահարաբերություններում ամենօրյա կարգով ներկայացվող հայտից բացի՝ կիրառվում են նաև շաբաթական օրացուցային պլանը, տրանսպորտային միջոցների տրամադրման ամսական ժամանակացույցը, փոխադրումների իրականացման ժամանակացույցը¹⁹, տրանսպորտային միջոցների և բեռների տրամադրման մասին պայմանագիրը, տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների միջև տրանսպորտային ծառայությունների մատուցումը կամ տրանսպորտային աշխատանքների կատարումը կազմակերպելու մասին պայմանագրերը և այլն:

Հայտի և պատվերի ներկայացման իրավական հետևանքների առնչությամբ Տ. Կ. Բարսեղյանը կարծիք է արտահայտում, որ հայտ կամ պատվեր ներկայացնելը նշանակում է, որ բեռն ուղարկողը պարտավորվում է տվյալ տրանսպորտային փաստաթղթում նշված բեռը հանձնել փոխադրման, իսկ հայտի կամ պատվերի ընդունումը նշանակում է, որ փոխադրողը պարտա-

վորվում է դրանում վկայակոչված ժամկետում տրամադրել փոխադրման համար անհրաժեշտ փոխադրամիջոցներ¹⁹: Այս առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ հայտի և պատվերի կիրառմանը վերաբերող մի շարք իրավական նորմերի: Մասնավորապես, «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի²⁰ 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ պայմանագրով նախատեսված հայտի համաձայն՝ բեռներ փոխադրելու համար տրանսպորտային միջոց չտրամադրելու, բեռը չներկայացնելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցն այլ պատճառով չօգտագործելու դեպքում տրանսպորտային ծառայություն մատուցողը և բեռն ուղարկողը պատասխանատվություն են կրում՝ օրենքով սահմանված կարգով և պայմանագրի համաձայն: Տվյալ իրավական նորմից բխում է, որ հայտը կարող է ներկայացվել բացառապես պայմանագրով նախատեսված լինելու դեպքում²¹: Ընդ որում, ՀՀ որևէ իրավական ակտով նախատեսված չէ, որ հայտ կամ պատվեր ներկայացնելը համապատասխան տրանսպորտային ծառայություններից օգտվելու համար պարտադիր նախապայման է: Հարկ է հաշվի առնել, սակայն, որ հայտի, ինչպես նաև պատվերի կիրառումն ավտոմոբիլային բեռնափոխադրումները հնարավորինս արդյունավետ կարգավորելու, իրականացնելու և կազմակերպելու նպատակով գործնականում լայն տարածում գտած միջոց է: Բացի դրանից, խնդրո առարկա հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ հայտում գերազանցապես արտացոլվում են բեռնման համար պահանջվող տրանսպորտային միջոցների տրամադրման պայմանները և ժամկետները, ինչպես նաև փոխադրման համար բեռների ներկայացման պայմաններն ու ժամկետները: Այլ կերպ ասած՝ ակնհայտ է, որ հայտի կիրառման բնագավառը փոխադրումների կազմակերպման կապակցությամբ ծագող իրավահարաբերություններն են: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 864-րդ հոդվածի 1-ին մասով

նախատեսվում է, որ փոխադրողը, ընդունված հայտին (պատվերին) կամ պայմանագրին համապատասխան, բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցները չտրամադրելու, իսկ առաքողը՝ բեռը չներկայացնելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցներն այլ պատճառներով չօգտագործելու համար կրում են օրենքով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ սահմանված պատասխանատվություն: Տվյալ հոդվածի բովանդակությունից ակնհայտ է, որ դրանում հայտ և պատվեր հասկացությունները նույնացված են, սակայն այդ դեպքում հարց է առաջանում, թե ՀՀ օրենսդիրն ինչու է դրանք տարբեր եզրույթներով անվանում:

Մեր խորին համոզմամբ, հայտը նախ և առաջ կարող է կիրառվել տրանսպորտային բեռնափոխադրումների կազմակերպման բնագավառում՝ բեռնափոխադրումների կազմակերպման պայմանագրի կամ տրանսպորտային միջոցները և բեռները բեռնման համար տրամադրելու մասին պայմանագրի հիման վրա՝ դրանց կնքումից հետո: Սասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա պայմանագրերը կոնսենսուալ են, ուստի տրանսպորտային ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտություն է առաջանում այդ մասին նախապես զգուշացնելու տրանսպորտային ծառայություն մատուցող անձին, նրա հետ համաձայնեցնելու մի շարք էական պայմաններ կամ հստակեցնելու դրանց բովանդակությունը: Պետք է հաշվի առնել նաև, որ բեռնափոխադրումների կամ նմանաբովանդակ այլ պայմանագրի առկայության դեպքում հայտի ներկայացման հնարավորությունը տվյալ պայմանագրերով պետք է ուղղակիորեն նախատեսված լինի, հստակեցված լինեն դրա ներկայացման կարգը և պայմանները, ինչպես նաև այն, թե տրանսպորտային ծառայությունների իրականացումից որքան ժամանակ առաջ այն պետք է ներկայացվի, և այլն: Սակայն չի բացառվում նաև պայմանագրային հիմքի բացա-

կայության դեպքում հայտի ներկայացման հնարավորությունը, ընդ որում՝ եթե այն պարունակում է համապատասխան պայմանագրի բոլոր էական պայմանները և համաձայնեցվել է տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտի հետ ու ընդունվել վերջինիս կողմից, ապա ակցեպտավորված հայտը ինքնին կարող է հիմք հանդիսանալ համապատասխան տրանսպորտային պայմանագրի կնքման համար²²: Համապատասխանաբար, եթե նախորդող պայմանագրային հիմքի բացակայության դեպքում ներկայացվել է ոչ բոլոր էական պայմանները պարունակող հայտ, ապա անգամ դրա ընդունման և դրա վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու դեպքում համապատասխան տրանսպորտային պայմանագիրը կնքված չի համարվի, քանի որ համաձայնությունը տվյալ պայմանագրի ոչ բոլոր էական պայմանների վերաբերյալ է ձեռք բերվել²³:

Ինչ վերաբերում է պատվերին, ապա այն կիրառելի է բեռնափոխադրումների պայմանագրի կնքման, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների կատարման նպատակով: Պատվերի ներկայացման հնարավորությունը կարող է բեռնափոխադրումների պայմանագրի համար իրավական նախադրյալ հանդիսացող բեռնափոխադրումների կազմակերպման պայմանագրով նախատեսված լինել (դրա առկայության դեպքում) կամ նախատեսված չլինել (դրա բացակայության դեպքում), ընդ որում՝ բեռնափոխադրումների կազմակերպման պայմանագրի՝ որպես բեռնափոխադրման պայմանագրի իրավական նախադրյալի առկայությունը նույնպես պարտադիր պայման չէ: Հատկանշական է նաև, որ ՀՀ գործող օրենսդրությամբ բեռնափոխադրումների պայմանագիր կնքելու համար պատվեր ներկայացնելը և պարտադիր նախադրյալ չի հանդիսանում, սակայն ներկայացվելու դեպքում այն պետք է ամրագրի բեռնափոխադրման պայմանագրի բոլոր էական պայմանները:

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 864-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հայտի կամ պատվերի ներկայացման և փոխադրողի (տրանսպորտային ծառայություն մատուցողի) կողմից այն չներժվելու կամ ընդունվելու դեպքերում մի շարք տրանսպորտային գործողություններ պետք է անվերապահորեն կատարվեն, հակառակ դեպքում՝ վրա են հասնում անբարենպաստ հետևանքներ: Այլ կերպ ասած՝ եթե հայտի կամ պատվերի տեսքով պատշաճ տրանսպորտային փաստաթուղթ է կիրառվել, ապա այն իրավաբանորեն չի կարող անհետևանք մնալ: Ընդ որում, հայտ կամ պատվեր ներկայացնելը որոշակի իրավաբանական հետևանքներ կարող է առաջացնել անգամ այն դեպքում, երբ սխալ կամ թերի տվյալներ է պարունակում: Այսպես, Վ. Ա. Եղիազարովը նշում է, որ եթե բեռն ուղարկողը հայտը կամ պատվերը լրացրել է սխալներով, իսկ փոխադրողն ընդունել է սխալ լրացված փաստաթուղթը, ապա նշված անձինք երկուսն էլ պատասխանատու են տվյալ հայտը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար²⁴: Կարծում ենք, որ հայտում կամ պատվերում թերությունների առկայության դեպքում փոխադրողը կամ այլ տրանսպորտային ծառայություն մատուցողը պարտավոր է այն վերադարձնել բեռն ուղարկողին՝ հնարավորություն տալով շտկելու թերությունները և կրկին ներկայացնելու տվյալ տրանսպորտային փաստաթուղթը՝ պահպանելով սահմանված ժամկետի համաչափությունը: Սակայն, եթե նման թերությունները համապատասխան տրանսպորտային ծառայություն մատուցող անձի կողմից ժամանակին չեն հայտնաբերվել, իսկ տրանսպորտային փաստաթուղթն ընդունվել է, ապա նա պետք է պարտավորությունը կատարի հայտում կամ պատվերում նշված տվյալներին համապատասխան՝ բացառությամբ տվյալ

տրանսպորտային փաստաթուղթը համապատասխան պայմանագրի բոլոր էական պայմաններն է արտացոլում, քանի որ տվյալ դեպքում հայտը կամ պատվերը կհամարվի չկազմված:

Հատկանշական է, որ թե՛ վերը նշված իրավական նորմերով և թե՛ ՀՀ գործող օրենսդրության բաղկացուցիչ մասը կազմող այլ իրավական ակտերով որևէ կերպ սահմանված չեն հայտի և պատվերի ներկայացման կարգը, ժամկետները, դրանց հետևանքների կամ դրանցում ներկայացված պահանջից հրաժարվելու հետ կապված, ինչպես նաև հայտը կամ պատվերը փոխադրողի կողմից ընդունվելու և դրանց վերաբերյալ պատասխան ներկայացնելու հարցերը:

Տ. Կ. Բարսեղյանի դիրքորոշման համաձայն՝ որպես կանոն՝ բեռն ուղարկողը հայտը (պատվերը) պետք է ներկայացնի փոխադրումից 10 օր առաջ, իսկ փոխադրողը պարտավոր է հայտը կամ պատվերը քննարկել 3-10 օրվա ընթացքում և բեռն ուղարկողին տեղեկացնել այն ընդունելու կամ մերժելու մասին²⁵: Այս առնչությամբ Վ. Ա. Եղիազարովը գտնում է, որ տրանսպորտի տարբեր տեսակների դեպքում կարող են սահմանվել պատասխանի ներկայացման ավելի կարճ կամ երկար տևողությամբ ժամկետներ: Մասնավորապես, հեղինակը նշում է, որ ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառում հայտը կամ պատվերը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան բեռնափոխադրումն անմիջականորեն սկսվելուց 14 ժամ առաջ՝ ներքաղաքային և մերձքաղաքային փոխադրումների դեպքում, և 48 ժամ առաջ՝ միջպետական փոխադրումների դեպքում²⁶, և այդ նույն ժամկետներում էլ պետք է ներկայացվի դրանց վերաբերյալ պատասխանը: Բացի դրանից, ըստ հեղինակի՝ բեռնափոխադրումների կազմակերպման պայմանագիր կնքելիս դրանում պետք է նախատեսվի այն մոտավոր ժամանակահատվածը, որի ընթացքում բեռն ուղարկողը հայտով դիմելու է բեռնափոխադրումների իրականացման

համար, իսկ սահմանված ժամանակահատվածում հայտ չներկայացնելը պետք է դիտվի որպես հրաժարում բեռնափոխադրման համար տրանսպորտային միջոցից օգտվելուց²⁷: Նշված դիրքորոշումը պայմանավորված է տրանսպորտային շուկայական հարաբերությունների բնույթով, որի նպատակը, մի կողմից, ապրանքների իրացման գործընթացը հնարավորինս սեղմ ժամկետներում կազմակերպելն է՝ ապահովելով իրացման ծավալների և շահութաբերության աճ, մյուս կողմից՝ տրանսպորտային ծառայությունների մատուցման կայունությունն ու արդյունավետությունն է:

ՀՀ գործող օրենսդրությամբ հայտի և պատվերի, ինչպես նաև դրանց վերաբերյալ պատասխանի ներկայացման համար ժամկետներ չնախատեսելը, ճիշտ է, մի կողմից, նպատակ ունի տրանսպորտային բեռնափոխադրման պայմանագրերի կողմերին ձերբազատել ավելորդ սահմանափակումներից և արգելքներից, սակայն կարող է նաև չարաշահումների տեղիք տալ, քանի որ ելնելով ծանրաբեռնվածությունից՝ տրանսպորտային կազմակերպությունները կարող են նաև ավելի ուշ պատասխանել՝ ձգտելով լրացուցիչ շահույթ ստանալու նպատակով ժամանակ շահել ու փոխադրման համար անհրաժեշտ միջոցներ ու աղբյուրներ հայթայթել՝ դրանով իսկ վնասելով հայտ կամ պատվեր ներկայացնողի տնտեսական գործունեությանը: Այս առնչությամբ Տ. Կ. Բարսեղյանը նշում է, որ եթե սահմանված ժամկետում փոխադրողը բեռն ուղարկողին չի տեղեկացնում հայտը մերժելու մասին, ապա այն համարվում է ընդունված²⁸:

Տրանսպորտային իրավահարաբերություններում հայտի և պատվերի կիրառման առնչությամբ օրենսդրական կարգավորման կարիք ունի նաև այն հարցը, թե տվյալ տրանսպորտային փաստաթուղթն ուղարկած անձն արդյոք կարող է այն հետ կանչել: Այսպես, ելնելով օֆերենտի մտադրությունից՝ օֆերտան կարող է լինել հետ-

կանչելի կամ անհետկանչելի²⁹: Սակայն Յու. Մ. Ռոստովսկու և Վ. Յու. Գրեչկովի կարծիքով՝ պատվերը և հայտը իրավաբանական ուժով համարժեք են անհետկանչելի օֆերտային³⁰: Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 452-րդ հոդվածին, համաձայն որի՝ հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է: Կարծում ենք, որ պատվերը և հայտն անհետկանչելի օֆերտա համարելու մոտեցումը չափազանցված է, քանի որ նույն հեղինակները, օրինակ՝ պատվերը և հայտը բնորոշելիս դրանք սահմանում են որպես պասիվ օֆերտաներ³¹, իսկ եթե օֆերտան կարող է հետկանչելի լինել, ապա ինչու պատվերը և հայտը չեն կարող ինչպես անհետկանչելի, այնպես էլ հետկանչելի լինել: Ուստի գտնում ենք, որ նախքան պատվերը կամ հայտը տրանսպորտային գործունեություն իրականացնող անձի կողմից ստացված լինելը այն կարող է հետ կանչվել ցանկացած դեպքում, մինչդեռ հասցեատիրոջ կողմից ստացված պատվերը կարող է հետ կանչվել դրա վերաբերյալ պատասխանի համար սահմանված ժամկետում, եթե տվյալ տրանսպորտային փաստաթղթում կատարվել է նման վերապահում, կամ դա բխում է պատվերի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:

Վերը նշված պատճառաբանությունները հաշվի առնելով՝ կարծում ենք, որ հայտի և պատվերի կիրառման առնչությամբ ՀՀ տրանսպորտային օրենսդրությունը լրամշակման կարիք ունի: Ուստի առաջարկում ենք «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավական նորմում, ինչպես նաև խնդրո առակա հարցի առնչությամբ այդ նորմի հետ կապված՝ ճյուղային օրենսդրության (ներառյալ՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օ-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րենքի³²⁾ այլ իրավական դրույթներում կատարել լրացումներ՝ սահմանելով հետևյալը. «Տրանսպորտային փոխադրման համար բեռն ուղարկողի կողմից հայտ կամ պատվեր ներկայացվելու յուրաքանչյուր դեպքում տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտը (ներառյալ՝ փոխադրողը) պարտավորվում է ոչ ուշ, քան դրանում նշված և (կամ) իր և բեռն ուղարկողի փոխադարձ համաձայնությամբ սահմանված ժամկետում վերջինիս հայտի կամ պատվերի վերաբերյալ պատասխան ներկայացնել:

Հայտի կամ պատվերի վերաբերյալ պատասխան ներկայացնելու համար ժամկետը հայտում կամ պատվերում նշված չլինելու կամ բեռն ուղարկողի ու տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտի (ներառյալ՝ փոխադրողի) փոխադարձ համաձայնությամբ սահմանված չլինելու դեպքում դրա տևողությունը կարող է սահմանվել առավելագույնը 7 աշխատանքային օր՝ հաշվի առնելով փոխադրման ծավալները, փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներին ներկայացվող լրացուցիչ պահանջները, փոխադրման իրականացման ժամկետները և այլն:

Նախորդ պարբերությամբ սահմանված ժամկետում հայտի կամ պատվերի վերաբերյալ պատասխան չներկայացվելու դեպքում այն համարվում է ընդունված, եթե, հիմք ընդունելով հայտի կամ պատվերի քննարկման և փոխադրումների իրականացումն սկսելու ժամկետների հարաբերակցությունը, հայտը կամ պատվերը ներկայացրած անձը չի կորցրել տրանսպորտային ծառայության մատուցման և (կամ) աշխատանքի կատարման նկատմամբ հետաքրքրությունը:

Տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտի (ներառյալ՝ փոխադրողի) կողմից ստացված հայտը կամ

պատվերն այն ուղարկած անձի կողմից կարող է հետ կանչվել դրա վերաբերյալ պատասխանի համար սահմանված ժամկետի ընթացքում, եթե հայտում կամ պատվերում կատարվել է նման վերապահում, կամ դա բխում է պատվերի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է»:

Անհրաժեշտ ենք համարում նաև շեշտել, որ հայտի կամ պատվերի վերաբերյալ պատասխան ներկայացնելու, ինչպես նաև հայտը կամ պատվերն ընդունելու ժամկետները կարող են չհամընկնել: Օրինակ, հայտի կամ պատվերի վերաբերյալ պատասխանը կարող է ներկայացվել նախքան դրա գործողության ժամկետի ավարտը, մինչդեռ լուծությամբ պատվերն ընդունվելու դեպքում՝ այն լրանալուն պես: Սասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուծությունն ակցեպտ չէ, եթե այլ բան չի բխում օրենքից, գործարար շրջանառության սովորույթից կամ կողմերի նախկին գործարար հարաբերություններից: Իր հերթին, պատվերի անվերապահ ակցեպտավորումը վկայում է գործարքի կնքման մասին, ինչն ընդունված է անվանել «պատվերի տեղաբաշխում»³³⁾:

Իր հերթին, ընդունված կամ չմերժված հայտի կամ պատվերի, այդ թվում՝ հայտի կամ պատվերի վերաբերյալ պատասխանի ներկայացման միջոցով համաձայնեցված պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում վրա է հասնում տրանսպորտային օրենսդրությամբ նախատեսված գույքային պատասխանատվությունը³⁴⁾ բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ուսումնասիրության արժանի է նաև այն հարցը, թե որ դեպքերում է կարելի մերժել խնդրո առարկա տրանսպորտային փաստաթղթերի ընդունումը: Այսպես, եթե հայտում կամ պատվերում սխալների կամ թերությունների հայտնաբերման դեպքում փոխադրողն իրավունք ունի այն վերադարձնել, ապա ճիշտ լրացված հայտը կամ պատվերը փոխադրողի կողմից կա-

րող է մերժվել՝ անկախ հայտը կամ պատվերը լրացրած անձի կողմից որևէ սխալ թույլ տալու հանգամանքից: Վ. Ա. Եղիազարովի կարծիքով՝ հայտի կամ պատվերի ընդունումը կարող է մերժվել, եթե նման փոխադրման իրականացմանն արգելք են հանդիսանում տեխնիկական-տեխնոլոգիական հնարավորությունների բացակայությունը կամ սահմանափակ լինելը, համապատասխան ուղղությամբ որոշակի բեռնափոխադրումների կամ ապրանքների արտահանումների ծավալների սահմանափակումը կամ արգելքը, ենթակառուցվածքի սեփականատիրոջ մերժումը՝ հայտի համաձայնեցման վերաբերյալ, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում³⁵: Հատկանշական է, որ հայտի կամ պատվերի մերժման համար հիմքեր ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված չեն: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 864-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում հայտը, ինչպես նաև պատվերը չկատարած սուբյեկտն ազատվում է դրա համար պատասխանատվությունից: Մասնավորապես՝ դրանք այն դեպքերն են, որոնք առաջացել են անհաղթահարելի բնույթի հանգամանքների (տարերային երևույթներ՝ հրդեհ, ջրհեղեղ և այլն, ռազմական գործողություններ և այլն) հետևանքով, որոշակի ուղղություններով բեռների փոխադրումներն օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես դադարեցնելու կամ սահմանափակելու հետևանքով (սովորաբար՝ համապատասխան հետևանքներ առաջացնող իրավական ակտի հիման վրա), ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում³⁶:

Հատկանշական է, որ տրանսպորտային բեռնափոխադրումներում կիրառվում է նաև հայտ-ժամուցումը: Այն նույնպես կարգավորիչ նշանակություն ունի, սակայն տրանսպորտի որոշ բնագավառներում պարտադիր է ներկայացման համար: Օրենսդրորեն չձևակերպված, սակայն գործնականում լայնորեն կիրառվող կանոնի

համաձայն՝ յուրաքանչյուր փոխադրող պարտավորվում է նախապես՝ տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների միջև կնքվող պայմանագրով սահմանված ժամկետներում մյուս փոխադրողին կամ այլ տրանսպորտային գործունեություն իրականացնող անձին տեղեկացնել բեռի ընդունման, տրանսպորտային միջոցների տրամադրման, տրանսպորտային ծառայության մատուցման կամ տրանսպորտային աշխատանքի կատարման անհրաժեշտության առաջացման մասին³⁷: Այսպես, ուղիղ կամ ուղիղ խառը հաղորդակցությունում տարբեր փոխադրողների կողմից բեռնափոխադրումների իրականացման ընթացքում բեռը միմյանց փոխանցելիս կիրառվում են հայտ-ժամուցումները, որոնցում պետք է արտացոլվեն բեռների քաշը, բեռնատեղերը, բեռների խմբաքանակը, տրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրերը և այլ անհրաժեշտ ու բավարար տվյալներ³⁸: Հայտ-ժամուցումն անհրաժեշտ է տարբերել պատվերից և հայտից: Մասնավորապես, պատվերը բեռնափոխադրման կարիք ունեցող սուբյեկտի՝ բեռն ուղարկողի կողմից փոխադրողին ներկայացվող տրանսպորտային փաստաթուղթ է, որի հիման վրա հստակեցվում և որոշակիացվում են ակնկալվող բեռնափոխադրման պայմանները, դրան ներկայացվող պահանջները, վերաբերելի չափորոշիչները և տեխնիկական բնութագրերը: Հայտը բեռնափոխադրումների կազմակերպման պայմանագրի կամ տրանսպորտային միջոցները ու բեռը բեռնման համար տրամադրելու մասին պայմանագրի հիման վրա՝ բեռնափոխադրման նախապատրաստական աշխատանքների կատարման նպատակով տրանսպորտային միջոցի կարիք ունեցող անձի (բեռն ուղարկողի) կողմից տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտին (այդ թվում՝ փոխադրողին) ներկայացվող՝ կազմակերպական և կարգավորիչ նշանակություն ունեցող տրանսպորտային փաստաթուղթ է, որով

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նախատեսվում են բեռների բնութագրերը, բեռնման համար ներկայացման ժամկետները, կարգը և այլ պայմանները, անհրաժեշտ տրանսպորտային միջոցների տրամադրման ժամկետները, դրանց տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, այլ պայմաններ:

Հայտ-ծանուցումն ուղիղ կամ ուղիղ խառը բեռնափոխադրումների, ինչպես նաև այլ տրանսպորտային ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը կազմակերպելու նպատակով կիրառվող՝ տեղեկատվական և կարգավորիչ նշանակություն ունեցող տրանսպորտային փաստաթուղթ է, որը տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների, այդ թվում՝ փոխադրողների կողմից միմյանց է ներկայացվում տրանսպորտային կազմակերպությունների միջև նույնանուն ծառայությունների մատուցումը կամ աշխատանքների կատարումը կազմակերպելու մասին պայմանագրերով սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներում: Այսպիսով՝ հայտ-ծանուցումը կիրառվում է տրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների միջև փոխադրաբեռնությունների կարգավորման նպատակով, ընդ որում՝ ամենօրյա հայտ-ծանուցման գործողության ժամկետը մեկ օր է: Հարկ է նշել նաև, որ, ի տարբերություն հայտի չկատարման

հետևանքների, որոնց պարագայում հիմնականում վնաս է պատճառվում բեռն ուղարկողին՝ հայտ-ծանուցումը չկատարվելու դեպքում դրա հետևանքով առաջացող վնասները կարող են ահռելի լինել, քանի որ առնչվում են այլ տրանսպորտային ընկերությունների հետ և, փաստորեն, խափանում նրանց տնտեսական գործունեությունը: Ուստի հայտ-ծանուցման դերն ավտոմոբիլային բեռնափոխադրումներում նաև ապացուցողական է, ինչը հետագայում հնարավորություն է տալիս հաստատելու, որ պարտավոր կողմը, ով չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել համապատասխան պարտավորությունը, նախապես ծանուցված է եղել դրա կատարման պայմանների և ժամկետների մասին:

Ուշագրավ է նաև, որ հայտ-ծանուցման այլընտրանքային տարբերակը ծովային բեռնափոխադրումներում ժամանակացույցերը և ժամատախտակներն են³⁹, թեև ավտոմոբիլային բեռնափոխադրումներում նույնպես բացառված և արգելված չէ դրանց կիրառման հնարավորությունը⁴⁰:

Այսպիսով, վերը շարադրված վերլուծության հիման վրա կարող ենք փաստել, որ հայտը և պատվերը կարևոր նշանակություն ունեն ավտոմոբիլային բեռնափոխադրման պարտավորությունների տարրերի որոշակիացման և հստակեցման հարցում՝ այդ նպատակով ծառայելով որպես կազմակերպական ու իրավակարգավորիչ արդյունավետ իրավական գործիքներ:

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդվածի 2-րդ մասը:

² Տե՛ս Советское гражданское право, под ред. О. А. Красавчикова, том 2, изд.-во “Высшая школа”, М., 1969 г., էջ 237:

³ Տե՛ս Егиазаров В. А., Транспортное право, учебное пособие, изд.-во “Юстицинформ”, М., 2007 г., էջ 50: Տե՛ս նաև www.pravoznavec.com համացանցային էջը:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, խմբագիրներ՝ Ղարախանյան Գ. Հ., Պետրոսյան Ռ. Գ., 44-րդ գլխի հեղինակ՝ Բարսեղյան Տ. Կ., Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 2001 թ., էջ 374:

⁵ Տե՛ս Хаскельберг Б. Л., Обязательство железнодорожной перевозки груза по советскому праву, автореф. докт. дисс., Томск, 1969 г., էջ 8:

- ⁶ Տե՛ս Яичков К. К., Договор железнодорожной перевозки грузов по советскому праву, изд-во “АН СССР”, М., 1958 г., էջեր 60-63:
- ⁷ Տե՛ս Алексеев С. С., О взаимодействии административно-правового и гражданско-правового регулирования в социалистическом обществе, журнал “Правоведение”, N3, 1959 г., էջ 42:
- ⁸ Տե՛ս Смирнов В. Т., Правовое регулирование грузовых перевозок в СССР, автореф. докт. дисс., Л., 1970 г., էջ 7, Морозов С. Ю., Транспортное право, изд.-во “Волтерс Клувер”, М., 2010 г., էջ 133:
- ⁹ Տե՛ս Егоров К. Ф., Гражданско-правовая ответственность за невыполнение плана грузовых перевозок, Автореф. канд. дисс., Л., 1955 г., էջ 7:
- ¹⁰ Տե՛ս Витрянский В. В., Договор перевозки, издательство “Статут”, М., 2001 г., էջեր 229-230:
- ¹¹ Պատվերի ակցեպտավորումը դեռևս չի վկայում այն մասին, որ ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիրը կնքված է, քանի որ այն ռեալ պայմանագիր է և կնքված է համարվում փոխադրման նպատակով բեռը փոխադրողին հանձնելու պահից՝ բեռնափոխադրողի կողմից այդ կապակցությամբ ապրանքատրանսպորտային բեռնագրի տրամադրմամբ: Դրա հետ մեկտեղ, կարծում ենք, որ ակցեպտավորված պատվերը վկայում է ավտոմոբիլային բեռնափոխադրման պայմանագիր կնքելու պարտավորվածության մասին:
- ¹² Տե՛ս Ростовский Ю. М., Гречков В. Ю., Внешнеэкономическая деятельность, издательство “Экономисть”, М., 2006 г., էջեր 126-127: Մասնավորապես, տվյալ հեղինակների կողմից օֆերտան բնորոշվում է որպես ապրանքների մատակարարման, աշխատանքի կատարման, ծառայության մատուցման վերաբերյալ առևտրային առաջարկ, որը հնարավոր վաճառողը հղում է մեկ կամ մի քանի հնարավոր գնորդների՝ պայմանագիր կնքելու նպատակով, իսկ բեռնափոխադրման պատվերը համապատասխան տրանսպորտային ծառայության մատուցման մասին պայմանագիր կնքելու առաջարկ է:
- ¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 126:
- ¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 126:
- ¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 130:
- ¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 131:
- ¹⁷ Տե՛ս նույն տեղը:
- ¹⁸ Տե՛ս Егиазаров В. А., նշվ. աշխ.:
- ¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 2001 թ., էջ 374:
- ²⁰ Տե՛ս թիվ ՉՕ-201 օրենք, ընդունվել է 03.02.1998 թ., ստորագրվել է 07.03.1998 թ., ուժի մեջ է մտել 24.03.1998 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 1998/6 (39), 14.03.1998 թ.:
- ²¹ Այս առնչությամբ, կարծում ենք, որ հայտեր կարող են ներկայացվել նաև պայմանագրի բացակայության դեպքում՝ հիմք հանդիսանալով դրա էական պայմանների վերաբերյալ համաձայնության ձեռքբերման համար:
- ²² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:
- ²³ Տե՛ս նույն տեղը:
- ²⁴ Տե՛ս Егиазаров В. А., նշվ. աշխ., էջ 52:
- ²⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 2001 թ., էջ 374:
- ²⁶ Տե՛ս Егиазаров В. А., նշվ. աշխ., էջ 52:
- ²⁷ Տե՛ս Егиазаров В. А., նշվ. աշխ., էջ 52:
- ²⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան, 2001 թ., էջ 374:
- ²⁹ Տե՛ս Ростовский Ю. М., Гречков В. Ю., նշված աշխատության, էջեր 126-127:
- ³⁰ Տե՛ս Ростовский Ю. М., Гречков В. Ю., նույն տեղում:
- ³¹ Տե՛ս Ростовский Ю. М., Гречков В. Ю., նույն տեղում:
- ³² Տե՛ս թիվ ՉՕ-233-Ն օրենք (ընդունվել է 05.12.2006 թ., ստորագրվել է 21.12.2006 թ., ուժի մեջ է մտել 06.01.2007 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2006/67 (522), 27.12.2006 թ., հոդված 1404):
- ³³ Տե՛ս Ростовский Ю. М., Гречков В. Ю., նշված աշխատության, էջ 131:
- ³⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

քացիական իրավունք, երկրորդ մաս, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2001 թ., էջ 374, ինչպես նաև «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը՝ բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

³⁵ Տե՛ս Երուզարով Բ. Ա., նշվ. աշխ., էջ 57:

³⁶ Հատկանշական է, որ «օրենքով սահմանված դեպքերը» ՀՀ գործող օրենսդրությամբ մանրամասնված չեն: Այս առումով, կարծում ենք, որ պատասխանատվությունից ազատող հանգամանքների շարքում նպատակահարմար է նաև նախատեսել պարտավորության կատարումն անհնարին դարձնող՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված կամ համապատասխան պարտավորության էությունից բխող հանգամանքները: Օրինակ՝ կողմերը կարող են պայմանավորվել, որ բեռնափոխադրման համար փոխադրավարձը պետք է ներկայացվի նախքան բեռնափոխադրումների իրականացումը, իսկ այն ժամանակին չկատարվելու դեպքում փոխադրողն ազատվում է ստանձնած պարտավորության կատարումից:

րության կատարումից:

³⁷ Տե՛ս Երուզարով Բ. Ա., նշվ. աշխ., էջ 57:

³⁸ Տե՛ս նույն տեղում:

³⁹ Տե՛ս Երուզարով Բ. Ա., նշվ. աշխ., էջ 58:

⁴⁰ Տե՛ս, մասնավորապես, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 28-րդ պարբերությունը, որի համաձայն՝ չվացուցակը աղյուսակ կամ ժամանակացույց է, որը ներառում է ավտոբուսների շարժման ժամանակի, տեղի և երթերի իրականացման հաջորդականության մասին տվյալներ: Կարծում ենք, որ չվացուցակը նպատակահարմար է կիրառել նաև բեռնափոխադրումների բնագավառում, ուստի առաջարկում ենք այդ կապակցությամբ խմբագրել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 28-րդ պարբերությունը՝ օրենսդրորեն ամրագրելով ավտոտրանսպորտային փոխադրամիջոցի շարժման ժամանակի, տեղի և ուղերթի վերաբերյալ չվացուցակ կազմելու հնարավորությունը:

THE ROLE AND SIGNIFICANCE OF ORDERS AND CLAIMS IN THE FIELD OF ROAD CARGO CARRIAGES

Lilit KAMALYAN

*PhD student, Civil Law Chair, Law Faculty,
Yerevan State University*

This article covers the problem of the role and significance of an order and a claim in the sphere of domestic road cargo carriages in the Republic of Armenia. The frameworks of implementation of the order and the claim are duly distinguished by the author with regard to that. Correspondingly, the process of organization of cargo carriages is mentioned to be the area of implementation of claims, and the process of execution of cargo carriages is offered to be the area of presentation of orders.

All the possible displays of the significance of these transport documents are divulged by the author in detail and multifac-

eted manner in the researched area with regard to that. Under the research of problematic aspects concerning the current issue the author comes to a conclusion that the legislation of the Republic of Armenia should be amended by respective legal norms governing the features of application of these transport documents in the sphere of domestic road cargo carriages. Particularly, the author suggests to establish time-limits for submitting these documents to the transport organizations, and an appropriate time frame for submitting answers to those documents, as well. Also the ways of acceptance of the transport documents mentioned above are taken into consideration in the present article. Besides, the author offers to prescribe legally that in some cases - which should be provided for in respective transport legal acts - the forwarder should have a right to call the order or the claim back.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԻԳՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայրորդ

Աշխատանքային պայմանագիրը աշխատանքային իրավունքի կարևորագույն և կենտրոնական ինստիտուտն է: Հենց աշխատանքային պայմանագրի հիման վրա են ծագում, փոփոխվում և դադարում աշխատանքային հարաբերությունները: Առանձին երկրներում գործում են անգամ աշխատանքային պայմանագրի մասին առանձին օրենքներ, օրինակ՝ Բելգիայում, Պորտուգալիայում, Էստոնիայում և այլուր¹:

Սովորաբար աշխատանքային պայմանագիր կնքելիս դրա ձևին և բովանդակությանը որոշակի պահանջներ են ներկայացվում:

Գործող աշխատանքային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) չի նախատեսել բանավոր աշխատանքային պայմանագրի կնքման հնարավորությունը: Այն սահմանված էր նախկին ՀՍՍՀ 1972 թ. աշխատանքային օրենսգրքով, որը ուժը կորցրած ճանաչվեց 2004 թ.-ին՝ գործող օրենսգրքի ընդունմամբ:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ միգրանտների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր անգամ այն երկրներում, որտեղ քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաև բանավոր: Օրինակ՝ Դ.Վ. Չերնյակևան, ուսումնասիրելով Իսրայելի աշխատանքային օրենսդրության առանձնահատկությունը, բացահայտել է, որ այստեղ դատական նախադեպի միջոցով սահ-

մանվել է, որ աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել և՛ գրավոր, և՛ բանավոր, իհարկե նախընտրելի է գրավոր աշխատանքային պայմանագիրը: Միևնույն ժամանակ աշխատանքային պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության միայն այն դեպքում, երբ աշխատողի դերում հանդես են գալիս միգրանտները²:

Հայաստանի Հանրապետությունում միգրանտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի ձևի տեսանկյունից տարբերակում չի դրվում ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների միջև, սակայն նույնը չի կարելի ասել աշխատանքային պայմանագրի բովանդակության և էական պայմանների մասին:

Հարկ ենք համարում նշել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի բովանդակության նկատմամբ կիրառվում է աշխատանքի կատարման վայրի օրենքը³, որը ամրագրված է Հունգարիայի, Իսպանիայի, Շվեդիայի և այլ երկրների օրենսդրությամբ: Այս նույն մոտեցումը արտացոլված է նաև Օրենսգրքի 7-րդ հոդվածում: Բոլոր դեպքերում իրավաբանական գրականության մեջ քիչ չեն դեպքերը, երբ գիտնականներն առաջարկում են աշխատանքային հարաբերությունների նկատմամբ կիրառել կամքի ինքնավարության սկզբունքը⁴, դեռ ավելին՝ այս սկզբունքը որոշ երկրներում անգամ ստացել է իր օրենսդրական արտացոլումը: Օրինակ՝ Լեհաստանի 1965 թ. Միջազգային մասնավոր իրավունքի մասին օրենքի 32-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերն իրավունք ունեն իրենց աշխատանքային հարաբերություններում դեկա-

վարվել փոխադարձ համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով, եթե այդ իրավունքն առնչություն ունի իրավահարաբերության հետ: Ինչևէ, մենք համակարծիք ենք Վ. Լ. Բելիխի այն տեսակետին, որ կամքի ինքնավարության սկզբունքը աշխատանքային հարաբերություններում կիրառելի չէ, քանի որ աշխատանքային իրավունքն ավելի շուտ հանրային իրավական ուղղվածություն ունի, և այստեղ կողմերի ազատ ընտրության իրավունքը խիստ սահմանափակված է:⁵

Վերջապես, աշխատանքային պայմանագրի բովանդակության նկատմամբ Օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով չի գործում քաղաքացիական իրավունքին բնորոշ սկզբունքներից մեկը՝ պայմանագրի ազատության սկզբունքը, անկախ այն հանգամանքից՝ աշխատողը ՀՀ քաղաքացի՞ է, թե՞ օտարերկրացի, ուստի այս նույն տրամաբանությամբ, կարծում ենք, արդարացի չի լինի կիրառել նաև կամքի ինքնավարության սկզբունքը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ պայմանագրի էական պայմաններ են համարվում դրա բոլոր այն կետերը, որոնց առկայությունը տվյալ պայմանագրում անհրաժեշտ է, և պայմանագիրը կնքված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ համաձայնություն է կայացվել բոլոր այդ պայմանների շուրջ⁶:

Աշխատանքային պայմանագրի էական պայմանների մասին արտահայտվելիս որոշ գիտնականներ այն կարծիքին են, որ աշխատանքային պայմանագրի համար էական պայման են համարվում միայն աշխատանքային գործառույթի և աշխատանքի վայրի մասին պայմանները, որոնց մասին կողմերի համաձայնությունը արդեն իսկ բավական է, որպեսզի աշխատանքային պայմանագիրը համարվի կնքված⁷: Մենք մասամբ ենք կիսում այս մոտեցումը՝ համարելով, որ աշխատանքային պայմանագրի էական պայման է համարվում նաև աշխատավարձի չափը: Մնացած պայմանները, ինչպես օրինակ՝ պայմանագրի ժամ-

կետը, փորձաշրջանի մասին պայմանը, առանձին դեպքերում աշխատաժամանակը և այլն, մեր կարծիքով, համարվում են ընդամենը հստակեցնող պայմաններ, որոնց բացակայությունը չի կարող հանգեցնել աշխատանքային պայմանագրի անվավերության:

Միգրանտների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի բովանդակությանը ներկայացվում են երկու խումբ պահանջներ, որոնց մի մասը ամրագրված է ներպետական օրենսդրությամբ, իսկ մյուս մասը՝ միջազգային իրավական նորմերով:

1. Գործող աշխատանքային օրենսգիրքը 2010թ. օգոստոս ամսվա խմբագրությամբ չի սահմանել աշխատանքային պայմանագրի էական պայմանները, այլ ընդամենը նշել է, թե ինչպիսի բովանդակություն պետք է ունենա աշխատանքի ընդունման մասին անհատական ակտը՝ ավելացնելով նաև, որ անհատական ակտի բովանդակությունը կազմող կետերից 2-11-ը, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը նշվում են գրավոր աշխատանքային պայմանագրում:

Ուստի նշված իրավական նորմի տառացի մեկնաբանությունից ստացվում է, որ աշխատանքային պայմանագրում գործատուն պարտավոր է սահմանել հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կնքման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը.

2) աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.

3) կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.

4) կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում).

5) աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.

6) պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները.

7) աշխատավարձի չափը և (կամ) այն

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

որոշելու ձևը.

8) աշխատողներին սահմանված կարգով տրվող հավելումները, հավելավճարները, լրավճարները և այլն.

9) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում).

10) կողմերի համաձայնությամբ՝ փորձաշրջանի տևողությունը.

11) աշխատաժամանակը՝ ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքային ռեժիմ սահմանելու դեպքում.

12) իրավական ակտի ընդունման հիմքը (անձի դիմումը, աշխատողին մեկ այլ գործատուի մոտ տեղափոխելու վերաբերյալ համաձայնությունը, գրավոր աշխատանքային պայմանագիրը և այլն)՝ առկայության դեպքում.

13) իրավական ակտը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը:

Ընդ որում, առկա իրավական ձևակերպման պայմաններում ստացվում է, որ նշված բոլոր պայմանները համարվում են էական, ինչը ոչ միայն անտրամաբանական է, այլ նաև իրավական անորոշություն է ստեղծում պայմանագրի անվավերության տեսանկյունից: Գուցե պայմանագրի ժամկետի և փորձաշրջանի մասին պայմանները աշխատանքային պայմանագրում նշելը այլ իրավական նորմերի ուժով (համապատասխանաբար՝ հոդվածներ 95-րդ և 91-րդ) գործատուի իրավունքն է, սակայն օրինակ՝ աշխատողին սահմանված կարգով վճարվող հավելումները, հավելավճարները և լրավճարները պայմանագրում գործատուին պարտավոր է նշել անվերապահորեն, հարց է առաջանում մասնավորապես՝ ինչպիսի իրավական հետևանքներ կարող է առաջացնել այս պայմանի բացակայությունը աշխատանքային պայմանագրում: Ավելին՝ ինչո՞վ է արդարացված նման պայման աշխատանքային պայմանագրում սահմանելու օրենսդրի մոտեցումը այն

դեպքում, երբ աշխատողին հավելավճարներ տրամադրվում են անկախ կողմերի համաձայնությունից՝ օրենքով սահմանված չափով, իսկ այն դեպքում, երբ համապատասխան հավելումները կողմերի համաձայնության արդյունք են, ապա դրանք ներառվում են աշխատավարձի չափի մեջ: Ի վերջո, եթե կողմերը սահմանել են ավելի բարձր հավելավճարի չափ, քան սահմանված է օրենքով, ապա այն գործատուի կամահայտնությունն է, որին աշխատողի անհամաձայնությունը կկրեք ձևական բնույթ, ուստի հավելման չափը բոլոր դեպքերում կարող էր սահմանվել գործատուի անհատական ակտով:

Մասնագիտական գրականության մեջ, սկսած 90 ական թթ., շրջանառվում է այն մոտեցումը, որ մի շարք պայմաններ, ինչպիսիք են, օրինակ, աշխատողներին վճարվող հավելավճարների մասին պայմանը, պետք է չներառվի աշխատանքային պայմանագրում առհասարակ, քանի որ այն գործում է օրենքի կամ այլ իրավական ակտի հիման վրա և անկախ կողմերի համաձայնությունից կամ անհամաձայնությունից⁸:

Ուսումնասիրելով արտասահմանյան երկրների փորձը՝ տեսնում ենք, որ վերջիններս նույնպես առանձին պահանջներ են ներկայացնում միգրանտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի բովանդակությանը: Օրինակ՝ Բելառուսի Հանրապետությունում Ներքին աշխատանքային միգրացիայի մասին օրենքի 10-րդ հոդվածը միգրանտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրում ներառվող պարտադիր պայմաններ է համարում ժամկետը, աշխատանքի բնույթը և վայրը, աշխատանքի և աշխատանքի վարձատրության պայմանների մասին դրույթ՝ ներառյալ գիշերային, արտաժամյա, հանգստի և տոնական օրերին աշխատելու մասին պայմաններ, աշխատավարձից պահումներ կատարելու չափի և հավելումների մասին, կողմերի իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության և աշխատանքա-

յին պայմանագրի լուծման կամ երկարաձգման մասին, միգրանտի տեղափոխման, սնվելու, ապրելու և բժշկական սպասարկման մասին, միգրանտի սոցիալական ապահովության պայմանների և կարգի մասին, աշխատանքային պարտականությունները կատարելիս միգրանտին պատճառված վնասի փոխհատուցման մասին և այլ սոցիալական երաշխիքների մասին: Աշխատանքային պայմանագրի մի օրինակը հանձնվում է միգրանտին նախքան նրա ժամանելը Բելոռուսի Հանրապետություն: Նույնաբովանդակ դրույթ է պարունակում նաև Տաջիկիստանում գործող Միգրացիայի մասին օրենքի 8.3 հոդվածը:

Գերմանիայում միգրանտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի էական պայման են աշխատավարձը, աշխատաժամանակը, արձակուրդը:

Բացի նշված պայմաններից՝ միգրանտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի լրացուցիչ պայմաններ են սահմանված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) և միջազգային պայմանագրերով:

Օրենքով սահմանված են հետևյալ լրացուցիչ պայմանները.

Օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ օտարերկրացու հետ կնքվող աշխատանքային պայմանագրում պետք է ներառվեն նաև՝ օտարերկրացի աշխատողի և նրա ընտանիքի անդամների ՀՀ փոխադրման, սոցիալական ապահովության և ապահովագրության, դիմավորման, կացարանով ապահովման և բնակության վայրում հաշվառման և վերադարձի հետ կապված հարցերը:

Նշված պայմանի բնորոշումից ակնհայտ է, որ այն վերաբերում է միայն առաջին խումբ միգրանտներին, որոնց հետ աշխատանքային պայմանագիր կնքվում է դեռ մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանելը:

Միջազգային պայմանագրերով սահմանված են հետևյալ լրացուցիչ պայմանները՝

ա. աշխատանքի պայմանները սահմանող դրույթներ և մասնավորապես միգրանտին առաջարկվող փոխհատուցում.⁹

բ. աշխատողին ներկայացվող մասնագիտական պահանջները.

գ. աշխատանքային և հանգստյան օրվա տևողությունը.

դ. կեցության պայմանները.

ե. աշխատանքային պայմանագրի լուծման պայմանները.

զ. տրանսպորտային ծախսերի փակման մասին պայմանը¹⁰:

Ամփոփելով վերոգրյալը, կարծում ենք, միգրանտ աշխատողի հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը պետք է ներառի հետևյալ էական պայմանները՝

1. պաշտոնը.

2. աշխատանքային գործառույթը.

3. աշխատավարձի չափը.

4. աշխատանքի կատարման վայրը.

5. մասնագիտական աշխատանք կատարելու դեպքում՝ որակավորմանը ներկայացվող պահանջները:

Այս պայմանները, մեր համոզմամբ, համարվում են էական, և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է պայմանագրի անվավերության: Իհարկե, ի տարբերություն քաղաքացիաիրավական պայմանագրի անվավերության իրավական հետևանքների, այստեղ չի կարող տեղի ունենալ երկկողմանի ռեստիտուցիա, քանի որ գործատուն չի կարող աշխատողին վերադարձնել իր կատարած աշխատանքը, իսկ նման պայմաններում նաև չի կարող պահանջել, որ աշխատողը վերադարձնի ստացած աշխատավարձը: Բացի այդ, սոցիալական ապահովագրության վճարներ կատարելու պարագայում աշխատողի աշխատանքային ստաժը անկախ գործատուի կամքից և կնքված աշխատանքային պայմանագրի օրինականությունից հոսում է, և այն նույնպես չի կարելի չեղյալ համարել:

Թեև անվավեր աշխատանքային պայմանագրի իրավական հետևանքների խնդիրը դուրս է ներկայացվող թեմայի

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

շրջանակներից, սակայն բոլոր դեպքերում այդ բացասական հետևանքները չի կարող կրել աշխատողը, քանի որ վերջինս բացարձակապես որևէ դերակատարություն աշխատանքային պայմանագրի կազմման գործընթացում չի կատարում: Դեռ ավելին՝ հանդիսանալով աշխատանքային հարաբերությունների խոցելի սուբյեկտ՝ նա իր վիճակը վատթարացնող պայմանագրային պայմանների առկայության դեպքում Օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով օգտվում է օրենքով սահմանված կարգավիճակից բխող հնարավորությունից:

Ինչևէ, բացի այս պայմաններից, կարծում ենք, արտասահմանից գործատուի հրավերով ժամանած միգրանտների դեպքում աշխատանքային պայմանագիրը պետք է պարունակի նաև հետևյալ էական պայմանները՝

– ա. աշխատանքի պայմանները սահմանող դրույթներ և մասնավորապես միգրանտին առաջարկվող փոխհատուցումները աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում.

– բ. աշխատաժամանակի տևողությունը.

– դ. աշխատողի բնակարանային ապահովածության և բժշկական ապահովագրության մասին պայմաններ.

– գ. տրանսպորտային ծախսերի փական մասին“:

Միջազգային պայմանագրերով միգրանտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի էական պայման է համարվում նաև աշխատանքային պայմանագրի լուծման պայմանները, ինչը, սակայն, իրավական կատեգորիա է դառնում միայն աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերի հետ միասին: Օրինակ, եթե պայմանագրի լուծման պայման համարենք աշխատողին ծանուցելու գործատուի պարտականությունը, ապա օրենսդիրը ծանուցման ժամկետները կապել է պայմանագրի

լուծման հիմքերի հետ: Ստացվում է, որ պայմանագրի լուծման պայմանները շարադրելու համար անհրաժեշտ է նաև թվարկել աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը, ինչը մենք ճիշտ չենք համարում հետևյալ տեսանկյունից՝

– պայմանագրում, ընդհանուր կանոնի համաձայն, սահմանվում են այն հարաբերությունների կարգավորման եղանակները, որոնք պայմանավորված են կողմերի կամքի հետ: Աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը կողմերը չեն կարող փոխադարձ համաձայնությամբ փոխել, այլ ընդամենը կարող են բառացի արտագրել աշխատանքային օրենսգրքում թվարկված հիմքերը, որոնք իրենց հերթին բավականին շատ են և ավելորդ ծանրացնելու են պայմանագիրը: Բացի այդ՝ այս նույն տրամաբանությամբ կողմերը կարող են արտագրել նաև օրենսգրքի այլ դրույթներ կամ ուղղակի կցել օրենսդիրը աշխատանքային պայմանագրին:

– Օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը բավականին փոփոխական են, ընդամենը 2010 թ. հուլիս ամսին փոփոխություն կրեցին պայմանագրի լուծման հիմքերի գերակշիռ մասը, իսկ այս տեսանկյունից ստացվում է, որ օրենսգրքում կատարված ցանկացած փոփոխության դեպքում պետք է համապատասխանաբար փոխվի նաև կնքված պայմանագիրը, ինչը նույնպես ողջամիտ չենք համարում:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենսգրքի 84-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Օտարերկրացիների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի էական պայմանները սահմանվում են օրենքով»:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը առաջարկում ենք լրացվել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ. «Օտարերկրացիների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի էական պայմաններն են՝ պաշտոնը, աշխատանքային գործա-

ռույթը, աշխատավարձի չափը, աշխատանքի կատարման վայրը, մասնագիտական աշխատանք կատարելու դեպքում՝ որակավորմանը ներկայացվող պահանջները»:

Գործատուի հրավերով Հայաստանի Հանրապետություն ժամանած օտարերկրացիների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի էական պայմաններ են նաև՝ աշխատանքի պայմանները սահմանող

դրույթները և մասնավորապես միգրանտին առաջարկվող փոխհատուցումները աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում, աշխատաժամանակի տևողությունը, աշխատողի բնակարանային ապահովվածության և բժշկական ապահովագրության մասին տվյալներ, պայմաններ տրանսպորտային ծախսերի փականման մասին:

¹ Տե՛ս Киселев И.Я. Сравнительное трудовое право: учеб.-М.: ТК Велби, Изд-во Проспект, 2005.-360, էջ103:

² Տե՛ս Д.В. Черняева. Трудовое право Израиля. / Журнал Трудовое право. N 7, 2006 էջ 71:

³ Տե՛ս Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք/ Ա. Հայկյանց: Երևանի պետ. համալս. -Եր.: ԵՊՀ հրատ., 210-560 էջ, էջ 503:

⁴ Տե՛ս Карасева Л.В. Значение норм международного частного права в регулировании трудовых отношений мигрантов из стран СНГ в РФ: Диссертация ...канд. Юрид. Наук: 2003:

⁵ Տե՛ս Бельх В.Л. Коллизионное регулирование в международном частном праве, էջ 205:

⁶ Տե՛ս Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս.-Երևանի համալս. հրատ., 2006-560, էջ 445-446:

⁷ Տե՛ս Л.А. Чиканова. Трудовой договор. / Журнал Трудовое право. 4-5, 2004, էջ 59:

⁸ Տե՛ս Л.А. Чиканова, նույն տեղը:

⁹ Այս պայմանը սահմանված է թիվ 97-րդ կոնվենցիայի 1-ին և 2-րդ հավելվածների համապատասխանաբար 5-րդ և 6-րդ հոդվածներով:

¹⁰ «բ»-«գ» ենթակետերով սահմանված պայմանները նախատեսված են Աշխատանքային միգրացիայի և աշխատավոր միգրանտների սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին 1994 թ. ԱՊՀ համաձայնագրի 6-րդ հոդվածում:

¹¹ «բ»-«գ» ենթակետերով սահմանված պայմանները նախատեսված են Աշխատանքային միգրացիայի և աշխատավոր միգրանտների սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին 1994 թ. ԱՊՀ համաձայնագրի 6-րդ հոդվածում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**SPECIFIC FEATURES OF LABOR CONTRACT SIGNED WITH
MIGRANT EMPLOYEES****Mane KARAPETYAN***Faculty of Law**Department of Civil Law*

The scope of this article includes the examination of the institute of contract (hereinafter referred to as Contract) signed with migrant employees and its specific features.

In the article the author refers to the general conditions of the labor contract signed with migrant employees, as well as to the additional conditions that are prescribed by the international agreements with participation of the RA.

Referring to each condition included in the labor contract signed with the migrant, the author presented its approach to each of them and revealed legal consequences that may arise in case when this or that condition is not included in the labor contract.

Summarizing the legal norms relative to the conditions that constitute the content of a labor Contract signed with a migrant employee the author has made the following conclusion: the principal conditions of a Contract signed with the migrant employees should be considered the position, employment function, the remuneration and the lieu (location) of execution of the work.

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԶՅ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

ԱՆճԻԻՒ ԱՆՏՈՆՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, մագիստրատուրա 2-րդ կուրս

Ժառանգության տրանսմիսիա հասկացությունը նոր չէ և հայտնի է դեռևս հռոմեական իրավունքից: «Տրանսմիսիա» բառը ծագել է լատիներեն փոխանցում բառից¹: Ինչպես գիտենք, ժառանգատուի մահից հետո նրան պատկանող գույքը ըստ կտակի կամ էլ, եթե կտակ չկա, ըստ օրենքի անցնում է նրա ժառանգներին: Սակայն լինում են դեպքեր, երբ ժառանգը մահանում է ժառանգությունը բացելուց հետո՝ չհասցնելով ընդունել իրեն հասանելիք ժառանգությունը: Փաստորեն առաջանում է հարց, թե արդյոք տվյալ ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը մնում է անկատար, թե՞ դեռևս կարող է իրականացվել: Այս իրավիճակի կարգավորման համար առաջացել է տրանսմիսիայի ինստիտուտը, որի համաձայն՝ ժառանգության բացվելուց հետո մահացած և ժառանգությունը ընդունել չհասցրած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը անցնում է նրա ժառանգներին: Այն ժառանգը, որի՝ ժառանգությունն ընդունելու իրավունքը իր մահից հետո անցնում է այլ անձանց, անվանվում է **տրանսմիտենտ**, իսկ այն անձինք, որոնց փոխանցվում է ժառանգական գույքը, անվանվում են **տրանսմիսարներ**²:

ԶԳ քաղաքացիական օրենսգրքի³ 1229-րդ հոդվածը վերնագրված է «ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելը /տրանսմիսիա/» վերտառությամբ և սահմանում է. «1.Եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության իրավիրված ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո, չհասցնելով այն ընդունել, ապա նրան հասանելիք ժառանգությունն ընդու-

նելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին: 2. Մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով՝ սույն օրենսգրքի 1225-1228 հոդվածներին համապատասխան: 3. Որպես պարտադիր բաժին ժառանգության մասն ընդունելու ժառանգի իրավունքը չի անցնում նրա ժառանգներին»:

Այսպիսով, ժառանգության տրանսմիսիա է համարվում ժառանգությունն ընդունելու իրավունքն այն ժառանգի ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգներին անցնելը, որին այդ իրավունքը պատկանել է, և որը մահացել է՝ չհասցնելով իրականացնել այդ իրավունքը: Ուրեմն՝ խոսքը վերաբերում է ժառանգությունն ընդունելու իրավունքը ժառանգելուն⁴:

ԶԳ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի բովանդակությունից երևում է, որ հոդվածը որոշակի պայմաններ է նախատեսել ժառանգության տրանսմիսիա կիրառելու համար, ընդ որում՝ դրանք պետք է գործեն միաժամանակ: Դրանք են՝

1.ժառանգը պետք է մահացած լինի ժառանգության բացումից հետո: Այստեղ կարևորվում է այն հարցի պատասխանը, թե երբ է ժառանգությունը բացվում: Քաղաքացիական օրենսգրքի / այսուհետ՝ օրենսգիրք/ 1187-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո: Մինչև 1188-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը բացվելու ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում՝ այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում: Այսինքն՝ նշված հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ ժառանգը պետք է մահացած լինի ժառանգատուից հետո: Սակայն հնարա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վոր են դեպքեր, երբ ժառանգատուն ու ժառանգը մահանում են նույն օրը, և հարց է առաջանում՝ տվյալ դեպքում ինչպե՞ս վարվել, թույլատրե՞լ տրանսմիսիայի կիառունը, թե՞ ոչ: Օրենսգրքի 1118-րդ հոդվածը սահմանում է.« Եթե նույն օրը մահացել են այն անձիք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո, նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ: Ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրից հետո և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները»: Այս դրույթը ավելի հեշտ կլինի բացատրել հետևյալ դեպքի օրինակով: 16.02.2009թ. ժամը 15.00-ին ավտովթարի հետևանքով մահանում է հայրը, իսկ որդուն անգիտակից վիճակում տեղափոխում են հիվանդանոց: Վերջինս ավտովթարից 2 ժամ անց, այդպես էլ ուշքի չգալով, մահանում է: Փաստորեն հայր ու որդի մահանում են միևնույն օրը: Մահացած որդու աղջիկը դիմում է նոտարին՝ պահանջելով իրեն տալ վկայագիր ոչ միայն հորից հետո մահացած ժառանգության նկատմամբ, այլև պապից՝ ժառանգման տրանսմիսիայի կարգով: Նոտարը, առաջնորդվելով 1188-րդ հոդվածով, բնականաբար չի կիրառի տրանսմիսիա, քանի որ որդին հորից հետո նրա ժառանգությունը չէր ընդունել այն պարզ պատճառով, որ ժառանգության բացման ժամանակը մահվան օրն է, այլ ոչ թե ժամը, և նրանք համարվում են միաժամանակ մահացած: Հետևաբար նրանցից յուրաքանչյուրից հետո կբացվի ժառանգություն, և ժառանգության կիրավորվեն նրանցից յուրաքանչյուրի ժառանգները:

2. Ժառանգը չի հասցրել ընդունել ժառանգությունը սահմանված ժամկետում: Ընդհանուր կանոնի համաձայն, որը սահմանված է օրենսգրքի 1227-րդ հոդվածում՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Ժառանգությունը կարող է ընդունվել օրենքով սահմանված եղանակներով՝ կամ նոտարին դիմում ներկայաց-

նելու, կամ փաստացի տիրապետման ու կառավարման միջոցով: Ամեն դեպքում պետք է հասկանալ, որ տրանսմիսիան իրականացվում է այն դեպքում, երբ ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո և չի հասցնում ընդունել այն, քանի որ այն դեպքում, եթե ժառանգը մահանա ժառանգության բացվելուց հետո, բայց իր մահից առաջ օրենսդրությամբ թույլատրելի եղանակներից որևէ մեկով հասցնի ընդունել ժառանգությունը, ապա դա կներառվի իր սեփական ունեցվածքի մեջ, այլ ոչ թե կկիրառվի տրանսմիսիա, այսինքն հենց մահացած ժառանգի ժառանգներն էլ կժառանգեն այն ընդհանուր հիմունքներով: Համապատասխան անձը, ով ցանկանում է, որ կիրառվի տրանսմիսիա, պետք է նոտարին բավարար ապացույցներ ներկայացնի այն մասին, որ համապատասխան գույքը մահացած ժառանգի կողմից ժամանակին չի ընդունվել: Այս իրավիճակը հատկապես սուր է, երբ ժառանգատուն ու տրանսմիտենտը համատեղ են բնակվում, քանի որ այս դեպքում պրակտիկայում համարվում է, որ մահացած ժառանգը ընդունել է ժառանգությունը՝ փաստացի տիրապետման միջոցով: Այս պարագայում տրանսմիսսարը պետք է ապացուցի, որ օրենքով նշված որևէ ձևով մահացած ժառանգը չի տիրապետել ժառանգությունը (օրինակ՝ չի հոգացել գույքը պահպանելու ծախսերը, անտարբերություն է ցուցաբերել):

Պետք է հաշվի առնել նաև այն, որ ժառանգության ընդունման իրավունքը փոխանցվում է տրանսմիտենտի ժառանգներին նախկինում ժառանգության իրավիրված ժառանգի մահից հետո, ուստի ժառանգության ընդունման ժամկետը վեցամսյա ժամկետից միշտ պակաս է լինում: Այս դեպքում, փաստորեն, տրանսմիսսարի կողմից իր իրավունքն իրականացնելու ժամկետը սահմանափակվում է, և կարող են լինել դեպքեր, երբ ժամկետը օբյեկտիվորեն չբավարարի ժառանգության ընդունման համար: Առաջանում է հարց, թե տրանսմիսսարը ինչ ժամկետում կարող է իրականացնել ժառանգությունն ընդունե-

լու իր իրավունքը: Քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով սույն օրենսգրքի 1225-1228 հոդվածներին համապատասխան: Ժառանգությունն ընդունելու ժամկետները ներառված են 1227-րդ հոդվածում: Ուսումնասիրելով այդ հոդվածը՝ չենք կարողանում հստակ պատասխանել այն հարցին, թե տրանսմիսսարը ինչ ժամկետում կարող է իրականացնել ժառանգությունն ընդունելու իր իրավունքը: 1227-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ժառանգությունն ընդունելու 6-ամսյա ժամկետ, իսկ եթե առաջնորդվենք այն տրամաբանությամբ, որ այս մասը տարածվում է նաև տրանսմիսսարի վրա, ապա տրանսմիսսարը մահացած ժառանգի մահից հետո ժառանգությունն ընդունելու համար կունենա ևս 6 ամիս ժամանակ, որը, մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ ժառանգական ամբողջ զույքի համար ևս օրենքը սահմանում է 6 ամիս, և, փաստորեն, մյուս ժառանգները պետք է սպասեն ավելի երկար, որպեսզի ստանան ժառանգության վկայագիր: Չնայած սրան՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ նոտարներ տրանսմիսսարի դեպքում կիրառում են հենց այս դրույթը: Ռեշարթյունայան է արժանի նաև 1229-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ այն անձինք, որոնց համար ժառանգությունն ընդունելու իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին կետում սահմանված 6-ամսյա ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում: 1229-րդ հոդվածի այս մասը տարակերպ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Մեր կարծիքով, այստեղ խոսքը այն մասին է, երբ ժառանգը ճանաչվում է ժառանգությունը չընդունած: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ անձը ոչ ընդունել, ոչ էլ հրաժարվել է ժառանգությունից օրենքով սահմանված եղանակներով և ժամկետում: Իսկ որպեսզի

ժառանգը համարվի ժառանգությունը չընդունած, պետք է անցնի ժառանգությունն ընդունելու համար սահմանված 6 ամիսը: 1227-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությամբ՝ ժառանգությունն ընդունելու իրավունքը առաջանում է այն դեպքում, երբ ավարտվում է 6 ամիսը, մյուս ժառանգը համարվում է ժառանգությունը չընդունած, ինքն էլ հնարավորություն է ստանում հաջորդող 3 ամսվա ընթացքում ընդունել ժառանգությունը: Տրանսմիսսարի դեպքում մահացած ժառանգը այս իմաստով չի համարվում ժառանգությունը չընդունած: Իհարկե, սա մեր կարծիքն է, իսկ շատ պրակտիկ իրավաբաններ «ժառանգությունը չընդունելը» մեկնաբանում են լայն իմաստով՝ ներառելով նաև այն դեպքը, երբ տրանսմիսսարը մահանում է չհասցնելով ընդունել ժառանգությունը, և գտնում են, որ տրանսմիսսարի նկատմամբ կիրառում են 1227-րդ հոդվածի 3-րդ մասը: Տրանսմիսսարի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի կապակցությամբ ուսումնասիրելով բազմաթիվ տեսաբանների և պրակտիկ աշխատողների կարծիքները՝ հանգում ենք այն եզրակացության, որ մեր օրենսդրության կարգավորումը թերի է, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս, ուստի առաջարկում ենք փոփոխություն մտցնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ հետևելով ՌԴ օրինակին: Առաջարկում ենք 1229-րդ հոդվածում ավելացնել հետևյալ դրույթը. «Ժառանգության տրանսմիսսարի դեպքում մահացած ժառանգին հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անձը կարող է իրականացնել 1227-րդ հոդվածի 1-ին կետում նշված վեցամսյա ժամկետի մնացած մասի, իսկ եթե այն երեք ամսից պակաս է, ապա երեք ամսվա ընթացքում»: Ի դեպ, անհրաժեշտ չէ դիմել դատարան այդ ժամանակը երկարացնելու պահանջով, քանի որ այն երկարացվում է օրենքի ուժով: Իսկ այդ երեքամսյա ժամկետի ընթացքում ժառանգությունը չընդունելու դեպքում դատարանը կարող է դա երկարացնել՝ հաշվի առնելով այն բաց թողնելու հարգելի պատճառները⁶:

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ժառանգության տրանսմիսիայի կանոնները կիրառվում են ժառանգությունը բացվելուց հետո ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգների մահվան դեպքում: Տրանսմիսարներ նույնպես կարող են լինել ինչպես ըստ կտակի ժառանգները, այնպես էլ ըստ օրենքի: Այն դեպքում, երբ սկզբնական ժառանգը մահանում է՝ չհասցնելով ընդունել բացված ժառանգությունը, և ունենում է կտակ, տրանսմիսիան կիրառվում է ըստ կտակի ժառանգների նկատմամբ: Սակայն, եթե վերջինս չի կազմել կտակ, տրանսմիսիայի կարգով ժառանգման իրավունքը կանցնի նրա ըստ օրենքի ժառանգներին: Այն դեպքում, երբ կտակել է իր ունեցվածքի միայն մի մասը, ապա տրանսմիսարներ կարող են լինել ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգները:

Տրանսմիսիայի կարգով ժառանգելու իրավունքը մեկ միասնական իրավունք է: Այն դեպքում, երբ տրանսմիսարներ են ըստ օրենքի ժառանգները, ապա տրանսմիտենտին հասանելիք բաժինը նրանց միջև կբաշխվի հավասարապես: Իսկ այն դեպքում, երբ կա կտակ, ապա ըստ կտակի ժառանգներին հասանելիք բաժինները կորոշվեն կտակում տրանսմիտենտի արտահայտած կամքի համաձայն՝ ժառանգների բաժիններին համամասնորեն:

Այսպիսով, նշվեցին այն պայմանները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում կկիրառվի տրանսմիսիան: Սակայն պետք է ուսումնասիրել նաև մեր օրենսդրության դրույթները առանձին-առանձին հասկանալու համար, թե հատկապես ինչպիսի իրավիճակներում խնդիրներ կառաջանան այս ոլորտում, և արդյո՞ք մեր օրենսդրությունը կատարյալ է այդ խնդիրները լուծելու առումով:

Համեմատական վերլուծություն իրականացնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքին⁶: ՌԴ քաղաքացիական օրենսդրության

1156-րդ հոդվածի բովանդակությունը տարբերվում է մեր օրենսգրքի 1229-րդ հոդվածից. ավելի հստակ է և թույլ է տալիս պատասխանելու մի շարք հարցերի, որոնք առաջանում են 1229-րդ հոդվածի թերությունների պատճառով: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1156-րդ հոդվածը այս ձևակերպումն ունի. «1. Եթե ժառանգը, որը ժառանգման է հրավիրվել ըստ կտակի կամ ըստ օրենքի, մահանում է ժառանգության բացվելուց հետո՝ չհասցնելով ընդունել այն սահմանված ժամկետում, իրեն հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է իր ըստ օրենքի ժառանգներին, իսկ եթե ամբողջ ունեցվածքը կտակել է՝ նրա ըստ կտակի ժառանգներին: Տրանսմիսիայի կարգով ժառանգությունն ընդունելու իրավունքը չի մտնում այն ժառանգության կազմի մեջ, որը բացվել է մահացած ժառանգի մահից հետո: 2. Սահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը իր ժառանգների կողմից կարող է իրականացվել ընդհանուր հիմունքներով: Եթե ժառանգի մահից հետո ժառանգությունն ընդունելու ժամկետը պակաս է երեք ամսից, ապա այն երկարացվում է մինչև երեք ամիս: Եթե ավարտվել է ժառանգությունն ընդունելու ժամկետը, դատարանը կարող է այն ընդունված համարել մահացած ժառանգի ժառանգների կողմից, եթե հարգելի համարի ժամկետը բաց թողնելու պատճառները: 3. Ժառանգի իրավունքը՝ ընդունել ժառանգության մասը՝ որպես պարտադիր բաժին, չի փոխանցվում իր ժառանգներին»:

Ինչպես նկատում ենք, ՌԴ օրենսդրությամբ ավելի մանրամասն է կարգավորված տրանսմիսիայի ինստիտուտը: Օրինակ՝ կարևոր հարց է, թե ինչ է իրենից ներկայացնում տրանսմիսիայի միջոցով ժառանգություն ընդունելու իրավունքը, և արդյո՞ք այն մտնում է տրանսմիտենտի մահից հետո բացված ժառանգության՝ ժառանգական զանգվածի մեջ: Հայրենական զրակայնության և օրենսդրության մեջ այս հարցի պատասխանը չկա, սակայն, մեր կարծիքով, ՌԴ օրենսդրության նման ձևակերպումը ճիշտ է և թույլ է տալիս պատասխանել

մի շարք հարցերի ևս: Մասնավորապես՝

1. Ելնելով այն տրամաբանությունից, որ տրանսմիսիայի կարգով ժառանգելու իրավունքը ժառանգական զանգվածի մեջ չի մտնում՝ կարելի է հստակ նշել, որ անձը, որը ժառանգում է տրանսմիսիայի կարգով, ունի հետևյալ իրավունքները՝

ա. Ընդունել ժառանգությունը, որը չի հասցրել ընդունել տրանսմիտենտը:

բ. Ընդունել այն ժառանգությունը, որը բացվել է տրանսմիտենտի մահվան կապակցությամբ:

Տրանսմիտենտի մահից հետո բացված ժառանգության ընդունումը իրականացվում է անկախ այն ժառանգության ընդունումից, որի համար իրավիրվել է ինքը՝ տրանսմիտենտը: Առաջանում են տարբեր իրավահարաբերություններ. մի դեպքում՝ տրանսմիտենտի մահվան կապակցությամբ, մյուս դեպքում՝ սկզբնական ժառանգատուի մահվան կապակցությամբ: Անձի գործողությունները որպես տրանսմիսար տարբերվում է նրա գործողություններից որպես տրանսմիտենտի ժառանգ:

Այն դեպքում, երբ ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցվում է տրանսմիսիայի կարգով, ժառանգության գործ բացվում է առաջին ժառանգատուից հետո, ժառանգության վկայագիր տրվում է առաջին ժառանգատուի մահվան օրվանից հաշված համապատասխան ժամկետի ավարտից հետո: Իսկ տրանսմիտենտի ունեցվածքը նույն անձը ընդունում է ընդհանուր հիմունքներով: Քանի որ տրանսմիսարը ունի վերը նշված երկու իրավունքները, ապա դրանք իրականացնելու համար վերջինս պետք է դիմի նոտարական գրասենյակ ոչ թե մեկ միասնական, այլ տարբեր դիմումներով՝ անկախ նրանից՝ ժառանգությունների բացման վայրերը նույն են, թե տարբեր: Տրանսմիտենտի ունեցվածքի ընդունումը չի նշանակում տրանսմիսիայի կիրառում առաջին ժառանգատուի նկատմամբ, և հակառակը՝

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի

արժեքի սահմաններում հատուցում են 1242-րդ հոդվածով սահմանված ծախսերը: 1242-րդ հոդվածում հերթականությամբ նշված են ժառանգատուի հետ կապված ծախսերը, այդ թվում՝ պարտքերը: Մեր օրենքը չի պատասխանում այն հարցին, թե արդյոք տրանսմիսարները իրենց անցած գույքի շրջանակներում պատասխանատվություն կրում են տրանսմիտենտի՞ պարտավորություններով, թե՞ այն անձի պարտավորություններով, որից ժառանգել են տրանսմիսիայի կարգով: Այն դրույթը, որ տրանսմիսիայի կարգով ժառանգությունն ընդունելու իրավունքը չի մտնում այն ժառանգության կազմի մեջ, որը բացվել է մահացած ժառանգի մահից հետո, կպատասխաներ նաև այս հարցին: Այդ դեպքում տրամաբանական կլիներ այն, որ ժառանգը, որը ժառանգությունն ստացել է տրանսմիսիայի կարգով, իրեն անցած ժառանգական գույքի սահմաններում պատասխանատու է ժառանգատուի պարտավորություններով, որին այդ գույքը պատկանում էր, և պատասխանատու չէ այդ գույքով տրանսմիտենտի պարտավորություններով: Սա, մեր կարծիքով, տրամաբանական լուծում է, և ճիշտ կլիներ, որ սահմանվեր նաև ՀՀ օրենսդրությամբ, քանի որ կարգավորված չլինելու դեպքում այս իրավիճակը կարելի է տարակերպ մեկնաբանել, որի պատճառով կարող է ծանր դրության մեջ հայտնվել տրանսմիսարը:

3. Տրանսմիսիայի առանձնահատկություններից է նաև այն, որ քանի որ տրանսմիսիայի կարգով ժառանգելու իրավունքը չի մտնում մահացած ժառանգի ժառանգական զանգվածի մեջ, ապա այն դեպքում, երբ մահանա այն անձը, որը ժառանգման է իրավիրվել տրանսմիսիայի կարգով, նրա այդ իրավունքը չի անցնի իր ժառանգներին:

Օրեսգրքի 1229-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով: Այսինքն՝ անձը կարող է տրանսմիսիայի կարգով իրեն հասանելիք ժառանգությունն ընդունել, չըն-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

դուներև կամ էլ հրաժարվել այն ընդունելուց:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ տրանսմիսիայի կիրառումը չի թույլատրվում: Մասնավորապես՝ Քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պարտադիր բաժնի ժառանգության մասն ընդունելու ժառանգի իրավունքը չի անցնում նրա ժառանգներին: Օրենքի վերլուծության հիման վրա, մեր կարծիքով, մասն բացառությունն արդարացված է: Սակայն, բացի օրենսդրական կարգավորումից, հարկ ենք համարում նաև անդրադառնալ տեսական գրականությանը: Ուսումնասիրելով բազմաթիվ հեղինակների¹⁰ տեսակետներ, ինչպես նաև առկա օրենսդրության նորմերը՝ ցանկանում ենք նշել, որ, մեր կարծիքով, ժառանգության տրանսմիսիայի կիրառումը անհնար է, երբ՝

ժառանգատուն կտակի մեջ նշել է ենթաժառանգ /քաղ. օր. հոդվ. 1198-րդ/:

Մահացած ժառանգը հանդիսանում է պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ / քաղ. օր. հոդվ. 1194-րդ/:

Ըստ օրենքի ժառանգ՝ այն անաշխատունակ անձի մահվանից հետո, որը մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել է ժառանգատուի խնամքի ներքո,

Ծնողական իրավունքներից զրկված ծնողներին չի փոխանցվում տրանսմիսիայի կարգով ժառանգության ընդունման իրավունքը այն զավակների գույքի հանդեպ, որոնց նկատմամբ վերջիններս զրկվել են ծնողական իրավունքներից

Օրենսգրքի 1198-րդ հոդվածը սահմանում է, որ կտակարարը կարող է կտակում նշել այլ ժառանգի /ենթաժառանգի/ այն դեպքի համար, եթե նրա նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները: Ինչպես տեսնում ենք, հոդվածում նշված չէ այն

դեպքը, երբ ժառանգը մահանում է ժառանգության բացվելուց հետո՝ չհասցնելով այն ընդունել, մինչդեռ ուսումնասիրելով ՌԴ օրենսդրությունը՝ նկատում ենք, որ մասն դրույթ կա /ՌԴ քաղ.օր. հոդվ. 1193-րդ/, որը ավելի ճիշտ է հետևյալ հիմնավորմամբ. ժառանգման իրավունքում գործում է կտակի ազատության սկզբունքը, որի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, զրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին օրենսգրքի կանոններով նախատեսված այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Նման դրույթից հետևում է, որ անձը կտակը կազմում է իր գույքի ճակատագիրը որոշելու, իր գույքը իր ցանկացած անձին հանձնելու համար, ուստի այն դեպքում, երբ անձը կտակում նշում է ժառանգ և ենթաժառանգ, նշանակում է վերջինս ցանկանում է, որ իր ունեցվածքը անցնի նրանցից որևէ մեկին և ոչ մեկ ուրիշին. հակառակ դեպքում կտակ չէր կազմի¹¹: Ուստի ժառանգին ենթաժառանգ նշանակված լինելու դեպքում այդ ժառանգի մահվան պարագայում տրանսմիսիայի կիրառումը չէր բխի ժառանգատուի կամքից:

Հաշվի առնելով այս ամենը՝ առաջարկում ենք 1198-րդ հոդվածը վերածակերպել հետևյալ կերպ. «Կտակարարը կարող է կտակում նշել այլ ժառանգի (ենթաժառանգի) այն դեպքի համար, եթե նրա նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը կամ մահանա ժառանգատուի հետ միաժամանակ կամ ժառանգության բացվելուց հետո՝ չհասցնելով ժառանգությունն ընդունել, կամ ժառանգությունը չընդունի այլ պատճառներով, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները»:

Որպես պարտադիր բաժնի ժառանգության մասն ընդունելու ժառանգի իրավունքը տրանսմիսիայի կարգով չի անցնում իր

ժառանգներին այն պարզ պատճառով, որ պարտադիր բաժնի իրավունքը ինքն իրենով սահմանափակում է մյուս ժառանգների իրավունքները, ինչպես նաև՝ կտակի ազատության սկզբունքը, ուստի տրանսմիսիայի կարգով պարտադիր բաժնի իրավունքի փոխանցումը ճիշտ չէր լինի: Պետք է հաշվի առնել նաև այն, որ անձը, ով ունի ժառանգությունից պարտադիր բաժին ստանալու իրավունք միայն իր անձնական որոշակի հատկանիշների (անչափահաս, հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված, 60 տարեկան դարձած) հիման վրա է ձեռք բերում այդ իրավունքը, ուստի դրա փոխանցումը իր ժառանգներին անհիմն կլինի:

Այդուհանդերձ, բացի վերը նշվածից՝ մեր օրենսդրությունը մի քանի թերություններ էլ ունի: Օրենսդիրը չի բացառում ժառանգական տրանսմիսիայի կիրառումը անաշխատունակ անձանց մահվան դեպքում, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո և համարվում են ըստ օրենքի ժառանգ (հոդվ.1220): Վերջիններս, ինչպես պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձիք ժառանգում են զուտ այն պատճառով, որ անկարող են առանց ժառանգի խնամքի, նրա միջոցների գոյատևել: Նման անձինք ժառանգում են, որպեսզի կարողանան գոյատևել: Իսկ այն դեպքում, երբ նրանք մահանում են ժառանգության բացվելուց հետո՝ չհասցնելով այն ընդունել, տրանսմիսիայի կիրառումը անիմաստ է, քանի որ ժառանգության նրանց բաժինը այլևս չի ծառայի իր նպատակներին, այսինքն՝ ժառանգատուի խնամքին գտնվող անձի մահից հետո նրան «հետմահու գոյատևման միջոցներ» պետք չեն¹²: Այդ պատճառով օրենսդիրը պետք է բացառի տրանսմիսիայի կիրառումը ըստ օրենքի ժառանգ այն անաշխատունակ անձի մահվանից հետո, որը մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել է ժառանգատուի խնամքի ներքո:

Գրականության մեջ ուշադրություն է գրավում այն հարցը, որ ներկայիս օրենսդրությունը բավարար կառուցակարգեր չի

սահմանում, որպեսզի ծնողական իրավունքներից զրկված անձը ժառանգ չհաղիսանա¹³: Քննարկենք մի իրավիճակ, որից պարզ կլինի, որ այդպիսի անարժան ժառանգները տրանսմիսիայի կիրառման միջոցով կարող են ժառանգել այն անձի ունեցվածքը, ում նկատմամբ նրանք զրկվել են ծնողական իրավունքներից: Քաղաքացի Ա.-ն մահանում է՝ չթողնելով կտակ: Ա.-ն եղել էր ամուրի, չունեի սեփական երեխաներ, մայրը շուտ էր մահացել, հայրը զրկված է եղել ծնողական իրավունքներից: ժառանգման իրավիրվել էին եղբայրները (համահայր, այսինքն՝ ժառանգատուն և ժառանգները հարազատ էին ժառանգատուի նկատմամբ ծնողական իրավունքներից զրկված հոր միջոցով): Ենթադրենք՝ ժառանգման իրավիրված եղբայրներից մեկը մահանում է ժառանգության բացումից հետո՝ չհասցնելով այն ընդունել և ժառանգությունն ընդունելու իրավունքը անցնում է նրա ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներին տրանսմիսիայի միջոցով, քանի որ կտակ չկար: Առաջին հերթի ժառանգ է նաև հայրը, որը ժառանգի նկատմամբ զրկված չէր ծնողական իրավունքներից, մինչդեռ ժառանգատուի (Ա.-ի) նկատմամբ զրկված էր: Ստացվում է, որ ժառանգատուի նկատմամբ ծնողական իրավունքներից զրկված հայրը դարձավ Ա.-ի ժառանգը: Այդ պատճառով առաջարկում ենք քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածում ավելացնել հետևյալը. «Ծնողական իրավունքներից զրկված ծնողներին չի փոխանցվում տրանսմիսիայի կարգով ժառանգության ընդունման իրավունքը այն զավակների գույքի նկատմամբ, որոնց նկատմամբ վերջիններս զրկվել են ծնողական իրավունքներից»: Սակայն կա նաև այլ կարծիք. օրինակ՝ Կուզնեցովան¹⁴ գտնում է, որ պետք չէ ոչինչ փոխել, քանի որ ծնողը ժառանգում է ոչ թե նրանից, ում համար անարժան հայր է, այլ նրանից, ում համար արժանի ծնող էր:

Վերը նշված բացառությունները, մեր կարծիքով, պետք է տեղ գտնեին 1229-րդ հոդվածում, որպեսզի օրենսդրությունն ավելի հստակ լինի, իսկ պրակտիկայում էլ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տարակերպ մեկնաբանություններ չտրվեին նման հարցերին:

Այսպիսով, ինչպես ցույց տվեց կատարված վերլուծությունը, ժառանգության տրանսմիսիային վերաբերող մի շարք խնդիրներ են առկա հայրենական օրենսդրության մեջ: Այդ պատճառով ցանկանում ենք առաջարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածը վերաձևակերպել հետևյալ կերպ՝

«1. Եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության իրավիրված ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո՝ չհասցնելով այն ընդունել, ապա նրան հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին: Տրանսմիսիայի կարգով ժառանգությունն ընդունելու իրավունքը չի մտնում այն ժառանգության կազմի մեջ, որը բացվել է մահացած ժառանգի մահից հետո:

2. Մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով: ժառանգության տրանսմի-

սիայի դեպքում մահացած ժառանգին հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն ամձը կարող է իրականացնել 1227-րդ հոդվածի 1-ին կետում նշված վեցամսյա ժամկետի մնացած մասի, իսկ եթե այն երեք ամսից պակաս է, ապա երեք ամսվա ընթացքում: Եթե ավարտվել է ժառանգությունն ընդունելու ժամկետը, դատարանը կարող է այն ընդունված համարել մահացած ժառանգի ժառանգների կողմից, եթե հարգելի համարի ժամկետը բաց թողնելու պատճառները:

3. Տրանսմիսիայի կիրառում չի թուլալատվում. ա) եթե ժառանգատուն կտակի մեջ նշել է ենթաժառանգ, բ) մահացած ժառանգը հանդիսանում էր պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ գ) ըստ օրենքի ժառանգ այն անաշխատունակ անձանց մահվանից հետո, որը մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել է ժառանգատուի խնամքի ներքո, դ) ծնողական իրավունքներից զրկված ծնողներին չի փոխանցվում տրանսմիսիայի կարգով ժառանգության ընդունման իրավունքը այն զավակների գույքի նկատմամբ, որոնց նկատմամբ վերջիններս զրկվել են ծնողական իրավունքներից:

¹ Տե՛ս **Հ. Հարությունյան**, «ժառանգումն ըստ կտակի», ԵՊՀ իրատ., եր. 2009, էջ 133:

² Տե՛ս Комментарий к ГК РФ, под ред. проф. А. П. Сергеева, часть 3, М., изд. Проспект, 2002, էջ 74:

³ ՀՀ ՊՏ N 17 (50), 10.08.98:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք (երրորդ մաս), (2-րդ հրատ.): եր., ԵՊՀ իրատ., 2011, էջ 387:

⁵ Տե՛ս **Малкин О. Ю.**, Уважительность причинах пропуска срока для принятии наследства как условие его восстановления в судебном порядке /Международные юридические чтения: материалы научно-практической конференции/

⁶ Տե՛ս **Гражданский кодекс РФ (принят ГД ФС РФ 21.10.1994):**

⁷ Տե՛ս **Гражданский кодекс РФ** последняя редакция, 09.04.2012, <http://www.gzkodeks.ru>:

⁸ Տե՛ս Гражданское право, Том 3, под. ред., **Толстой Ю. К., Сергеев А. П.**, М., Статут, 1999, էջ 583:

⁹ Տե՛ս Комментарий к ГК РФ, под ред. проф. А. П. Сергеева, часть 3, М., изд. Проспект, 2002, էջ 75:

¹⁰ Տե՛ս Гражданское право: учеб. в 3 т., Т3 / Е.Н. Абрамова, Н.Х. Аверченко, Ю. В. Байгушева и др./ под. ред. А. П. Сергееба, М., 2009, էջ 750-751:

¹¹ Տե՛ս Комментарий к ГК РФ, часть 3 /постатейный/, /И.В. Елисеев и др./ под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого, М., изд-во проспект, 2005, էջ 118:

¹² Տե՛ս **Шилохвост О.Ю.**, Наследование по закону в российском гражданском праве, М., Норма, 2006, էջ 20:

¹³ Տե՛ս **Малкин О. Ю.** Правовой режим наследственной трансмиссии /международные юридические чтения: материалы научно-практической конференции/, Омский институт, 2008, էջ 37:

¹⁴ Տե՛ս **Кузнецова Э. А.**, Наследственная трансмиссия в российском гражданском праве, Юрист, 2008, էջ 24:

LEGAL SETTLEMENT OF TRANSMISSION OF INHERITANCE ACCORDING TO LEGISLATION OF THE RA

Anahit ANTONYAN

YSU, Faculty of Law, magistrate cours

The legal settlement of transmission of inheritance has both practical and theoretical significance. A few analyses were implemented which allowed to conduct a thorough research of both institutes and understand it. The result of investigations pointed out the nuances of the settlements of transmission of inheritance as well as highlighted its shortcomings after which an attempt was made in order to give complete solutions. Specifically the update settlement of inheritance according to RA

legislation, was assessed as well as the poor points of legislation were put on the agenda. The terms of acceptance of inheritance by transmission were emphasized. The cases when the implementation of transmission was not allowed were distinguished. The differences and the similarities of transmission and of the inheritance with the right of representation were taken into account as well as some imperfections of legislation were revealed and corresponding suggestions were made. So analyzing this institute and revealing the modern problems concerning it suggestions were made which are inclined to complete the legislation and be important both for students and workers.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆԱԳՐՔԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արմեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված քրեական գործի կարճման, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների (այսուհետ՝ մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումներ) վերացումը և քրեական գործով վարույթի հարուցումը թե՛ գործնական աշխատանքում, թե՛ տեսության՝ մեջ միշտ տեղիք է տվել մի շարք խնդիրների, հակադիր կարծիքների, անորոշության: Այդ մասին են վկայում նաև այս հարցին առնչվող մի քանի անգամ կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը²:

Սակայն նշենք, որ քննարկման առարկա չեն եղել այն հարցերը, թե որքանով է հիմնավոր, որ օրենսդիրը այդ որոշումների վերանայումը (նորոգումը) կապում է *non bis in idem* հանրահայտ կոնվենցիոնալ և սահմանադրական սկզբունքի պահանջների հետ և այն դիտում կրկին դատվել, կամ որքանով է հիմնավոր դրանց վերանայումը ընդհանրապես կապել իմպերատիվ ժամկետներով, կամ նման պարագայում արդյոք չի՞ առաջանում անձի նկատմամբ շարունակաբար քրեական հետապնդում իրականացնելու վտանգի և արդարադատության շահի ու տուժողի իրավունքների

և օրինական շահերի պաշտպանության միջև հավասարակշռության խնդիր:

Ուստի հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N32 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ մենք վերջինիս և ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ՝ Գործող օրենսգիրք) համեմատաիրավական վերլուծությամբ սույն հոդվածի շրջանակներում խնդրո առարկա կդարձնենք վերոնշյալ հարցադրումները և կփորձենք տալ որոշակի լուծումներ:

Արդյոք հիմնավոր է մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը դիտել կրկին դատվել non bis in idem հանրահայտ կոնվենցիոնալ և սահմանադրական սկզբունքի տեսանկյունից:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի և Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:

Այս հիմնարար պահանջն ավելի մանրամասն սահմանված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ կոնվենցիա) կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության պատճառով, որի համար նա արդեն վերջ-

նականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

Իսկ թե երբ է անձը համարվում վերջնականապես արդարացված կամ դատապարտված, ապա նշենք, որ կոնվենցիայի 7-րդ արձանագրության բացատրական զեկույցում նշվում է. «Դատական որոշումը համարվում է վերջնական, եթե, համաձայն ավանդական դրսևորման, այն ձեռք է բերել *res judicata*-ի ուժ: Այդ դեպքում այն համարվում է վերջնական, այսինքն՝ բացակայում են դրա վերացման կամ փոփոխման սովորական միջոցները կամ կողմերը սպառել են կամ բաց են թողել դրանից օգտվելու համար սահմանված ժամկետները»³:

Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը, եթե այն կարող է հանգեցնել անձի վիճակի վատթարացման, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերի:»:

Ուսումնասիրելով Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի համապատասխան վերնագրի ներքո վերջինիս 3-րդ մասով ամրագրված դրույթը, ինչը հանդիսանում է կրկին դատվելու սահմանադրական և կոնվենցիոնալ սկզբունքի կարևորագույն բաղադրիչներից մեկը, ինչպես նաև տեսության մեջ⁴ և ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում⁵ սույն հարցի վերաբերյալ առկա վերլուծությունները՝ մենք գալիս ենք այն համոզման, որ օրենսդիրը որպես կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության երաշխիք, *non bis in idem* հիմնադրույթի տարր է համարել նաև մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը:

Մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը

non bis in idem հիմնադրույթի հետ կապելու իրավաչափության հարցը լուծելու նպատակով անհրաժեշտ ենք համարում նախ պարզել, թե որ մարմինն է անձին արդարացնում:

Ըստ Գործող օրենսգրքի 6-րդ հոդվածի 42-րդ կետի՝ *արդարացված է համարվում* այն անձը, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով, իսկ համաձայն 66-րդ հոդվածի 1-ին մասի՝ արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել, կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով...:

Այն, որ օրենսդիրը մինչդատական վարույթ է ընդգրկել արդարացվածին և սահմանել, որ արդարացվածը նաև այն անձն է, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության⁶ հիմքով, մեր կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրության 21-րդ և 91-րդ հոդվածների 1-ին մասերին:

Նման դրույթի սահմանումը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են ոչ միայն դատարանները, այլև քրեական հետապնդման մարմինները, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Կարծում ենք՝ կարիք չկա քննարկման առարկա դարձնել այն, որ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները, և միայն ու միայն դատական իշխանությանն է վերապահված անձին արդարացնելու իրավունքը⁷:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածով ամրագրված հանընդհանուր ճանաչում ստացած անմեղության կանխավարկածի սկզբունքին, ապա համակարծիք ենք այն մտքին, որ գործերի մինչդատական վարույթում արդարացվածը հանդես գալ չի կարող, քանի դեռ հետագայում դատաքննության արդյունքում կայացված նրան անմեղ ճանաչելու մասին դատարանի դատավճիռն օրի-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նական ուժի մեջ չի մտել: Իսկ սա նշանակում է, որ քրեական գործ կամ քրեական հետապնդում հարուցելուց սկսած մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահին ընկած հատվածում անձը համարվում է անմեղ, և անմեղ անձին գործի քննության մինչդատական վարույթում քրեական գործը վարույթը կարճելու եղանակով անմեղ ճանաչելն առնվազն անհեթեթ է: Անմեղության կանխավարկածից է բխում նաև այն հետևությունը, ըստ որի՝ անձի անմեղությունը կապվում է ոչ թե քրեական հետապնդման մարմնի, այլ դատարանի հետ, ոչ թե կարճման կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման, այլ միայն ու միայն արդարացման դատավճռի հետ⁸:

Ինչ վերաբերում է Նախագծին, ապա նշենք, որ այս հարցը լուծվել է Նախագծում, քանի որ համաձայն Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի՝ արդարացված մեղադրյալ է համարվում այն մեղադրյալը⁹, ում նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ չմտած արդարացման վերդիկտ, այսինքն՝ Նախագծով անձի անմեղությունը կապվել է ոչ թե մինչդատական վարույթի, այլ դատարանի հետ:

Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ Նախագծի նույն 6-րդ հոդվածի 39-րդ կետով սահմանվել է, որ ռեաբիլիտացիա է համարվում Հայաստանի Հանրապետության անունից ի շահ արդարացվածի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կատարվող հատուցումը, իսկ 153-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է. «Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում մեղադրյալը ստանում է ռեաբիլիտացիայի իրավունք»:

Փաստորեն ստացվում է, որ Նախագծի 6-րդ հոդվածի 39-րդ կետը անուղղակիորեն արդարացված է համարել նաև այն մեղադրյալին, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է Նախագծի

153-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերով, ուստի, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ Նախագծի 6-րդ հոդվածի 39-րդ կետում «արդարացվածի» բառի փոխարեն սահմանել «ռեաբիլիտացիայի իրավունք ստացած անձի» բառերը:

Համակարծիք ենք նաև այն մտքին, որ դատարանի արդարացման դատավճիռն անձի նկատմամբ ռեաբիլիտացիայի իրավունքի ծագման հիմքերից մեկն է միայն, իսկ արդարացված անձինք, ի տարբերություն այլ հիմքերով ռեաբիլիտացիայի իրավունք ստացած անձանց, ունեն ընդունված ակտի կայունության լրացուցիչ երաշխիքներ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատական ակտը կարող է վերանայվել բացառապես վերադաս դատական ատյանի կողմից¹⁰:

Այսպես, վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ անձը կարող է արդարացվել կամ դատապարտվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի պարագայում, հետևաբար մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների նորոգումը, մեր կարծիքով, չի կարող համարվել կրկին դատվել:

Այն, որ հիմնավոր չէ մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների նորոգումը համարել կրկին դատվել, վկայում է նաև Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բացառությունը և 4-րդ մասի առկայությունը¹¹, ինչպես նաև Նախագծի 204-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնցով սահմանված դրույթները մեխանիկորեն շեղվում են կոնվեցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասից և արդյունքում հակասում վերջինիս, քանի որ վերջինս սպառնիչ կերպով սահմանում է non bis in idem սկզբունքից շեղվելու իրավաչափ հիմքերը՝ որպես այդպիսին համարելով բացառապես նոր կամ նոր երևան եկած հանգամանքները և հիմնարար խախտումը:

Վերլուծելով Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչը, մեր կարծիքով, հակասում է նույն հոդվածի 1-ին մասին¹² հասկանալի է դառնում, որ նույնիսկ այն, որ

Նախագծով անձի աննեղությունը կապվել է ոչ թե մինչդատական վարույթի, այլ դատարանի հետ, ոչ մի բան չի փոխվել քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների¹³ նորոգումը կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի հետ չկապելու առումով:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը և նկատի ունենալով, որ կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է բացառապես դատական ակտերին՝ գտնում ենք, որ հիմնավոր չէ մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմնի կողմից կայացված վերջնական որոշումների նորոգումը համարել կրկին դատվել:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև այն, որ նշյալ որոշումների նորոգումը կրկին դատվել չէ, ենթադրում է, որ դրանք կարող են նորոգվել ինչպես հսկողական վարույթի, այնպես էլ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիման վրա, այսինքն՝ այն որևէ կերպով չի բացառում, որ օրենսդիրն իր հայեցողությամբ կառուցի այնպիսի մեխանիզմ, որ այդ որոշումները նորոգվեն նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով, քանի որ դա նվազագույնից բարձր չափանիշ է անձի իրավունքների պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների տեսանկյունից¹⁴:

Ի դեպ, նշենք, որ մի շարք երկրների (Ռուսաստան, Լատվիա և այլն) ուսումնասիրությունը նույնպես վկայում է այն մասին, որ մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների նորոգումը չի դիտվում որպես կրկին դատվել, սակայն դրանք կարող են նորոգվել նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով:

Արդյոք ողջամիտ է մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը սահմանափակել որոշակի ժամկետներով, և արդյոք այդ դեպքում չի՞ առաջանում անձի նկատմամբ շարունակաբար քրեական հետապնդում իրականացնելու վտանգի և արդարադատության շահի ու տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության

միջև հավասարակշռության խնդիր:

Այսպես, Գործող օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում»:

Վերոնշյալի և Նախագծի 204-րդ հոդվածի վերլուծությունից գալիս ենք այն համոզման, որ թե՛ Գործող օրենսգրքը, թե՛ Նախագիծը բացառում են մինչդատական վարույթում կայացված և կայացման պահին անօրինական (օրինակ՝ քննիչը կարճում է քրեական գործը արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով, սակայն գործում առկա են բավարար ապացույցներ, որոնք վկայում են հանցակազմի առկայությունը) եղած վերջնական որոշումների ինչպես վերացման, այնպես էլ բողոքարկման հնարավորությունը համապատասխան վեց, իսկ Նախագծով արդեն երեքամսյա ժամկետն անցնելուց հետո, քանի որ մի կողմից համապատասխան ժամկետներն անցնելուց հետո հնարավորություն չի տրվում վերացնելու այդ որոշումները, մյուս կողմից դրանք չեն կարող բողոքարկվել դատարան, քանի որ անցել են բողոքարկման ժամկետները, բացի այդ, դրանք չեն կարող վերացվել և քրեական գործով վարույթը չի կարող հարուցվել նույնիսկ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիման վրա¹⁵, քանի որ դրանք եղել են *անօրինական կայացման պահին*:

Ինչպես նշվում է տեսական գրականության մեջ¹⁶, նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքերով գործերի նորոգման պարտադիր պայման է, որ վերջիններիս բացահայտման ուժով գործի նորոգ-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ման հիմք հանդիսացող փաստական նյութը լինի բացարձակ նոր, գործում նախկինում չշոշափված: Սույն հարցին անդրադարձել են նաև մի շարք դատավարագետներ¹⁷, և այն, մեր կարծիքով, պարզաբանման կարիք չունի:

Մինչդեռ փաստական վարույթում կայացված վերջնական որոշումների վերացման համար իմպերատիվ ժամկետների սահմանումը, կարծում ենք, օրենսդրի տեսանկյունից պայմանավորված է իրավական որոշակիության հիմնարար պահանջով այն առումով, որ ցանկացած ժամկետում նշյալ որոշումների վերացումը և քրեական վարույթի հարուցումը կարող են վտանգ ներկայացնել անձի նկատմամբ շարունակաբար քրեական հետապնդում իրականացնելու համար, սակայն այդ պարագայում արդյոք չի՞ առաջանում արդարադատության շահի, տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտություն ու վերոնշյալ իրավունքների հավասարակշռված պաշտպանության խնդիր:

Այդ իրավունքների հավասարակշռված պաշտպանության ապահովման խնդրի հետ կապված՝ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՌԴ¹⁸ սահմանադրական դատարանի հետևյալ դիրքորոշումը. «Քրեական գործի վարույթի կարճման մասին անօրինական և անհիմն որոշումների վերացման և գործի նորոգման հնարավորությունը ինքնին բխում է սահմանադրական այն պահանջներից, որոնք պետական իշխանության մարմիններին, պաշտոնատար անձանց և քաղաքացիներին պարտավորեցնում են պահպանել ՌԴ Սահմանադրությունը և օրենքները (հոդված 15, մաս 2-րդ), որոնք երաշխավորում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պետական պաշտպանությունը (հոդված 45, մաս 2-րդ) և պետությանը պարտավորեցնում են ապահովել հանցագործությունից տուժածների արդարադատության մատչելիությունը և հասցված

վնասների հատուցումը (հոդված 52):

Վերոհիշյալ սահմանադրական դրույթների համակարգային միասնությունից հետևում է, որ մասնավորապես կարճված քրեական գործերի նորոգման վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ անհրաժեշտ է ելնել ինչպես արդարադատության շահի, հանցագործությունից տուժածների իրավունքների և ազատությունների, քրեական պատասխանատվության ենթարկվող և անմեղ համարվող անձանց (քանի դեռ նրանց մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով և հաստատվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով (ՌԴ Սահմանադրություն, հոդված 49, մաս 1-ին)) իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, այնպես էլ քրեական հետապնդման ենթարկվելու մշտական վտանգից...: Դա ենթադրում է նաև (մասնավորապես ոչ ամբողջական իրականացված նախաքննության պատճառով) կարճված քրեական գործի նույն հիմքով բազմիցս նորոգման անթույլատրելիությունը: ՌԴ ՍԴ նախկինում ընդունված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների, ինչպես նաև սույն որոշման համաձայն՝ որպես վերոնշյալ իրավունքների պաշտպանության երաշխիք է քրեական գործի կարճման որոշումը վերացնելու մասին դատախազի որոշման դատական բողոքարկման հնարավորությունը»¹⁹:

Այսպես, վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ՌԴ Սահմանադրական դատարանը սույն խնդրի կապակցությամբ հանգել է հավասարակշռված մոտեցում դրսևորելու դիրքորոշմանը, այսինքն՝ մի կողմից, որ չխախտվեն արդարադատության շահը, հանցագործությունից տուժածների իրավունքներն ու օրինական շահերը, իսկ մյուս կողմից քրեական հետապնդման շարունակաբար չենթարկվեն այն անձինք, որոնց նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը, և որպես նշյալ իրավունքների պաշտպանության երաշխիք, ՌԴ ՍԴ-ի կարծիքով, հանդիսանում է քրեական գործի կարճման որոշումը վերացնելու մասին

դատախազի որոշման դատական բողոքարկման հնարավորությունը:

Մենք նույնպես լիովին համակարծիք ենք այն մտքին, որ անհրաժեշտ է նշյալ որոշումների նորոգման ժամանակ դրսևորել համապատասխան իրավունքների պաշտպանության հավասարակշված մոտեցում, սակայն որպես դրանց երաշխիք դիտել միայն դատական բողոքարկման հնարավորության առկայությունը, մեր կարծիքով, տվյալ դեպքում բավարար չէ, այն կարող է միայն որոշակիորեն նպաստել նման հավասարակշռության պահպանմանը:

Այսպես, նշյալ որոշումների դատական բողոքարկման պարագայում դատարանը քննարկելու է այն հարցը, թե բողոքարկումը հիմնավոր է, թե ոչ, իսկ այն դեպքում, երբ նման որոշումների վերացման հիմքերը անորոշ են²⁰, իսկ ներպետական օրենսգրքով և Նախագծով այդ հիմքերը ընդհանրապես սահմանված չեն, ապա այդ դեպքում դատական բողոքարկումը, մեր կարծիքով, չի կարող լինել արդյունավետ:

Հարկ ենք համարում նշել, որ վերլուծելով Նախագծի 204-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ գալիս ենք այն կարծիքին, որ չնայած վերջնական որոշումների վերացման ժամկետը Նախագծով կրկնակի կրճատվել է (վեց ամսվա փոխարեն սահմանվել է երեքամսյա ժամկետ), սակայն, ի տարբերություն Գործող օրենսգրքի, երբ նման որոշումները վեց ամսվա ընթացքում կարող են վերացվել միայն մեկ անգամ և միայն ՀՀ գլխավոր դատախազի կողմից, ապա Նախագծի համաձայն՝ դրանք կարող են վերացվել երեքամսյա ժամկետում, սակայն մեկից ավելի անգամ, ինչպես նաև ոչ միայն ՀՀ գլխավոր դատախազի, այլև վերադաս դատախազի կամ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից, ուստի նման կարգավորումը, մեր կարծիքով, կարող է ավելի մեծ վտանգ ներկայացնել անձի նկատմամբ շարունակաբար քրեական հետապնդում իրականացնելու համար, քան Գործող օրենսգրքի կարգավորումը, իսկ ժամկետի կրկնակի կրճատումը կարող է վտանգ ներկայացնել դատախազի սահմանադրական լիազորությունների իրակա-

նացման ու տուժողի իրավունքների և շահերի պաշտպանության համար:

Այսպիսով, կարծում ենք, որ մինչդեռ տական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայման սահմանափակումը որոշակի ժամկետներով կարող է խոչընդոտել դատախազի սահմանադրական լիազորությունների իրականացմանը ու տուժողի իրավունքների և շահերի պաշտպանությանը և չապահովել անձի նկատմամբ շարունակաբար քրեական հետապնդում իրականացնելու վտանգի և արդարադատության շահի ու տուժողի իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ուսումնասիրելով մի շարք երկրների²¹ քրեադատավարական օրենսդրությունը՝ կարծում ենք, որ վերոնշյալ իրավունքների հավասարակշռված պաշտպանության ապահովման համար կարելի է սահմանել, որ մինչդեռ տական վարույթում կայացված վերջնական որոշումները կարող են վերացվել բացառապես հետևյալ երկու դեպքերում, առաջին՝ երբ հաստատվում է, որ նման որոշման կայացման համար չեն եղել *օրինական* հիմքեր, այսինքն՝ երբ այն կայացնելու պահին եղել է անօրինական, և երկրորդ՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների դեպքում, որոնք հայտնի չեն եղել վարույթի իրականացնող մարմնին համապատասխան որոշումների կայացման պահին, և որոնց ի հայտ գալն ունի էական նշանակություն վարույթի նորոգման համար:

Կարծում ենք, որ նման ձևակերպման արդյունքում մի կողմից լուծվում է արդարադատության շահի և տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, քանի որ դատախազը հնարավորություն է ստանում մինչև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրանալը վերացնելու այդ որոշումները, եթե դրանք կայացման պահին եղել են անօրինական (իսկ եթե կայացման պահին եղել են օրինական, ապա դրանք կարող են նորոգվել նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիման վրա), իսկ մյուս կողմից

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

վերանուն է անձին շարունակաբար քրեական հետապնդման ենթարկելու վտանգը, քանի որ կոնկրետ և որոշակի հիմքի սահմանման պարագայում դատական բողոքարկումն արդեն իսկ դառնում է նման վտանգի չենթարկվելու իրական երաշխիք:

Ինչ վերաբերում է վարույթի նորոգմանը նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով, ապա նշենք, որ մեր կողմից նշված ձևակերպումը, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունները²², մեր կարծիքով, կվերացնեն նաև այն իրավական անորոշությունը, որը ստեղծվել է Գործող օրենսգրքի 426.3 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի մասով: Այսպես, մեր կարծիքով, ներկայումս²³ իրավական առումով անորոշ է այն, որ, օրինակ, դատախազը կարող է վերացնել քննիչի կողմից կայացված քրեական գործը կարճելու մասին որոշումը և վարույթ հարուցել նոր երևան եկած հանգամանքներով Գործող օրենսգրքի 426.3 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, քանի որ օրենսգրքով ուղղակիորեն սահմանված է, որ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտերը²⁴ վերանայվում են, եթե ի հայտ են եկել *դատական ակտ* կայացնելիս *դատարանին* անհայտ մնացած այլ հանգամանքներ: Այսինքն՝ այդ ի հայտ եկած հանգամանքները պետք է անհայտ մնացած լինեին *միայն դատարանին* և *միայն* դատական ակտը կայացնելու ժամանակ, իսկ տվյալ դեպքում քրեական գործը կարճելու մասին որոշումն ընդունվել է մինչդատական վարույթում և վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Նշենք, որ նույն խնդիրն առկա է նաև Նախագծում: Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Նախագծի որոշ դրույթների հակասությանը, որոնք վերաբերում են նոր հանգամանքներով²⁵ վարույթի նորոգմանը:

Մասնավորապես, մեր կարծիքով, Նախագծի 204-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է 440-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ վերջինս սահմանում է բացառիկ վերանայման ենթակա ակտերի սպառիչ շրջա-

նակը՝ որպես այդպիսին չհամարելով մինչդատական վարույթում կայացված և դատական ստուգման չենթարկված քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները: Բացի այդ, Նախագծով սահմանված չէ ՀՀ գլխավոր դատախազի կողմից քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նոր հանգամանքների հիմքով վերացնելու ընթացակարգը, իսկ Նախագծի 445-րդ և 446-րդ հոդվածները վերաբերում են 440-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատական ակտերին, որոնք համապատասխան հիմքերի առկայության դեպքում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի բողոքի հիման վրա վերանայվում են դատարանի կողմից:

Բացի այդ, Նախագծի 204-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ այդ որոշումները համապատասխան ժամկետներն անցնելուց հետո կարող են վերացվել բացառապես նոր հանգամանքների հիմքով, ուստի այդ պարագայում անհասկանալի է Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով իրավունքի հիմնարար խախտմամբ այդ որոշումների նորոգմանը անդրադարձ կատարելը: Այսպիսով, մենք սույն հոդվածի շրջանակներում Գործող օրենսգրքի և Նախագծի համեմատաիրավական վերլուծությանը քննարկեցինք մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերանայումը *non bis in idem* սկզբունքի հետ չկապելու, անձի նկատմամբ շարունակաբար քրեական հետապնդում իրականացնելու վտանգի և արդարադատության շահի ու տուժողի իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանության, մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումները նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով նորոգելու հետ կապված մի շարք խնդիրներ և փորձեցինք հնարավորինս տալ լուծումներ, ուստի, ելնելով վերոշարադրյալից, առաջարկում ենք կատարել օրենսդրական փոփոխություններ՝ հաշվի առնելով նաև մեր մոտեցումները:

- ¹ Տե՛ս, օրինակ, Ա.Ղամբարյան, Վ.Շահինյան, Մինչդատական վարույթում կայացված ակտերի վերանայումը նոր երևան եկած հանգամանքներով, // Օրենք և իրականություն, 2008:
- ² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թ.-ի փետրվարի 4-ի N 935 որոշում:
- ³ Տե՛ս Case of Nikitin v. Russia, 2004թ., հուլիսի 20, Ստրասբուրգ, կետ 37:
- ⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, «Ընդհանուր մաս», Երևան, 2006թ., էջեր 176-177, Դատավորի ձեռնարկ, գիտագործնական վերլուծություն, Երևան, 2010թ., էջեր 355-356:
- ⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010թ., էջեր 273-274:
- ⁶ Այսինքն՝ Գործող օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը:
- ⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010թ., էջ 901:
- ⁸ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, «Ընդհանուր մաս», Երևան, 2006թ., էջ 228:
- ⁹ Սույն հոդվածի շրջանակներում մենք չենք անդրադառնա Գործող օրենսգրքով և Նախագծով սահմանված արդարացվածի կարգավիճակի տարբերություններին ու առանձնահատկություններին, միայն նշենք, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ Նախագծով արդարացվածը չի դիտարկվել որպես քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ, նա համարվել է այն նույն մեղադրյալը, ում նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ չմտած արդարացման վերդիկտ:
- ¹⁰ Տե՛ս А. В. Абрамов, Оправдание в уголовном процессе, диссертация, Нижний-Новгород, 2005, էջեր 34-47:
- ¹¹ Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում:
- ¹² Հանգել ենք նման կարծիքի՝ հիմք ընդունելով մեր կողմից արդեն իսկ արված մեկնաբանությունները:
- ¹³ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ի տարբերություն Գործող օրենսգրքի՝ Նախագծով վերացել է քրեական գործի հարուցման փուլը, իսկ նախաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից, բացի այդ, նշենք, որ Նախագծի 141-րդ հոդվածի և 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի մեկնաբանությունից հետևում է նաև, որ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվելու դեպքում քրեական վարույթը կարող է շարունակվել, ուստի դա է պատճառը, որ Նախագծում այլևս անդրադարձ չկա քրեական գործի կարճման և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներին:
- ¹⁴ Տե՛ս Case of Nersesyan v Armenia, 2010թ., հունվարի 19, կետ 25, Case of Wnuk v. Poland, 2009թ., սեպտեմբերի 1:
- ¹⁵ Հիշեցնենք, որ ՀՀ սահմանադրական դատարանը իր՝ 2011 թվականի փետրվարի 4-ի N935 որոշմամբ հաստատեց, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով այլ վերջնական իրավական ակտերը նույնպես ենթակա են վերանայման:
- ¹⁶ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, «Հատուկ մաս», դասագիրք բուհերի համար, ԵՊՀ, Երևան, 2006, էջ 413:
- ¹⁷ Տե՛ս **Блинов В.М.**, Возобновление дел по вновь открывшимся обстоятельствам. М. 1968; **Громов Н.А.** Вновь открывшиеся обстоятельства и их расследование в уголовном процессе. М. 1999; **В. В. Дорошков.** Мировой судья: исторические, организационные и процессуальные аспекты деятельности. М.: Норма. 2004:
- ¹⁸ Համաձայն ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի՝ մինչդատական վարույթում կայացված վերջնական որոշումների վերացման և վարույթի նորոգման համար ժամկետներ սահմանված չեն:
- ¹⁹ Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2002 թվականի դեկտեմբերի 27-ի N 300-Օ որոշումը: Նշենք նաև, որ ՌԴ սահմանադրական դատարանը իր այս դիրքորոշումը վերահաստատել է նաև մի շարք այլ որոշումներում (Տե՛ս 2004, մարտի 25, N 157-Օ, 2005, հուլիսի 5, N 328-Օ, 2008, հունիսի 24, N 358-Օ-Օ, 2009, դեկ. 17, N1635-Օ-Օ, 2010, սեպ. 23, N1214-Օ-Օ, 2010, հոկ. 19, 1413-Օ-Օ որոշումները):
- ²⁰ Մասնավորապես, ՌԴ քրեական դատավարություն

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

րության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես նման որոշումների վերացման հիմք հանդիսանում է նաև դրանց անհիմն ճանաչելը, ինչը, մեր կարծիքով, չափազանց անորոշ է:

²¹ Լատվիայի քրեական դատավարության օրենք, 2005թ., ապրիլի 21, Էստոնիայի քրեական դատավարության օրենսգիրք, 2003թ., փետրվարի 12, ՌԴ քրեական դատավարության օրենսգիրք, 2001թ., դեկտեմբերի 18, Բելոռուսի քրեական դատավարության օրենսգիրք, 1999թ., հունիսի 24:

²² Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է Գործող օրենսգրքի 426.3 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «դատական ակտ կայացնելիս դատարանին» բառերից հետո լրացնել «,իսկ մինչ-

դատական վարույթում վերջնական որոշումներ ընդունելիս վարույթն իրականացնող մարմնին» բառերը:

²³ Նույնիսկ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թ.-ի փետրվարի 4-ի N935 որոշման առկայության պարագայում:

²⁴ Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թ.-ի փետրվարի 4-ի N935 որոշումը՝ այլևս չենք անդրադառնում այն հարցին, որ սույնի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով կարող են նորոգվել միայն դատական ակտերը:

²⁵ Նշենք, որ Նախագծով «նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ» տերմինները միասնականացվել և վերածվել են «նոր հանգամանքներ» տերմինի:

THE PROBLEMS OF REVISION OF FINAL DECISIONS MADE IN PRETRIAL PROCEDURE IN THE CONTEXT OF THE CURRENT CODE OF CRIMINAL PROCEDURE AND THE DRAFT

Armen HOVHANNISYAN

*The post-graduate of Armenian Academy of
Science philosophy, sociology and law
institute department*

The article presents comparative analysis of the current code of criminal procedure and the Draft, focusing on the problems of compatibility of revision of final decisions made in pretrial procedure with

the principle of non bis in idem, the assurance of balanced approach to the problem of the threat of continuous prosecution of a person, the interest of justice and the rights and lawful interests of victim's and also considering the problems of reopening the case due to new or newly discovered facts.

On the bases of the study several solutions to the considered problems are proposed.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՏՐԱՆՍԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԱՆԴՐՍԱԳՄԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արտակ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Vallex» ընկերությունների խմբի գործադիր վարչության նախագահի օգնական

Նախկինում միջազգային իրավունքը դիտարկվում էր միայն երկու հարթություններում՝ նորմատիվ համակարգ, որը տարածվում էր ազգային պետությունների կողմից, և նորմատիվ համակարգ, որը տարածվում էր ազգային պետությունների միջև: Այսինքն՝ շեշտը դրվում էր միայն միջպետական հարաբերությունների վրա: Սա իրավական կեցություն էր, ուր առկա էին երկու հիմնարար սկզբունք. առաջին՝ իրավունքը դիտարկում էր միայն պաշտոնական, պետության կողմից ստեղծված միավորների վրա հիմնվող, և երկրորդ՝ իրավունքը քննարկվում էր միայն որպես պետական ինքնիշխանության բացառիկ գործառույթ¹: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ իրավունքն ի սկզբանե դիտարկվում էր որպես պետության բացառիկ սեփականությունը և արտահայտվում էր ազգային իրավակարգերի բազմազանությամբ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր տարածքային իրավասությունը: Հենց այս լույսի ներքո էլ միջազգային իրավունքը ինքն իրեն բնորոշում է որպես ազգային պետությունների պայմանագրային իրավունք և չէր առանձնանում պետականակերպ մոդելից:

Նախորդ դարի առաջին կեսում դասական միջազգային իրավունքը ընդունում էր միայն պետություններին՝ որպես միջազգային իրավունքի «բացարձականացված» սուբյեկտ, որոնք ենթարկվում է միայն իրենց սեփական կամարտահայտությունից

ծագած կանոններին: Այս տեսակետը արտացոլվել էր Միջազգային Արդարադատության Միջազգային Պալատի 1927թ. Լոտուս գործով որոշման մեջ. «Միջազգային իրավունքը ղեկավարում են փոխհարաբերությունները անկախ պետությունների միջև: Պետություններին պարտադրող իրավունքի գերակայությունը, այդպիսով, ծագում է նրանց սեփական ազատ կամքից, ինչպես որ արտահայտված է կոնվենցիաներում կամ էլ իրավունքի համընդհանուր ընդունված սկզբունքների կիրառման մեջ»²: Մի խոսքով, ավանդական միջազգային իրավունքը ծավալվում էր որպես ազգային պետության գերակայության կողմից ճանաչվող և աջակցվող կանոնների մի զանգված, որը բաղկացած էր միայն այն կանոններից, որոնք ընդունվում էին պետությունների կողմից, այն է՝ կամ պայմանագիրը, կամ էլ հենց պրակտիկան: Նման ռեժիմը համարյա կամ բացարձակապես ոչ մի տեղ չէր թողնում «նրանց սեփական կամքից» անկախ ծագող ոչ պետական միավորների կամ կանոնների համար:

Ինչպես նշում են շատ հետազոտողներ, պատմական միտումը կայանում էր գիտակցված-կամային գործընթացների ոլորտը տեղանքի յուրահատկության հետ կապելու մեջ: Այս տեսակետը հենվում էր այն հանգամանքի վրա, որ մարդկային տարբերությունների աշխարհը խարսխվում է սեփական մշակույթն ունեցող տարանջատված հասարակությունների տարբերությունների վրա, իսկ միջազգային իրավունքն էլ միջնորդ է հանդիսանում այս «մշակութային միավորների» հարաբերություններում³: Այստեղ հստակ շրջադարձային կետ է առանձին, անհատականացված աշխարհայացքների ենթադրյալ գո-

յությունը, որը կարող է ասոցացվել որոշակի «ազգերի», «ժողովուրդների» հետ:

Գլոբալիզացիան թե՛ պահանջում է և թե՛ թուլատրում է ժամանակակից միջազգային իրավունքի վերափոխումը «պետությունների հասարակության» մոդելից դեպի գլոբալ հասարակության և նույնիսկ գլոբալ հանրության մոդելը: Արդյունավետորեն բացառելով սոցիալական հարաբերություններում գործոններ հանդիսացող ժամանակն ու տարածությունը՝ գլոբալիզացիան փոխում է գլոբալ սոցիալական հարաբերությունների որակը՝ փոխելով նաև «պետությունների հասարակության» հնացող մոդելը:

1789 թ. բրիտանացի իրավաբան Ջերեմի Բենթհամը իր «Principles of Morals and Legislation» աշխատության մեջ առաջին անգամ առաջարկեց կիրառել «միջազգային իրավունք» (international law) եզրը⁴: Ինքը՝ Բենթհամը, իր հերթին զարգացրել էր ֆրանսիացի իրավաբան և քաղաքական գործիչ դ'Ազեսսոյի այն դրույթը, որ «ժողովուրդների իրավունք» («droit des gens», jus gentium) եզրի փոխարեն որպես միջպետական հարաբերությունների կարգավորումն ամենճշգրիտ կերպով արտահայտող կիրառվի «ժողովուրդների միջև իրավունք» («droit entre les gens») եզրը⁵: Բենթհամը օգտագործել էր «միջազգային» եզրը, որպեսզի ուսումնասիրեր միջազգային հանրության նկատմամբ կիրառվող իրավունքը:

Միջազգային իրավունքի և ընդհանրապես սոցիետալ ֆրագմենտացիան ավելի են մեծացնում «ազգային պետությունների միջազգային իրավունքի» մոդելից վերացարկվելու անհրաժեշտությունը: Պետությունները դադարել են լինել միջազգային նորմատիվ ոլորտի **միանձնյա** մասնակիցները: Արդեն պարզ է դառնում, որ միջազգային (գլոբալ) իրավական համակարգը պետությունների, միջազգային և ոչ պետական նորմատիվ համախմբերի իրավական պնդումների փոխկապակցված ցանցի է վերածում: Ազգային պետությունը և միջ-

պետական համակարգը հետմոդեռնիստական աշխարհի **կենտրոնական** քաղաքական ձևերն էին, և կանխատեսելի ապագայում դրանք հավանաբար այդպիսին էլ կմնան: Տեղի ունեցած արմատական փոփոխությունը բացատրվում է այն հանգամանքով, որ նրանց՝ նախկինում բացառիկ տիրույթը վերածվել է, ըստ էության, վիճարկվող «տարածքի»: Միջկառավարական կազմակերպությունները, տրասնագզային կորպորացիաները, անհատները, ոչ կառավարական կազմակերպությունները՝ ակտիվորեն մասնակցում են միջազգային նորմատիվ տիրույթի փոփոխմանը: Պետական և միջազգային համակարգերը՝ որպես բարդ սոցիալական համակարգեր, ուր գործակցում են պետական, ոչ պետական, տեղական և գլոբալ սոցիալական հարաբերությունները, ձուլվել են և պայքարում են դինամիկ ու հաճախ փոփոխական համակցություններում⁶: Ու իրավական պնդումների մասնակի զուգադիպման յուրաքանչյուր տեսակ (պետությունը ընդդեմ պետության, պետությունը ընդդեմ միջազգային մարմնի, պետությունը ընդդեմ ոչ պետական միավորի) ստեղծում է արդեն հիբրիդային իրավական տարածություն⁶, ուր պետությունը և հետևապես միջպետական հարաբերությունները որոշող դասական իրավական հենքերը, ինչպիսիք են օրինակ տարածքը կամ ինքնիշխանությունը, դադարում են անկյունաքարային նշանակություն ունենալ:

Գլոբալիզացիան փոփոխում է գլոբալ սոցիալական հարաբերությունների բնույթը: Դիտարկելով այս փաստը քաղաքական տեսության տեսանկյունից՝ գլոբալիզացիան բարձրացնում է հարաբերությունները զուտ տարածքայինից դեպի մեթատարածքային մակարդակ⁶:

Փաստորոն, գլոբալացման պայմաններում պետք է մոռացվեն միջազգային իրավունքի օբյեկտիվ սահմանները: Առաջ են գալիս նոր հասկացություններ, ինչպիսիք են «տրանսազգային» (տարբեր պետական, ինչպես նաև ոչ պետական միավորներ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րի միջև ծագող իրավահարաբերություններ), «վերազգային» (ազգային պետությունների կամքից անկախ, միջազգային կազմակերպությունների կողմից ստեղծված համակարգն է, որը գլոբալ կարգերի և փորձագիտական որոշումների միջոցով ունի ֆիկսացնում է միջազգային հարաբերությունների համակարգը՝ վերջինիս գլոբալ կառավարման ուղեցիկներ տալով) և «գլոբալ» իրավունքի հայեցակարգերը, որոնք բոլորն էլ որոշակիորեն ապաազգայնացված են, քանի որ հնարավոր է, որ իրավական նորմերը ֆորմալ տեսանկյունից միջազգային կամ ազգային իրավունքի մաս չհանդիսանան, ինչպես որ դա կարող է մեկանաբանվել կոնվենցիոնալ տեսակետից:

Ինքնիշխանությունից վերացարկվող միջազգային հարաբերությունների հայեցակարգի ուսումնասիրության համար հատկանշական են նաև Վ. Ֆրիդմանի աշխատությունները¹⁰: Մասնավորապես նա խոսում է միջազգային (international) հետզուգահետ՝ տրանսազգային (transnational) և վերազգային (supranational) հասարակությունների առաջացման մասին: Նույն ժամանակ նա ընդգծում է, որ միջազգային հարաբերությունները զարգացնում են բոլոր երեք մակարդակների վրա, որոնցից յուրաքանչյուրը որոշակի հարաբերությունների համախումբ է ներկայացնում՝ ընդգծելով, որ պետությունները, փաստորեն, հանդես են գալիս որպես **տրանսազգային** հարաբերությունների հիմնական դերակատարներ:

Այս պայմաններում մենք ականատես ենք լինում նորմերի ծավալուն, ապակենտրոնացված և չհարմոնիզացված մարմնի ծավալմանը, որն անվանվում է «տրանսազգային իրավունք»: Տրանսազգային իրավունքի հայեցակարգը անդրադառնում է այն իրավական նորմերին, որոնք անմիջականորեն չեն համընկնում ազգային կամ

միջազգային իրավունքների հայեցակարգերին, բայց անհրաժեշտաբար գլոբալ չեն իրենց բնույթով և միջսահմանային կիրառում ունեն մեկից ավելի իրավասություններում գտնվող կողմերի նկատմամբ¹¹:

Ինքնին տրանսազգային իրավունք եզրը նոր չէ: Դեռևս 1956 թ. միջազգային իրավունքի հայտնի մասնագետ, Միջազգային Դատարանի դատավոր Ֆիլիպ Ջեսսփը Յեյլի համալսարանում անցկացվող Սթորսյան դասախոսությունների ժամանակ ներկայացրեց տրանսազգային իրավունքի իր հայեցակարգը, որը նա բնորոշեց որպես «ողջ իրավունքը, որը կարգավորում է ազգային սահմաններն անցնող գործողություններն ու իրադաձությունները: Այս վերջին եզրը ներառում է թե՛ հանրային և թե՛ մասնավոր միջազգային իրավունքը, ինչպես նաև այլ կանոնները, որոնք ամբողջովին չեն համապատասխանում այս ստանդարտ չափանիշներին»¹²: Ի տարբերություն միջազգային հանրային իրավունքի՝ Ջեսսփի համար տրանսազգային իրավունքը սահմանափակված չէ միայն ինքնիշխան պետությունների միջև փոխհարաբերություններով: Փոխարենը տրանսազգային իրավունքը բաղկացած է հանրային (պետական, կառավարական) և մասնավոր (անհատական, խմբային, առևտրային կամ այլ) դերակատարների միջսահմանային գործարքները ղեկավարող նորմերից: Ջեսսփի կարծիքով, տրանսազգային իրավունքը կարգավորման միջոց է հանդիսանում այն հանրային և մասնավոր հարաբերությունների համար, որոնք դուրս են գալիս մեկ պետության կողմից կարգավորվելու սահմաններից: Ըստ Ջեսսփի, հանրային և մասնավոր միջազգային իրավունքը, ինչպես նաև ստանդարտ կատեգորիաներին չհամապատասխանող կանոնները ընդգրկվում են տրանսազգային իրավունքի հայեցակարգի մեջ¹³:

Ընդ որում, Ջեսսփը հիշատակում է հայտնի ֆրանսիացի իրավաբան Ջ. Սելի՝ 1932 թ. «Միջազգային իրավունքի համա-

ռոտ դասընթաց» աշխատությունը, ուր նշվում էր, որ մենք գործ ունենք պետության սահմաններից դուրս եկող մարդկային հարաբերությունների հետ (մեկ պետության սահմաններից դուրս եկող ունիֆիկացված սոցիալական իրավունքի տեսություն):

Ջեսսսփը, սակայն, պարզաբանում է, որ նա համաձայն է այն դիրքորոշման հետ, որ պետությունները միջազգային իրավունքի միակ սուբյեկտները չեն, և չի ընկնում Սելի այն ծայրահեղության մեջ՝ պնդելով, որ միակ սուբյեկտ են հանդիսանում անհատները:

Սելի կարծիքով, արհեստական կլիներ տարբերակումը միջազգային իրավունքի (պետությունների գործողությունները կարգավորող) և նրա՝ լայն իմաստով անհատների գործողությունները կարգավորող ճյուղի (միջազգային մասնավոր իրավունք կամ իրավունքների միջև բախումները կարգավորող կանոնները) միջև: Ըստ Սելի՝ այս երկու մակարդակները, այն է միջպետական (կառավարական) գործողությունները և անհատների միջև կատարվող միջազգային գործառնությունները (երկրորդ խումբ) իրականում անքակտելիորեն փոխկապակցված են և իրականության մեկ շերտ են կազմում:

Արդեն իսկ հիշատակված Վ. Ֆրիդմանը, զարգացնելով Ջեսսսփի տեսակետները, նաև կարծում է, որ «տարբեր խմբերի ու անհատների միջև տնտեսական, սոցիալական և մշակութային հարաբերությունների մի զգալի քանակ դուրս է գալիս պետության սահմաններից... միջազգային հանրության մեջ ծագող տրանսազգային իրավիճակների ցուցիչներ են հանդիսանում»՝ առաջ քաշելով այն միտքը, որ չնայած դրանք ներկայումս շարունակում են միջազգային իրավունքի օբյեկտ մնալ, սակայն ապագայում պետք է կարգավորվեն տրանսազգային իրավունքով¹⁴:

Հարկ է նաև նշել և որոշակի առումով համաձայնվել նաև Դ. Կարոյի և Պ. Ժյուարի «Միջազգային տնտեսական իրավունք»¹⁵

աշխատությունում առաջ քաշված հեղինակների այն կարծիքներին, որոնք տրանսազգային իրավունքը մեկնաբանում են որպես «միջազգային բնույթի հարաբերությունները կարգավորող նորմերից կազմված յուրահատուկ իրավակարգ, որոնք իրենց սուբյեկտային կազմով կամ օբյեկտի բնույթով չեն ընկնում ոչ միջազգային, ոչ էլ ներպետական իրավունքի գործողության ոլորտ կամ էլ չեն կարող նրանց կողմից լիովին ընդգրկված լինել: Այս աղբյուրները կոչվում են «երրորդ իրավակարգի աղբյուրներ» և ծագել են որպես տնտեսական խաղացողների, իսկ ավելի կոնկրետ՝ վերազգային կորպորացիաների, համատեղ ջանքերի արդյունք»¹⁶:

Ջեսսսփին զուգահեռ՝ ֆրանսիացի իրավաբան Բերթոլդ Գոլդմանը և նրա անգլիացի գործընկեր Քլայվ Շմիտոֆը առաջ քաշեցին տրանսազգային իրավունքի լիովին անացիոնալ (ոչ ազգային) հասկացությունը¹⁷՝ նրան տալով այն բնութագրիչները, որոնք էլ հիմք ծառայեցին միջազգային բնույթի հարաբերությունների հետագա տարբերակմանը:

Հայեցակարգի ժամանակակից հետազոտողներից Գ.Պ. Կալիեսը մասնավորապես գրում է, որ «... տրանսազգայինը, այսպիսով, մի երևույթ է նշանակում, որը տարածվում է ազգային սահմանների տարածքից դուրս... Այս տեսակետից՝ «տրանսազգային իրավունքը» նախատեսվում է որպես ավելի լայն հասկացություն, քան միջազգային հանրային իրավունքը, որն գործառնության սահմանումների միջոցով ուսումնասիրում է անդրսահմանային հարցերի բոլոր տեսակները և ընդգծում է մասնավոր խաղացողների դերը գլոբալացվող աշխարհի աճող փոխկապակցության մեջ»¹⁸:

Ի վերջո, անկասկած հետաքրքրություն է ներակայացնում նաև Վ. Շումիլովի տեսակետը, ով կարծում է, որ տրանսազգային իրավունքը «ընդհանուր թույլատվության բնագավառում մասնավոր անձանց փոխադարձ կամ հանրային անձանց հետ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

միջազգային բնույթի հարաբերություններում ստեղծվող նորմերի համախումբն է (այսինքն՝ այն ոլորտում, ուր թե՛ ներպետական իրավունքը և թե՛ միջազգային իրավունքը կիրառում են կարգավորման «թուլատրվում է ամեն ինչ, ինչը արգելված չէ» սկզբունքը)¹⁹:

Միաժամանակ նա նշում է, որ տրանսազգային իրավունքը «հանդես է գալիս որպես սինթետիկ իրավական ոլորտ, ուր գործակցում են թե՛ միջազգային իրավունքի և թե՛ ներպետական իրավունքի սուբյեկտները»:

Տրանսազգային իրավունքի հայեցակարգի վերաբերյալ արտահայտված տարբեր տեսակետների քննարկման արդյունքում կարելի է ասել, որ այն ներառում է միջազգային հանրային և մասնավոր իրավունքի գործող նորմերը, ինչպես նաև մի շարք «այլ նորմեր» և միևնույն ժամանակ նորմերի առանձին համակարգ է հանդիսանում, որը կոչված է կարգավորելու միջազգային-իրավական և ներպետական-իրավական կարգավորման ոլորտից դուրս գտնվող հարաբերությունները:

Տրանսազգային իրավունքի հայեցակարգը ոչ միայն մարտահրավեր է թե՛ մասնավոր և թե՛ հանրային միջազգային իրավունքի պետականակենտրոն գաղափարին, բայց այն նաև նոր հեռանկար է առաջարկում ազգային պետության թե՛ ներսում և թե՛ դրսում նոր կարգավորման շրջանակների համատեքստում ծավալվող իրավական նորմերի համար²⁰:

Ամեն պարագայում տրանսազգային իրավունքը որպես այդպիսին դեռևս իրավունքի նոր ճյուղ չէ, այլ մոտեցում է, որն առաջարկվում է իրավունքի միջազգային հատվածի համար²¹: Ինքնին այս մոտեցումն էլ իր ներքին ընկալմամբ միասնական չէ և մի քանի տարբեր ճյուղավորումներ է բովանդակում, որոնք էլ կփորձենք լուսաբանել:

Տրանսազգային իրավական տրադիցիոնալիստական մոտեցում: Այս մոտեցմամբ, նորմատիվ մակարդակում թե՛ կիրառվող առկա իրավունքը և թե՛ ցանկալի կամ նույնիսկ անհրաժեշտ ապագա իրավունքը կազմված են կանոններից, սկզբունքներից և/կամ չափանիշներից, փոխկապակցված որոշումներից ու իրավական ակտերից, որոնք գտնվում են իրավական համակարգերի տեսակներից երկուսի տիրույթում՝ միջազգային հանրային իրավունք կամ ներպետական իրավունք: Այս պարագայում առանձին «տրանսազգային իրավունք»-ի կարիք չկա, քանի որ նման «իրավունքը» անխուսափելիորեն կընդուներ և գոյության կունենար միայն որպես միջազգային հանրային իրավունքի և ազգային իրավունքի համակցված գործառույթ և նրանց կարգավորված փոխգործակցություն: Կարելի է ասել, որ այս մոտեցմամբ ընդգծվում է, որ տրանսազգային իրավունքի հայեցակարգերի քննարկման դեպքում, եթե խոսում ենք միջազգային հանրային իրավունքի մասին, ապա միանշանակորեն հասկանում ենք, որ վերջինս կարգավորում է հարաբերությունները պետությունների միջև, իսկ ազգային (նաև միջազգային մասնավոր իրավունքը) անդրադառնում է ազգային իրավասությունների միջև բախումներին՝ պաշտպանելով իր գերակայությունը մասնավոր սուբյեկտների (դերակատարների) տրանսազգային գործարքներում:

Տրանսազգային իրավական որոշումներ: Այս մոտեցումը ենթադրում է, որ առկա է տրանսազգային իրավունքի մի այնպիսի տեսակ, երբ նկատվում է տրանսազգային համատեքստերի/խնդիրների վերաբերյալ կայացրած որոշումների աստիճանական կուտակում: Որոշումներ, որոնք զուգահեռաբար կամ ինքնաբերաբար «սնուցվել» (տեղեկացվել) են ազգային և միջազգային իրավունքի կողմից՝ որոշման տրված կանոնի կամ որոշման փոխկապակցված կանոնների համար միասին ստեղծելով հավանական կիրառելի (փոփոխելի) չափա-

նիշների մի համախումբ: «Իրավունքի» նկատմամբ այս մոտեցմամբ այն քննարկվում է դեգադրեզացված (ապախոշորացված) վիճակում՝ ոչ որպես ամբողջական իրավակարգեր կամ համակարգեր, այլ ավելի շուտ որպես առանձին նորմեր և նորմատիվ քլաստերներ, որոնք ի վիճակի են ամբողջից հիմնավորված առանձնացման և այնուհետև անընդհատ փոփոխվող եզակի դեպքերը սպասարկելուն: Կարելի նույնսիկ ասել, որ իրավական-համակարգային տարրերը հիմնականում մեթոդների (և հարակից փաստերի) տեսքով են հանդես գալիս, որոնց միջոցով էլ որոշվում է, թե արդյոք այս կամ այն սուբյեկտը (դերակատարը) իրավունք ունի ընդունելու որոշումը, որի վրա էլ հենվում է այս մոտեցումը²²: Ավելի պարզ լինելու համար կարել է ասել, որ ազգային դատարաններն ու միջազգային արբիտրները կայացնում են որոշումներ, որոնց քանակը գնալով աճում է: Այս որոշումներն են, որ դեգադրեզացված քլաստերներ են ստեղծում, որոնք կարող են առանձնացվել և կիրառվել փաստաբանների կողմից, ինչպես նաև ուղղորդիչ հանդիսանալ հետագա որոշումների համար:

Ջեսափի սահմանումների լույսի ներքո, այս երկրորդ մոտեցման առումով, տրանսազգային իրավունքը արդյունք է «ներառված հանրային և մասնավոր միջազգային իրավունքների», որտեղ նախ և առաջ մասնավոր միջազգային իրավունքի մեթոդը ներպետական իրավական համակարգերից հավանականորեն կիրառելի նյութական կանոնների բազմազանության ընդհանրացման մեխանիզմն է, որը պետք է սահմանվի և կիրառվի, իսկ ներպետական և ազգային իրավունքների փոխգործակցությունը այն միջոցն է, որով միջազգային հանրային իրավունքը կարող է որոշման կարգ ընտրվել տրված ենթատեքստում: Սույն աշխատության անմիջական նպատակների համար կարելի է ասել, որ այս մոտեցման լույսի ներքո տրանսազգային իրավունքը հասկացվում է որպես տրան-

սազգային իրավիճակների նկատմամբ ներպետական և միջազգային իրավունքի ինստիտուցիոնալ կերպով ստացված մեկնաբանություններ կամ կիրառում²³:

Տրանսազգային սոցիո-իրավական պլյուրալիզմ: Այս մոտեցումը տրանսազգային իրավունքը չի դիտարկում որպես ինչ-որ մի երևույթ, որն ավելին է, քան որոշումները գումարած որոշումների արդյունքներից բխող գնահատականներ տրանսազգային չափման մեջ: Ավելի շուտ տվյալ մոտեցումը ներկայացվում է որպես որոշակի առումով իր սեփական նորմատիվ դաշտը զբաղեցնող երևույթ: Օրինակ՝ տրանսազգային իրավունքը ներկայացնելու ոչ այնքան հազվադեպ ձևերից է նկարագրել այն որպես իրավունք, որը ոչ միջազգային է, ոչ ազգային, ոչ հանրային է և ոչ էլ մասնավոր՝ միևնույն ժամանակ հանդիսանալով թե՛ միջազգային և թե՛ ազգային, թե՛ հանրային և թե՛ մասնավոր²⁴: Ըստ այս տեսակետի՝ իրավական նորմերի համախումբն այս բնագավառում ավելի հետևողական և կարգավորված է դառնում ժամանակի ընթացքում, և մենք կարող ենք տեսնել իրավունքի հստակ կորպուսի առաջացում, որը «պետական» չէ, այլ «տրանսազգային»՝ ստեղծվելով պետական և մասնավոր դերակատարների (ներառյալ ազգային դատավորների, միջազգային արբիտրաժային մարմինների, միջազգային մասնավոր օրինաստեղծ կազմակերպությունների)՝ պետական սահմաններն անցնող շփումներում, որի արդյունքում տրանսազգային իրավունքը կարելի է նաև անվանել «ֆունկցիոնալության իրավունք», քանի որ այն իր հիմքում ունի ոչ թե տարածքային միավորների վարքագծի միջազգային իրավական կառավարման, այլ նրանց և այլ ոչ պետական միավորների կամ հենց ոչ պետական միավորների միջև անխուսափելիորեն ծագող գործառական կանոնակարգման հիմնախնդիրը:

Հենց այս մոտեցման մեջ է կայանում տրանսազգային իրավունքի էությունը. գտնվելով ազգային և միջազգային իրա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վունքի միջև՝ այն իր նորմատիվ կարգավորման դաշտ է ընդգրկում հենց վերոնշյալ հարաբերությունները՝ ծածկելով Վեստֆալյան գաղափարախոսության վրա հիմնված միջազգային իրավունքի շրջանակից դուրս մնացող կամ գործնականում դրանով չկարգավորվող ոլորտները: Հետևապես կարելի պնդել, որ տրանսազգային իրավունքում ներգրավված միջազգային գործարար գործարքները, մասնավոր դերակատարները, անհատների նկատմամբ պարտավորությունների իրականացումը իրենց վրա են ստանձնել միջազգային ստանդարտների և միջազգային ռեժիմների կողմից սահմանվող նորմերի շրջանառության և պարտադրման գնալով աճող դերը, իսկ հանրայինի և մասնավորի միջև առկա սահմանները և «միջազգային «հանրային» իրավունքում առկա մտահոգությունները, դերակատարները և գործընթացները տարածվել են և ավելի «մասնավոր» բնույթ են ձեռք բերել»²⁵:

Գործնականում ստացվում է, որ միջազգային շփումների մասնակիցներն իրենք են մշակում վարքագծի այն կանոնները, որոնք արդեն դուրս են գտնվում թե՛ ներպետական իրավունքի և թե՛ ընդհանուր միջազգային իրավունքի շրջանակներից, և որոնք երկու համակարգերում էլ կարգավորվում են ընդհանուր թույլատվության տեսակով կամ էլ ընդհանրապես չեն կարգավորվում²⁶:

Ըստ էության ստեղծվում է իրավական մի նոր հարթություն, որը կոչված է կանոնակարգելու հարաբերությունները միջազգային իրավունքի սուբյեկտների և միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող միավորների միջև՝ դրանով իսկ առաջացնելով նոր հետերոգենիկ համակարգ, որը ո՛չ իր ծագմամբ, ո՛չ բնույթով լիովին միջազգային և լիովին ազգային չէ:

Առաջին հայացքից թվում է, թե տրանսազգային իրավունքը կանոնակարգում և

դատաիրավական ցանցների միջոցով խթանում է միջսահմանային գործողությունների ոչ ավանդական, այլընտրանքային ձևերը²⁷: Սակայն ավելի խորքային ուսումնասիրության դեպքում պարզ է դառնում, որ տրանսազգային իրավունքի հետագա զենեզիսներից մեկը վերահայտնաբերեց միջնադարյան առևտրականների ոչ պաշտոնական, ոչ ֆորմալ, պայմանագրային *lex mercatoria*-ն՝ առևտրային իրավունքը²⁸, որը երբեմն անվանում են «տրանսազգային առևտրային իրավունք»: *Lex mercatoria*-ն **մասնավոր դերակատարների** կողմից նոր նյութական իրավունքի ստեղծումն է, որը կիրառվում է անդրսահմանային միջավայրում²⁹: Միջազգային առևտրի մասնակիցների կողմից ստեղծված միջազգային առևտրի կանոնների կողիֆիկացիայի մեջ արտահայտված և պայմանագրերի կնքման պրակտիկայում ավելի ու ավելի հաճախ կիրառվող ու միջազգային արբիտրաժների կողմից որոշումների կայացման համար օգտագործվող այս իրավական երևույթը թույլ է տալիս խոսելու տրանսազգային իրավունքի գոյության փաստի մասին: Որոշ հետազոտողների կարծիքով, այն պետք է կիրառվի միայն առևտրային հարաբերություններում և պետք է կոչվի *lex mercatoria*:

Սակայն բաց է մնում այն հարցը, թե արդյո՞ք տրանսազգային իրավունքը սահմանափակվում է միայն *lex mercatoria*-ով, թե՞ տարածվում է դեպի ավելի համապարփակ և ընդգրկում դաշտ: Պարզեցնելով հարցադրումը՝ կարելի ձևակերպել, թե արդյո՞ք տրանսազգային իրավունքի սուբյեկտ են հանդիսանում միմիայն մասնավոր դերակատարները, թե՞ դրա ծածկույթի և կիրառման ոլորտ են ընկնում նաև միջազգային իրավունքի ավանդական սուբյեկտները:

Տրանսազգային իրավունքը հանդես է գալիս որպես սինթետիկ («հիբրիդային») իրավական բնագավառ, որտեղ փոխգործակցում են թե՛ միջազգային և թե՛ ներպետական իրավունքի սուբյեկտները՝ ստեղ-

ծելով, այսպես կոչված, «անկյունագծային հարաբերություններ»:

Բանն այն է, որ քանի որ հանրային-իրավական սուբյեկտը մասնավոր իրավական բնույթի հարաբերությունների մեջ է մտնում, այս «անկյունագծային» հարաբերությունները անդրադառնում են գործառույթային իմունիտետի տեսությանը, որը բացառում է պետության՝ որպես իշխանական սուբյեկտի կողմից բացարձակ իմունիտետի կիրառումը, այսինքն՝ պետության՝ որպես *de jure imperii* գործողությունների կատարումը: Համարվում է, որ օտարերկրյա պետությունն օգտվում է իմունիտետից միայն այն դեպքերում, երբ այն ինքնիշխան գործողություններ է կատարում (*acta imperii; de jure imperii*), օրինակ՝ դիվանագիտական պատվիրակություն է ուղարկում, հյուպատոսություններ է բացում: Իսկ եթե օտարերկրյա պետությունը առևտրային բնույթի գործողություններ է իրականացնում (*acta gestionis*) (այն է՝ առևտրային գործունեություն է ծավալում (*de jure gestionis*), առևտրային գործարքներ է կնքում), ապա այն տվյալ իմունիտետից չի օգտվում³⁰:

Այս դեպքում հիմնական նկատառում է դառնում իմունիտետի «տրոհման» տեսությունը, որը ենթադրում է պետության իմունիտետի բաժանումը բացարձակ և գործառույթային տարրերի, և որում պետության գործողությունները պետք է որակվեն որպես իշխանական սուբյեկտի («*de jure imperii*») և որպես մասնավոր անձի («*de jure gestionis*») գործողություններ:

ՄԱԿ-ի՝ պետությունների և նրանց սեփականության իրավասային իմունիտետների մասին 2004 թ. կոնվենցիան մեծամասամբ արտացոլում է օտարերկրյա պետության իմունիտետի մասին տարբեր իրավական համակարգերի կողմից մշակված մոտեցումները, ինչպես նաև օրենսդրության և դատական պրակտիկային միտումները:

Կոնվենցիային 2-րդ հոդվածը հստակորեն սահմանում է «պետություն» հասկա-

ցությունը, որը պետք է հասկանալ որպես «պետություն և նրա կառավարման տարրեր մարմինների, դաշնային պետության բաղկացուցիչ մասեր կամ պետության քաղաքական ստորաբաժանումներ, որոնք իրավագոր են ինքնիշխան գործողություններ իրականացնելու և գործում են հենց այս կարգավիճակում. պետության հաստատություններ կամ ինստիտուտներ կամ էլ այլ միավորներ այն չափով, որքանով որ նրանք իրավագոր են կատարելու և փաստորեն կատարում են պետությունների ինքնիշխանության իրացմանն ուղղված գործողություններ. այդ կարգավիճակում գործող պետության ներկայացուցիչներ են»:

Կոնվենցիան նաև սահմանում է, որ պետությունը այլ երկրի դատարանում կատարվող քննության դեպքում չի կարող հղում կատարել իրավասությունից իբրև իմունիտետին, եթե այն ակնհայտ կերպով «միջազգային համաձայնագրի, գրավոր պայմանագրի, դատարանում արված հայտարարության կամ տվյալ քննության շրջանակներում տրված գրավոր հաղորդման» միջոցով իր համաձայնությունն է արտահայտել տվյալ դատարանի կողմից այդ հարցի կամ գործի նկատմամբ իրավասության իրացմանը:

Այս անդրադարձը ցույց է տալիս, որ ոչ միայն ակադեմիական մակարդակի վրա, այլև գործնականում քննարկվում է և կիրառվում է միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտներին՝ պետություններին, արդեն վերը քննարկված «անկյունագծային» հարաբերությունների (անդրսահմանային մասնավոր գործարքների) լիիրավ կողմ ճանաչելու գաղափարը: Այս հանգամանքի վառ ապացույց կարող են հանդիսանալ Պետությունների և Այլ երկրների Քաղաքացիների Միջև Ներդրումային Վեճերի Լուծման 1966 թ. կոնվենցիայի (Convention on the Settlement of Investment Disputes between States and Nationals of Other States) հիման վրա ստեղծված Ներդրումային Վեճերի Լուծման

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Միջազգային Կենտրոնը (ICSID), ինչպես նաև Հաագայի Արբիտրաժային Դատարանը, որը իրավասու է քննելու նաև առևտրային վեճերը պետությունների և անհատների միջև:

Փորձելով դասակարգել նախկինում առկա և արդեն իսկ գլուխ բարձրացնող գործընթացները՝ կարելի է ասել, որ այսպես կոչված «միջազգային իրավական գործընթացը»՝ Բենթհամյան իմաստով, կառավարություն-կառավարություն հորիզոնական գործընթացն է, ուր, միջազգային նորմերին համապատասխանությունը ապահովելու նպատակով, ազգային-պետությունները գործակցության մեջ են մտնում միջկառավարական ասպարեզում: Սակայն ի հայտ է գալիս հարաբերությունների նոր տարատեսակ, որն ամերիկյան իրավաբան Հ. Կոն անվանում է «ուղղահայաց գործընթաց» կամ «տրանսազգային իրավական գործընթաց», որտեղ պետական և ոչ պետական դերակատարները ներգրավվում են ազգային և միջազգային ոլորտների բազմազանության մեջ, որպեսզի խախտողներին պարտադրեն ենթարկվելու սահմանված օրենսդրությանը, այնպես, ինչպես ազգային օրենքների³¹:

Այսինքն, կանոնին ենթարկվելը բխում է նորմերի **միջազգայնացումից**, որի հիմնական մասը ծագում է իրավական գործընթացին և մասնավորապես տրանսազգային իրավական գործընթացին մասնակցությունից:

Տրանսազգային իրավական գործընթացը այն գործընթացն է, ուր պետական և մասնավոր կազմակերպությունները, ներառյալ ազգային պետությունները, կորպորացիաները, միջազգային կազմակերպությունները, հասարակական կազմակերպություններն ու անհատները, միջազգային իրավունքի մեկնաբանության, պարտադրման և վերջիվերջո այն «ազգային դարձնելու» նպատակով, գործակցում են

տարբեր ասպարեզներում³²: Այս մոտեցման հիմնական տարրերն են գործակցությունը, մեկնաբանությունը և «ազգային դարձնելը»: Այսպիսով, տրանսազգային իրավական գործընթացը իրավաբանական մեկնաբանություն տալու առումով այնպիսի գործակցության խրախուսումն է, որը կհանգեցնի ազգային իրավունքում գլոբալ ստանդարտի ամրագրմանը: Այսինքն՝ ներքին մակարդակի վրա այս կամ այն նորմին համապատասխանելը վերածվում է միջազգային մակարդակում դրան ենթարկվելուն³³: Տրանսազգային իրավական գործընթացի միջոցով տեղի են ունենում իրավական նորմերի **տրանսազգային** ստեղծումն ու տեղափոխումը:

Այս իմաստով «տրանսազգայնությունը» կարող է մեկնաբանվել երկու դիտարկմամբ՝ տարբերակելով սուբյեկտները (տրանսազգային գործողություններին ու իրադրություններին անդրադարձող իրավունք) կամ աղբյուրները (միջազգային կամ օտարերկրյան իրավունք, որը անդրսահմանային կերպով ներմուծվել կամ արտահանվել է):

Որոշակի իրավական դաշտերում տրանսազգային իրավական գործընթացը տարբեր կերպ է տեղի ունենում՝ առանձին կիսավատնոն իրավական համակարգեր ստեղծելու ներուժ պարունակելով: Տրանսազգային իրավական գործընթաց եզրը հայեցակարգային հիմքերի վրա է դրվում որպես տրված գործառույթային տիրույթում տրանսազգային իրավական նորմերի և հարակից ինստիտուտների համախումբ: Այնտեղ, որտեղ այս նորմերը համեմատորեն հստակ են, հետևողական և գործնականում կիրառելի, տրանսազգային իրավական կարգը ավելի աչքի է ընկնում և կարող է քննարկվել որպես համակարգ: Հակառակ դեպքում, տրանսազգային իրավակարգը հեղիեղուկ և փխրուն է ու հետևապես՝ պակաս արդյունավետ է ներպետական ինստիտուցիոնալ և իրավական փոփոխություններ կատարելու գործում:

Տրանսազգային իրավունքն այսօր

ընդգծում և լրացնում է պետության և ոչ պետական «դերակատարների» փոխհարաբերության մասին իրավական տեսակետները՝ մատնանշելով ոչ պետական միավորների կարևորությունը միջսահմանային հարաբերություններում: Այն, փաստորեն, ընդգրկելով պետական և ոչ պետական միավորների այն հարաբերությունները, որոնք գտնվում են պաշտոնական իրավական ակտերից (միջազգային իրավական պայմանագրերից և կոնվենցիաներից) դուրս (ապազգայնացված մարդկային և ինստիտուցիոնալ հարաբերությունները³⁴) և կանոնակարգում է դրանք:

Տրանսազգային իրավունքը առաջարկվում է որպես լրացուցիչ մի դասակարգ, որը տարբերակում է մտցնում միջազգային բնույթ կրող հարաբերությունների կարգավորման բնագավառում: Այն կոտրում է միջպետական հարաբերությունների վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ ընդգծելով պետական և ոչ պետական միավորների միջև առկա բազմաթիվ հա-

րաբերությունները: Այս շրջանակը արտացոլում է միջազգային իրավունքում առկա և նրան սնող հիմնարար տարածայնությունները, որոնք վճռականորեն տանում են դեպի մարդկային գործունեության ավելի լայն և ժամանակակից միջազգային իրավունքին ավելի համապատասխան շրջանակի ընդգրկման:

Ըստ էության, տրանսազգային իրավունքի արդյունավետ դերն այսօր կայանում է նրա՝ տրանսազգային գործողությունների շուրջ գոյացած ապակենտրոնացած և խիստ ֆրագմենտացված սոցիո-իրավական և քաղաքական դատողությունների լուսաբանման և կարգավորման գործում, իսկ տրանսազգային իրավունքի ավելի համապարփակ կիրառումը կենթադրի նորմերի ավելի մեծ զինանոց, որի վրա հնարավոր կլինի հենվել: Այդ ժամանակ կոնկրետ դեպքերում ընտրության անհրաժեշտություն չի ծագի. կիրառել միջազգային հանրային³⁵, թե՛ մասնավոր իրավունք³⁵:

¹ Իհարկե սա միջազգային իրավունքի շատ պարզեցված նկարագրությունն է, քանի որ միջազգային իրավունքի նախահրոցիոսյան հայցեակարգերում բնական իրավունքի կողքին նշվում է, օրինակ, կրոնական կամ էթնիկ հիմք ունեցող համակարգերի միջազգային շփումների գաղափարը:

² S.S. «Lotus» (France v. Turkey), 1927 P.C.I.J. (series A) No. 10, September 7

³ Տե՛ս, Paul Schiff Berman, *From International law to Law and Globalization*, p.512

⁴ Տե՛ս, The Works of Jeremy Bentham. Vol.1, publ. by J. Bowring. Edinburgh. 1859.

⁵ Տե՛ս, նույն տեղը

⁶ Տե՛ս, Cassese Antonio, *International Law*, Oxford University Press 2001, p. 5

⁷ Տե՛ս, Boaventura de Sousa Santos, *Toward a New Legal Common Sense: Law, Globalization, and Emancipation* (2d ed. 2002), էջ 94:

⁸ Տե՛ս, Paul Schiff Berman, *GLOBAL LEGAL PLURALISM*, *Southern California Law Review*, September, 2007, p. 1159

⁹ Տե՛ս, GLOBAL TRANSFORMATIONS (David Held, et. al. EDS 1999)

¹⁰ Տե՛ս, W. Friedmann. *The changing structure of international law*. L. 1964.; *Law in a changing society*. L. 1959. и др.

¹¹ Տե՛ս, Gregory Shaffer, *Transnational Legal Process and State Change, Opportunities and Constraints*, *University of Minnesota Law School, Legal Studies Research Paper Series*, Research Paper No 10-28, էջ 7:

¹² Տե՛ս, Jessup, Phillip C., *Transnational Law*, New Haven, Yale University Press, 1956

¹³ Տե՛ս, նույն տեղը, էջ 2:

¹⁴ Տե՛ս, նույն տեղը:

¹⁵ Տե՛ս, Карро Д., Жюйар П. *Международное экономическое право: Учебник / Пер. с фр В. П. Серебренникова, под ред. В. М. Шумилова. М.: Международные отношения, 2001г.*

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 9:

¹⁷ Տե՛ս, Clive Shmithoff, *Das neue Recht des Welthandels*, 28 *Rabels*, 47, 1964:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- ¹⁸ Տե՛ս, Graf-Peter Calliess. Reflexive Transnational Law: The Privatisation of Civil Law and the Civilisation of Private Law // Zeitschrift für Rechtssoziologie 23 (2002), Heft 2, S. 185-216:
- ¹⁹ Տե՛ս, Шумилов В.М. Международное экономическое право в эпоху глобализации. М., 2003. С. 229.
- ²⁰ Տե՛ս, Graf-Peter Calliess, Peer Zumbansen, Transformation of the States, University of Bremen, Collaborative Research Center 597, 2007, p.2
- ²¹ Տե՛ս, Yale Law Review, Jessup, Phillip C., Transnational Law, New Haven, Yale University Press, 1956, p. 813
- ²² Ի հակադրում իրավական տեսության ավանդական մոտեցման, որ միշտ և ամենուրեք համակարգային է դիտարկում իրավունքը (այս եզրահանգումներով, որ ողջ իրավունքը պատկանում է կամ ներպետական, կամ էլ միջազգային տիրույթին), որն էլ պետականակենտրոն տեսության մեջ գերակայող համոզմունքներից է:
- ²³ Տե՛ս, Craig Scott, “Transnational Law” as a Proto-Concept, Three Conceptions, 10 German Law Journal, N7, 1 July 2009, p. 871
- ²⁴ Նույն տեղը, էջ 874:
- ²⁵ Տե՛ս, Ralph G. Steinhardt, THE PRIVATIZATION OF PUBLIC LAW, 25 GEO Washington Journal of International Law and Economy, 1991, p. 523
- ²⁶ Տե՛ս Шумилов В.М. Международное экономическое право. Ростов н/Д., 2003. С. 123.
- ²⁷ Տե՛ս, Slaughter, Anne-Marie, *International Law in a World of Liberal States*, 6 European Journal of International Law, 1995, pp. 1–39.
- ²⁸ Տե՛ս, Gunther Teubner, *Global Bukowina, Legal Pluralism in the World society*, Appeared in: Gunther Teubner (ed.), *Global Law Without a State*. Brookfield:Dartmouth 1997, 3-28
- ²⁹ Տե՛ս, Clive Schmitthoff, *International Business Law: A New Law Merchant*, 2 Current L. & Soc. Probs. 129 (1961):
- ³⁰ Տե՛ս, Article 10 United Nations Convention on Jurisdictional Immunities of States and Their Property, ընդունվել է 2004թ., բայց դեռ ուժի մեջ չի մտել:
- ³¹ Տե՛ս, Harold Koh, *Transnational Legal Process after September 11*, Jefferson Memorial Lecture, BERKELEY JOURNAL OF INTERNATIONAL LAW, Vol: 22, 2004, 337-354 p. 339
- ³² Տե՛ս, Harold Koh, *Transnational Legal Process*, 75 NEBRASKA LAW REVIEW, pp.181-183, 1996
- ³³ Տե՛ս, Harold Koh, The 1998 Frankel lecture, *Bringing international Law home*, 35 HOUSTON LAW REVIEW, 626-632, 1998 p. 632
- ³⁴ Տե՛ս, Sassen, Saskia, *Globalization of Denationalization*, 10 Review of International Political Economy, 2003 pp.1-22
- ³⁵ Տե՛ս, Philip C. Jessup. *Transnational law*. 1956. New Haven. P. 15

THE CONCEPT OF TRANSNATIONAL LAW AND ITS TRANSBOUNDARY EFFECT

Artak HARUTYUNYAN

*Assistant of the Chairman of
"Vallex" group of companies*

The article above discusses the concept of the transnational law that has been introduced by Phillip C. Jessup at his Storrs lectures at Yale in 1956. This article explores the transformations of "society of states" model to the model of global society and its impact to the introduction of extensive, decentralized and non-harmonized body of norms which is called transnational law. The author analyzes the approaches of different scholars who have affected the development of Jessup's concept (G. Ssel) and who had been affected by Jessup (W. Friedman, C. Schmithoff, G.P. Calless etc.).

The transnational law concept refers to those legal norms that does not immediately belong to the concept of either national or international law, may not be global by their application, but provide for a transboundary

coverage for the parties under several jurisdictions.

The author also uses several classifications to define the approaches to the transnational law. A particular attention was drawn to the understanding of the new realities of state immunity under the light of transnational law, as well the applied categorization of sources and coverage of TL.

Finally the author concludes that the transnational law is a challenge to state-centered concept of international law, but at the same time it provides for the new perspectives for the certain type of legal norms inside and outside the states. Hence a new legal reality is being established that regulates the relations between the subjects of international law and non-subject units, developic a new heterogenic system which is not completely national or international by its origins or character.

Still, the author reserves the idea that transnational law is yet not a new branch of law, but an approach suggested for the *international sector of law*.

Հարգելի հեղինակներ, Հանդեսին նյութեր հանձնելիս խնդրում ենք պահպանել հետևյալ պահանջները.

Խմբագրական խորհուրդը և խմբագրությունը կքննարկեն միայն այն նյութերը, որոնք կուղարկվեն էլեկտրոնային փոստով կամ խմբագրություն կներկայացվեն թղթային տարբերակով՝ էլեկտրոնային տարբերակի հետ միասին:

Հոդվածները՝ որպես կանոն առավելագույնը 25.000 տպագիր նիշ՝ ներառյալ տողատակերը:

Նյութերն ընդունվում են համապատասխան ԲՈՒՀ-երի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության, ինչպես նաև մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի անգլերեն վերնագիրը, համառոտագիրը, հեղինակի տվյալները:

Նյութերի ծավալը որոշելիս խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա, 1.5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները. ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերեն տեքստերինը՝ «Arial Armenian», ռուսերենինը՝ «Arial LatRus»:

Նորմատիվ ակտեր օգտագործելիս տեքստում պետք է նշել դրա տեսակը (Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր և այլն),

ընդունման ժամանակահատվածը (ընդունման օրը՝ թվերով, ամիսը՝ տառերով, ընդունման տարին՝ քառանիշ թվերով, օրինակ՝ 2003 թվականի դեկտեմբերի 12), չակերտներում նշել լրիվ (առանց կրճատումների) անվանումը (այդ թվում՝ ոչ թե ՀՀ, այլ Հայաստանի Հանրապետություն): Այս դեպքում տողատակում բավարար է նշել հրատարակության աղբյուրը:

Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Հեղինակներին խստիվ խորհուրդ է տրվում մինչև ուղարկելը մանրամասն ստուգել շարվածքի, ինչպես նաև համապատասխան իրավաբանական հասկացությունների ճշտությունը:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Օրինակ՝ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու ...:

Վերջին էջում հեղինակը պարտադիր դնում է իր ստորագրությունը, նշում կոնտակտային տվյալները: